

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Dr. W. Longfellow  
Zurpaulen

891.99

2-13

1924



6 NOV 2014

# ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՒ ՍԻՐԱՅԻՆ ՏՐԱՄԱ  
ԶՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՆԵՐՈՎ  
( The Triumph )  
( An Idealistic and Love Drama )

Հեղինակ  
Բ. Ա. ՉԱԳԻՅԱՆ

Տպարան «Պոլիգրաֆի» Պետրոզավադ  
1924

891.99  
2-13

ՅՈՒՆԻՍԿՈՒՆԻ  
2-13

48

# ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԵՒ ՍԻՐԱՅԻՆ ՏՐԱՄԱ  
ՉՈՐՍ ԱՐԱՐՈՒԱԾՆԵՐՈՎ

(ԱՌՆՈՒԱԾ ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԿԵԱՆՔԷՆ)

Տեղի կ'ունենայ Շիֆակոյի մէջ

Հեղինակ

Մ. Ա. ՉԱԳԻԿԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿ — ՆԵՐԿԱՅ

ԵՂԱՆԱԿ

Ա. Ե. Բ. Արարուածները — Չմեռ

Գ. Արարուածը — Գաբուն

Գ. Արարուածը — տարբ տարի յետոյ — Ամառ



3423-69

## ԵՐԿՈՒ ԽՕՄՔ

Հրատարակելով «Յաղթանակը», գեղարուեստական ու գաղափարական կարևոր գործ մը արտադրած ըլլալու յաւակնութիւնը ունենալէ շատ հեռի եմ:

Պէտքի մը՝ փոքր չափով գոհացում տալն է եղեր իմ միակ շարժառիթը, ուր փորձեր եմ հնարաւոր չափով մը, իմ գասակարգի շահոյն ծառայեցնել զայն:

Թէ՛ յաջողե՞ր եմ:

Թէ՛ կը ծառայե՞ր իր նպատակին:

Բայց այդ հարցերուն՝ պիտի պատասխանեն իմ ընթերցողները եւ զայն ներկայացնողները:

Բայց մինչ այդ՝ ես վարձատրուած կ'զգամ, համոզուած ըլլալով, որ իմ այս օրուան լաւագոյնն է, որ ձեզ կը հրամցնեմ:

Յարգանքներով

Մ. Ա. ՉԱԳԻԿԵԱՆ



«ՅԱՂԹԱՆԱԿԸ» ԻՆ ՀԵՂԻՆԱԿԸ

## Ջ Օ Ն

Պաշտելի՛ Մ'այրս

Քեզմէ բաժնուեցայ՝ ու ալ եւս բախտը չունեցայ քեզ տեսնելու :

Դու ֆպեցիր՝ ինձ անձանօթ տառապանքի մը նանապարհէն, եւ քու կամքէն անկախ, դու գրկեցիր զիս հողակոյտիդ տեղը իսկ՝ գիտնալու բախտաւորութենէս :

Այժմ չեմ իսկ գիտեր՝ թէ ո՞ւր, ո՞ւր կը հանգչի ձեր չարչրկուած մարմինը : Բայց որդիական ամենախոթ ակնածանքով մը, քեզի՛ քեզի կը նուիրեմ սա՛ անարժէք գործս, որպէս կոթող մը քո անձանօթ շիրիմին, որպէս ապացոյց մը իմ՝ Ձեզ հանդէպ ունեցած անսահման սիրոյն :

Վստահ եմ մայր, որ ձեր մայրական հոգին չի մերժեր զայն : Ձէ՞ որ մայրս էք :

Միայն քեզ պաշտող  
ՈՐԴԻԴ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

*socialist*

ԶԱԻԷՆ.— Համոզուած ընկերվարական մը 25 տարեկան :

ՆՈՒԱՐԳ.— Գորգավանառի մը սրամիտ աղջիկը , 19 տարեկան :

ՊՕՂՈՍ.— Գորգավանառի մը տղան , 29 տարեկան :

ԳԵՂԱՄ.— Զաւէնի ընկերը , գործաւոր մը , 26 տարեկան :

ՆԱԶԵՆԻ.— Գեղամի խօսեցեալը , մեծահարուստի մը որ-բացած աղջիկը , նորեկ մը , 21 տարեկան :

ԿԱՐԱՊԵՏ ՏԱՐԲԵՐԵԱՆ.— Նուարդի հայրը , հաստափոր գորգավանառ մը , 45 տարեկան , պէխաւոր :

ԹԱԳՈՒՀԻ ՏԱՐԲԵՐԵԱՆ.— Նուվարդի մայրը , գիրուկ , 39 տարեկան :

ՍՐԲՈՒՀԻ.— Տարբերեաններու աղախինը , 20 տարեկան :

ՄԻՍԱՔ ՆՄԱՆԵԱՆ.— Երկաքի գործաւոր մը , 42 տարեկան , նիհար եւ պէխաւոր :

ԷԼՄԱՍ ՆՄԱՆԵԱՆ.— Միսաքի կինը , 40 տարեկան , գործաւորուհի մը , նիհար , կրօնատէր մը ,

ՃԱՆ.— Տէր եւ Տիկ . նմանեաններու գաւակը , 21 տարեկան , շփացած աղեկ մը :

ՍԻՐԱՐԲԻ.— Տէր եւ Տիկ . նմանեաններու գաւակը , 14 տարեկան , ուշիմ աղջիկ մը :

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Գործաւոր մը , 35 տարեկան , կուսակցական մը , նիհար եւ պէխաւոր :

ՅԱԿՈՒԲ.— Մանուկեանի գաղափարակից ընկերը , գործաւոր մը , 30 տարեկան , պէխաւոր :

Տան տէր , կաքնավանառ , նպարավանառ , խանութպան , արուեստագէտներ , ժողովականներ , եւայլն :

*Triumph*  
ՅԱՂԹԱՆԱԿԸ

ԱՐԱՐՈՒԱԾ Ա .

ժամանակ — Ներկայ : Եղանակ — Չմեռ

ՏԵՍԻԼ Ա .

*stage*  
(Բեմը կը ներկայացնէ Շիֆաօ «Գամբուսի» մէջ , փոքր ժողովարահ մը : Բեմին վրայ կայ սեղան մը , քովը աթոռ մը , վրան գաւաթ մը , ջուրով լեցուած : Բեմի աջակողմը , շեղ կերպով շարուած են մի քանի տասնեակ աթոռներ , իսկ դրան մուտքին մօտ փոքր սեղան մը , վրան գանգան «պրօշրներ» եւ քերթերու տրճակներ : Սեղանին վրայ փոքր պնակ մը , մուտքի դրամ ձգելու , իսկ կողքին աթոռ մը : Յակոբ նստած աթոռին վրայ , քերթերն ու «պրօշրները» կը դասաւորէ : Բոլոր ժողովականները հացուած են ձմեռնային զգեստներ) :

*plump*  
ՅԱԿՈՒԲ.— (Յօրանջելով) *plump* Ի՞նչ պիտի ըլլայ , հայու դործ է , ժամը մէկը եղաւ , դեռ ոչ ոք չէ եկեր . . . Երբ թէ ժամը մէկին պիտի սկսէինք :

ԺՈՂՈՎԱԿԱՆՔ.— (Չորս ժողովականներ , ներս մըտնելով . կը մօտեան սեղանին , առաջին ժողովականը կը բարեւէ Յակոբը) . Բարեւ Յակոբ : (Միւս երեքը՝ հինգական սէնք ձգելով կը գնան , աթոռներ գրաւելով , իրարու կողքին կը նստին) :

ՅԱԿՈՒԲ.— Բարեւ . . . բարեւ Չալի :

Ա . ԺՈՂՈՎ.— Յակոբ՝ ամենէն լաւ դործը դուն ես առեր , (խնդարով) քեզի՞ խաչազո՞ղ , (կատակելով) :

ՅԱԿՈՒԲ.— Անշուշտ՝ անշուշտ , չե՞ս գիտեր , որ ջր-տաներորդ դարուն , առանց դրամի տերեւ մը իսկ չէ շարժիր :

Ա . ԺՈՂՈՎ.— Բայց՝ դուք ընկերվարականներդ դըրամի չէք հաւատար , չէ՞ :

ՅԱԿՈՒԲ.— Բայց դեռ ընկերվարութիւնը չէ եկեր , չէ՞ :

Ա. ԺՈՂՈՎ. — Դու ալ իրաւունք ունիս Յակոր: (Կը գնայ եւ կը նստի իր ընկերներուն հով):

Բ. ԺՈՂՈՎ. — (Դառնալով իր ընկերներուն), *Ես չի ըսի ձեզի, որ դեռ շատ կանուխ է, կրնայինք ձեռք մը եւս դարձնել:*

Գ. ԺՈՂՈՎ. — (Կատակելով). *Սայտառակնէ՛ր, տեսաք որ փինէֆիլի երեք հարիւրը բռնած եմ, անմիջապէս ձգեցիք:*

Դ. ԺՈՂՈՎ. — Ուէլ, քիչ մըն ալ հոս թող սպասենք, ի՞նչ կ'ըլլայ, սրճարանի ծուխին, փոշիին մէջ ասիկ լա՞ւ էր:

ԺՈՂՈՎԱԿ. — (Ներս կը մտնեն, Տէր եւ Տիկին նմանեաներ եւ իրենց գաւակները, ձան եւ Սիրարբի: Պր. Նըմանեան գրպանէն դրամ հանելու գրադած, միւսները կը գնան մինչեւ բեմի աջակողմը եւ առաջին նստարաններէն գրաւելով, վերարկունին կը հանեն: Նմանեան դրամ մը ձգելով պնակին մէջ, կը գնայ եւ չորսն ալ կը նստին, իրենց վերարկուները դնելով հինգերորդ աթոռի մը վրայ):

ՍԻՐԱՐԲԻ. — Մա՛ւ ե՞րբ պիտի սկսին:

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Հիմա կ'սկսին աղջիկս, ի՞նչ կ'աճապարես:

ՍԻՐԱՐԲԻ. — Հա՛ւ բայց տեսնենք ի՞նչ պիտի խօսի Պր. Զաւէնը:

ՃԱՆ. — (Քրոջը դառնալով նեղացած) *Ի՞նչ պիտի խօսի, կարծես երբեք չես լսեր... ամէն օր միեւնոյն բանը, չե՞ս դիտեր... բանուր, գիւղացի, պրոլետար, դասակարգային գիտակցութիւն, դասակարգային շահ, դասակարգային կռիւ, մոխ... ասա՛ւ ամբողջը... չե՞ս կշտացեր:*

ՏԻԿ. ՆՄԱՆ. — (Նեղացած) *Այ ինչո՞ւ եկեր ես ձան, քանի որ գիտես թէ ինչ պիտի խօսուի:*

ՃԱՆ. — (Նեղացած) *Օհ՛՛ մայրիկ, կը խորհիս թէ Զաւէնը մտիկ ընե՞լ եմ եկեր... շատ կը սխալիս:*

ՍԻՐԱՐԲԻ. — Մա՛ւ ես գիտեմ, ինչո՞ւ եկեր է եղբայրը:

ՏԻԿ. ՆՄԱՆ. — *Ի՞նչը գիտես՝ աղջիկս:*  
ՍԻՐԱՐԲԻ. — *Եղբայրը եկեր է, որ Սրբուհին տեսնէ, չէ՛:*

ՏԻԿ. ՆՄԱՆ. — (Բարկացած) *Սո՛ւս քեզի չի իյնար այդ կարգի ակնարկութիւններ ընել:*

ՍԻՐԱՐԲԻ. — (Նեղացած, շուտ մը գրպանէն թուղթ մը հանելով կ'սկսի սերտել):

ՃԱՆ. — (Մօրը դառնալով) *Ի՞նչ պիտի ըլլայ, երեսուտամ աղջիկդ ալ՝ այդքան կ'ըլլայ:*

ՊՐ. ՆՄԱՆ. — (Սաստելով) *Լուեցէք պէ... ձեզ մտիկ պիտի ընենք:*

ԺՈՂՈՎԱԿՆԲ. — (Խառն ի խառն ներս կը մտնեն ժողովականներ. յետոյ Տէր եւ Տիկին Տարբերեանները, հագուած փարթամօրէն: Բացի Տիկ. Տարբերեանէն, միւսները բոլորն ալ իրենց կարգին դրամ ձգելով, կը գնան եւ կը նստին, անոնց կը յաջորդեն ուրիշներ):

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Ներս մտնելով) *Բարեւ՝ ընկ. Յակոր:*

ՅԱԿՈՒԲ. — *Բարեւ, բարեւ ընկ. Մանուկեան, ինչո՞ւ այսքան ուշացաք:*

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Սեղանին վրայ դրամ ձգելով) *Այդքան ալ ուշ չէ, ընկ. Յակոր... Զաւէնը չէ՞ եկեր դեռ:*

ՅԱԿՈՒԲ. — *Ո՛չ, բայց անշուշտ հիմա կուգայ:*

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — *Լա՛ւ լաւ:* (Կը գնայ բեմը, աթոռին վրայ նստելով, թուղթ մը կը հանէ գրպանէն, կարդալով, երբեմն ալ մէկը որոնող ձեւերով ժողովականներուն կը նայի):

ԳԵՂԱՄ. — (Ներս կը մտնեն Գեղամ եւ Նագենի. Գեղամ դրամ ձգելով սեղանին վրայ) *Ընկ. Յակոր ս՞րբան լաւ կ'ըլլար (մատնանիչ ընելով) եթէ սա պրօշրները բոլորն ալ հայերէնի թարգմանուած ըլլային, մեր ժողովուրդի մեծագոյն մասը, դեռ եւս անգլիերէն լեզուին անձանօթ է, իսկ կարդալու եւ սորվելու շատ պէտքն ունի: (Նագենիի թելէն բռնելով) Գնանք Նագենի, մի գուցէ տեղ չի մնար մեզ, արդէն ժողովարարհը շատ փոքր է: (Կը*

գնան եւ բեմի ճախակողմը, երկրորդ կարգին վրայ կը նստին) :

ԺՈՂՈՎԱԿԱՆՔ. — (Ներս կը մտնեն չորս երիտասարդներ, դրամ ձգելէ յետոյ, կը գնան եւ բեմի ճախակողմը առաջին աթոռները գրաւելով, կը նստին եւ գրքւաննուն մէկ մէկ կտոր թուղթ հանած կը սերտեն) :

ԺՈՂՈՎԱԿԱՆՔ. — (Ներս կը մտնեն ուրիշներ, աթոռները կը լեցունին) :

ՆՈՒԱՐԳ. — (Ներս մտնելով Սրբուհիի հետ, փնտտող աչքերով կը դիտէ ժողովականները, յետոյ գլխով եւ ժրպիտով բարեւելով իր ծնողքը, կը գնայ եւ կը նստի Նագեհիի կողքին, Սրբուհի՝ կը հետեւի իրեն, անոր կողքին աթոռ մը գրաւելով) :

ԺՈՂՈՎԱԿ. — (Նուարդի կը նային ումանք գարմացական արտայայտութիւններով) :

ԶԱԻԷՆ. — (Ներս մտնելով, անգամ մը ժողովականներուն կը նայի, յետոյ դրամ ձգելով) *Ընկ. Յակոբ, բաւական ժողովուրդ եկեր է, չէ՛ :*

ՅԱԿՈՒՅ. — *Բայց՝ սրահը շատ փոքր է ընկ. Զաւէն :*

ԶԱԻԷՆ. — *Այս ալ կը բաւէ :* (Կը գնայ, աթոռ մը գրաւելով կը նստի) :

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Զաւէնի գալը նշմարելով, ոտքի կը կանգնի, եւ ժողովը բանալու անհամբեր ձեւեր մը կ'ընէ, յետոյ ձեռքի թուղթին վրայ կը նայի, գայլի վար դնելով, կը դառնայ ժողովականներուն) *Շիրակոյցի հայրենակիցներս, ես բոլորովին աւելորդ կը համարեմ յայտնելու, թէ այս ժողովը որո՞ւ կողմէ կը սարքուի : Մեր յայտարարութիւններէն ձեզ ծանօթ է, որ այս ժողովը սարքուած է Ամերիկայի Բանտրական կուսակցութեան, այսինքն՝ «Թիք Ֆետրերթոյ Սօսիլիսք փարթի աֆ Ամերիգա», հայկական ֆետրերթի կողմէն, որ կազմուած է նախկին Հնչակեաններէ, բանտորականներէ իրենց հետ ունենալով բոլոր հայ արժատական տարրերը :*

*Ես մեր մասնաձիւղի կողմէն, պարտք կ'զգամ, ի պատիւ Շիրակոյցի հայ հասարակութեան, յայտնելու իմ*

*խորին խնդակցութիւնս, որ այսօր այսքան խուռն բազմութեամբ եկած էք լսելու մեր օրուան ատենախօսը, որուն դուք բոլորդ ալ, շատ մօտէն ծանօթ էք :*

*Իսկապէս՝ որ հայ հասարակութիւնը զեռ շատ պէտք ունի լսելու ընկերվարական ուղղութեամբ, եւ ես պատիւ ունիմ յայտնելու նաեւ, որ մեր մասնաձիւղը ամենայն սրատրաստակամութեամբ, այդ մեծ պէտքին ընդատաջել որոշած է :*

*Հայրենակիցներ՝ այժմ այս ժողովը բացուած կը յայտարարեմ, հրաւիրելով մեր երգեցիկ խումբը, որ մեզ երգէ «Միանանք բանտրներ»ը : (Կը նստի) :*

ԵՐԳ. ԵՆՈՒՄԲ. — (Չորս ընկերներ, որոնք գրաւած էին բեմի ճախակողմը, կ'սկսին երգել) :

Միանանք բանտրներ... (երկու տուն) :

ԺՈՂՈՎԱԿ. — (Երգը լրանալուն կը ծափեն) :

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Ոտքի կանգնելով) *Մեր երգեցիկ խումբի երգէն յետոյ, համաձայն մեր յայտագրին, այժմ պիտի հրաւիրեմ քաղաքիս էն ուշիմ օրիորդներէն, փոքրիկ Սիրարբի Նմանեանը : Օրիորդը մեզ պիտի արտասանէ մեր անդուզական ընկերվարական բանաստեղծուհի՝ Շուշանիկ Կիւրղինեանի «Այդ մենք ենք զայիս»ը, ուրեմն կը հրաւիրենք զինքը : (Կը նստի) :*

ՍԻՐԱՐԲԻ. — (Ոտքի կը կանգնի, բեմ կը յառաջանայ) :

ԺՈՂՈՎ. — (Բուռն կերպով կը ծափեն) :

ՍԻՐԱՐԲԻ. — (Մի քիչ կանգ կ'առնէ, յետոյ ժողովուրդին կը նայի) *«Այդ մենք ենք զայիս», (մինչեւ վերջը) :* (Արտասանութիւնը վերջացնելուն խոնարհութիւն ընելով, կը նստի, գրովսը մօրը կուրծքին երկարելով) :

ԺՈՂՈՎ. — (Բուռն եւ երկարօրէն կը ծափեն) :

ՍԻՐԱՐԲԻ. — (Ոտքի կը կանգնի, ու խոր կերպով խոնարհելով, կրկին կը նստի) :

ՏԻԿ. ՆՄԱՆ. — (Աղջիկը գգուելով) *Ապրի՛ս աղջիկս :*

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Ոտքի կանգնելով) *Օր. Սիրարբի՛ իր ընտրած զաղափարական կտորով ցոյց տուաւ իր այդ*

զմայլելի ձիրքով, հիանալի առողանութեամբ եւ զգայուն սրտով, արժէք ներկայացնող մէկը կը դառնայ վազը: Նա՛ իր նմաններէն ոչ ոքին երկրորդ կ'ըլլայ, եթէ ներկայ պուրժուական կարգերը կործանին եւ անոնց յաջորդեն ընկերվարական կարգերը, որպէս զի պատեհութիւն ըլլայ բոլորին, անխորթէն ազատ ազրելու եւ ազատ զարգանալու: (Սիրարբիի դառնալով) Կը շնորհաւորենք ձեզ օրիորդ: (Յետոյ դառնալով ժողովականներուն) Քաղաքացիներ, անցնելով մեր յայտազրի վերջի մասին, քիչ յետոյ խօսելու պիտի հրաւիրեմ մեր կուսակցութեան սիրուած, աշխատող եւ եռանդուն դործողներէն ընկեր Չաւէնը: Ես՝ զինքը ձեզ ծանօթացնելու սեւէ փորձ չեմ ընել, մասա՛ ըլլալով, որ մեր ընկերը ձեզ այնքան ծանօթ է, որքան մեզ: Այսքան մը միայն յայտնեմ, որ մեր ընկերը վերջերս նոր վերադարձած ըլլալով Հայաստանէն, ի միջի այլոց ձեզ պիտի տայ նաեւ ամենալրատահելի տեղեկութիւնները, Հայաստանի ներկայ վիճակին, զայն կառավարող կուսակցութեան եւ այժմ՝ հոն տիրապետող կարգերու մասին: Մասնաւորապէս կը խնդրեմ ներկաներէզ, որ ուշի ուշով հետեւիք իր խօսածներուն, եւ եթէ ընկերոջ արտայայտած մտքերուն տարակարծիք եզոզներ ըլլան մէջերնիզ, այդպիսիներուն ժողովը լրանալէն յետոյ, ժամանակ պիտի տրուի հարցումներ ուղղելու, որոնց բոլորին մեր ընկերը պիտի պատասխանէ ամենայն պատրաստակամութեամբ: (Չաւէնի դառնալով) Հրամեցէք, ընկեր Չաւէն: (Կը նստի):

ԶԱԻԿՆ.— (Արագ եւ ձեռքերը նմուխով բեմ ելլելով, նախ կամաց մը մի բան կ'ըսէ Մանուկեանի, յետոյ մի քիչ քուր խմելով եւ ժողովուրդին դառնալով) Ընկերներ, ընկեր ատենապետի իմ անձին շայտած գովասանքներուն անձնապէս արժանի չըլլալով, ես կը հաւատամ որ այդ ամբողջը կը պատկանէին ոչ թէ ինձ՝ այլ այն մեծ զաղափարականին, որուն հեղինակը, ինքը՝ բանւոր մասսան է, եւ որուն առաջնորդները, մեր մեծ ուսուցիչները Բարլ Մարքս եւ Լինիններն են:

Այժմ ես կ'անցնիմ, իմ խօսիլ մտաւրած նիւթին եւ տալիք տեղեկութիւններու:

Ընկերներ, բովանդակ մարդկային ընկերութիւնը, համաշխարհային պրոլետարական մեծ յեղափոխութեան մը նախօրեակին կը գտնուի: Ամենուրեք՝ երկրագունտի ամէն մէկ կէտին վրայ, սկսեալ Անգլիական մեծ կայսրութենէն մինչեւ մենէ շատերուն անձանօթ Քօրիան, սկսեալ Միացեալ Նահանգներէն մինչեւ Սիամն ու Անամը, այժմ բանւորական վերագարթնութի, դասակարգային զիտակցութեան, դասակարգային կռիւի ասեղ շեփորն է, որ կը հնչեցուի:

Ներկայ պուրժուական կարգերու պաշտպան ազնուապետական եւ դրամատիրական տարրերը, աս ու սարսափի են մասնուած այսօր: Երէկուան նորածին ընկերվարական վարդապետութիւնը ծաղրող պուրժուազին, այժմ կ'զգայ, որ մեծ վտանգի մը դէմ յանդիման կը գտնուի, եւ այդ իսկ պատճառով ալ, համաշխարհային պուրժուազին բոլոր ճակատներուն վրայ ալ, միացուցած է իր մեծ ու փոքր ուժերը, եւ կը պատրաստուի պրոլետարական յեղափոխութիւնը իր սաղմին մէջ իսկ խեղդելու: Բայց նա չի յաջողիր:

ԺՈՂՈՎ.— (Մալիք):

ԶԱԻԿՆ.— (Շար.) Ընկերներ, պուրժուազիի լեքէները, բսել կ'ուզեմ պնակալէզները, յանձին պուրժուա մտաւորականութեան, տեսնելով նորաստեղծ կացութիւնը, կուսակցով վերահաս վտանգը, Անիքալեան ասպանող մըն է որ կը հնչեցնեն ամէն կողմ, թերազրելով պուրժուական կառավարութեանց որ ամէն ուժ, ամէն հաստատութիւն, օրինական թէ ստորերկրեայ, շարժման մէջ դրուի, բանւորական ապստամբութիւնը ճգմելու համար: Բայց ընկերներ, ես հոս վստահարար կը յայտարարեմ, եւ մասուանդ՝ միացեալ Եւրոպայի Ռուսական սահմաններէն գլխիկոր եւ քաջուելէն յետոյ, անոնց բոլոր սաղբանքները ի դերեւ պիտի ելլեն, որքան ատեն որ պրոլետարական յեղափոխութեան յառաջապահ գունդը

յանձին մեծագոյն Սօվիետական Ռուսիոյ . կանգուն է :

ԺՈՂՈՎ .— (Բուռն ծափեր) :

ՁԱԻԷՆ .— (Շար .) Ընկերներ՛ր, ես ողևորուած ձեր ծափերէն, ինձ թոյլ կուտամ յայտարարելու նաև որ միջազգային մեծ սպանդէն յետոյ, 1917ի Ռուսական պրօլետարական մեծ յեղափոխութիւնը եւ անոր յաջորդող բանուորական դիկտատօրիան արդէն իսկ փորեց, պատրաստեց միջազգային պուրժուազիի գերեզմանը :

ԺՈՂՈՎ .— (Ծափեր) :

ՁԱԻԷՆ .— (Շար .) Թէև ճիշտ է, դեռ եւս մեռած չէ պուրժուազին, դեռ եւս թաղուած չէ նա, բայց նոյնքան եւ ճիշտ է, որ նա մահամերձ է, որուն թաղումը պիտի կատարեն Գերման-Ամերիկեան, Անգլ-Ֆրանսական յեղափոխական բանուորները :

ԺՈՂՈՎ .— (Բուռն եւ երկարատեւ ծափեր) :

ՁԱԻԷՆ .— (Շար .) Բայց մինչ այդ, ընկերներ՛ր, մեր առջև դորձ կայ, մեծ ու դժուարին դորձ, որուն պէտք է լծուի մէն մի բանուոր, հող չէ թէ աշխարհի ո՛ր ծայրը կը գտնուի, հող չէ թէ ի՞նչ ազգութեան, ո՞ր յարանուանութեան կը պատկանի :

Մեր մեծագոյն եւ դժուարին դորձը, ընկերներ, այժմ մէկ ճակատ հարթելու դորձն է : Այսօր մեր կուսակցութիւնը, իր վերջին ճիգը թափելով իր մէջ ձուլած է, իրեն միացուցած է, այս երկրի բոլոր արժատական տարրերը, ինչպիսին են S. P. — S. L. P. — I. W. W. — L. P. — P. P. — W. P. եւ բոլոր բանուորական կազմակերպութիւնները — եռնիքները :

Օ՛ն ուրեմն ընկերներ, դուք բոլորդ ալ դորձաւորներ էք, դուք բոլորդ ալ մէկ գասակարգի — դորձաւոր դասակարգին — կը պատկանէք, դուք բոլորդ ալ միեւնոյն շահերը ունիք, եւ դուք բոլորդ ալ շուտով սկսուելիք պրոլետարական ապստամբութեան, բանուորական յեղափոխութեան մաս պիտի կազմէք : Ահա՛ այս է ձեր ընելիքը :

Մեր կոիւր, ընկերներ, հոս՝ այս երկրին մէջ է, ուր

կը շահագործուինք, ուր կը տառապինք : Այո՛ հոս՝ եւ այս երկրին մէջ, իւրաքանչիւր հայ գործաւոր, պէտք է կանգնի, մեզ նման հարստահարուածներու կողքին, այդպէսով մէկ ճակատ մը, մեծ ուժ մը կազմելու եւ միացեալ կերպով իջեցնելու մեր վերջին լախտը, մեր թշնամիին գլխուն :

ԺՈՂՈՎ .— (Ծափեր) :

ՁԱԻԷՆ .— (Շար .) Ընկերներ, մեր կուսակցութիւնը շուտով դուրս պիտի բերէ իր մարտահրաւէր կարմիր կոշը, ձեզ բոլորդ ալ հրաւիրելով իր կարմիր դրօշակին տակ : Եւ ես վստահ եմ, որ դուք բոլորդ ալ կազմ ու պատրաստ, պիտի լսէք անոր, պիտի հետեւիք անոր, մինչեւ վերջնական յաղթանակը, որ այնքան ալ հեռի չէ :

ԺՈՂՈՎ .— (Բուռն ծափեր) :

ՁԱԻԷՆ .— (Շար .) Ընկերներ, ես իմ նիւթի այս առաջին մասը լրացուցած համարելով, այժմ կ'անցնիմ իմ ձեզ տալիք տեղեկութեանց :

Գիտեմ, որ բոլորդ ալ բուն հետաքրքրութեամբ մը եւ անհամբերօրէն կ'սպասէք իմ ձեզ տալիք տեղեկութեանց : Ձեր այդ հետաքրքրութիւնը եւ կը գտնեմ շատ բնական, որովհետեւ ձենէ իւրաքանչիւրն ալ, որպէս այս երկիրը նոր եկուորներ, հոն Հայաստանի մէջ ունիք ազգականներ, բարեկամներ, ծանօթներ, ու ձեզ նման ու ձեզի մօտէն ծանօթ գործաւորներ, որոնք լուազոյն պատճառներ են որ ձեզ կը հարկազրկեն հետաքրքրուելի ներկայ Հայաստանի քաղաքական, տնտեսական, ընկերային վիճակով : Ես գիտակ եմ ընկերներ, որ իմ ատենախօսութեան այս սահմանափակ եւ կարճ միջոցին մէջ, ինձ համար գրեթէ անկարելի է, որ կարենամ ձեր բուն հետաքրքրութեան լրիւ գոհացում տալ, բայց ինչ որ ես ի վիճակի եմ ընել, հոս այս ժողովին մէջ, մի շատ հակիրճ տեսութիւն պիտի ըլլայ Հայաստանի մասին :

Ընկերներ, Հայաստանի կառավարութիւնը այժմ կը գտնուի Հայաստանի Քօմունիստ կուսակցութեան ձեռքին, իսկ Հայ Քօմունիստ կուսակցութիւնը, ո՛չ միայն

իր մէջ կը խտացնէ Հայ բանւորը, Հայ գիւղացին, այլ ի յայտ բերած է այնպիսի ձեռնհաս առաջնորդներ յանձին ընկերներ Միասնիկեանի, Կասեանի, Լուկաշինի, Մուսեանի, Աւեսի եւ ուրիշներու (Ծանօթ. — Հոս պէտք է միշտ թուել միայն Հայ կառավարութիւնը վարողներու անունները) Որոնք անխոնջ կերպով կ'աշխատին Հայ գործաւորին, Հայ գիւղացիին վիճակը բարելաւելու: Իսկ Հայ կառավարութեան ձեւը ընկերներ, Սօվիետական է, խորհուրդներու «սիստեմը», որոնք կ'ընտրուին միայն գործաւորներու եւ գիւղացիներու քուէներով: Հոն՝ Հայաստանի մէջ ընկերներ, այն ով որ չի աշխատիր, նա չի ալ կարող քուէարկել, այնպէս որ Հայաստանի սօվիետները միայն աշխատաւորներու ներկայացուցիչներով կազմուած են: Պուրժուազին հոն ներկայացուցիչ չունի, եւ չի պիտի ունենայ:

ԺՈՂՈՎ. — (Բուռն ծափեր):

ԶԱԻԷՆ. — (Շար.) Ընկերներ, այժմ ես կ'անցնիմ Հայաստանի տնտեսական վիճակին: Ճիշտ է ընկերներ, որ գեռ եւս Հայաստանի տնտեսական վիճակը այնքան ալ միեմթարական չէ, բայց ի՞նչպէս կարող էր ուրիշ կերպ ըլլալ, երբ Հայաստանը, ամբողջ 4—5 տարիներ ահուկի կոիւներու թատերաօրէն դարձաւ, ու այդ աւերումներուն անմիջապէս յաջորդեց ներքին կոիւներ աւանդիւրիսք դաշնակցականներու կողմէն: Բայց այժմ արդէն սկսած է լաւանալ, Հայաստանի երկրագործութեան ֆօմիսէր ընկեր երդինկեան, իր գերագոյնը կ'ընէ որպէս զի Հայաստանի մէջ մի թիզ հողը մշակուի, որպէս զի Հայաստանի արդիւնաբերութիւնը աւելնայ, որպէս զի ամէն ոք գէթ հաց ունենայ ուտելու:

ԺՈՂՈՎ. — (Ծափեր):

ԶԱԻԷՆ. — (Շար.) Անդրադառնալով Հայաստանի ապահովութեան մասին, պէտք է ըսել, որ այժմ Հայաստան ամենաապահով երկիրներէն մին է: Հոն՝ այժմ ոչ թրքական արշաւանքի վախ կայ եւ ոչ ալ թաթարական կոիւներու: Հայաստանը ուրիշներէ կոխտուելու վախը

միանգամ ընդ միշտ փարատուած է, շնորհիւ պրոլետարական մեծ Ռուսաստանին, որ իր վրայ վերցուցած է Հայաստանի ապահովութեան ծանր հողը: Հոս պէտք է յայտնել նաեւ, որ Հայ վարիչներն ալ շատ զովելի կերպով իրենց հարեւաններու հետ խօսելու լեզու մը գտած են, եւ այսպէսով Հայաստան այսօր շատ ապահով վիճակ մը ունի:

ԺՈՂՈՎ. — (Ծափեր):

ԶԱԻԷՆ. — (Շար.) Իսկ իստիլ Հայաստանի ընկերական սօցիալական վիճակի մասին, այդ իսկապէս որ դժուարին գործ մըն է, հոն այնպիսի նորութիւններ գոյութիւն ստացած են, որոնք մի առ մի հոս թուել, այդ օրերու գործ է, իսկ իմ ժամանակս ալ լրանալու մօտ է, սերեմն ընկերներ, ես անոնցմէ միայն մի քանին պիտի թուեմ եւ փակեմ:

Ընկերներ, այժմ հոն Հայաստանի մէջ, հին կարգերը յիշեցնող երեւոյթներ չեն մնացած, նա բոլորովին ընկերավարականացած երկիր մըն է դարձեր: Հոն սեփականութիւնը ջնջուած է, ջնջուած է նաեւ օրավարձքով աշխատութիւնը: Ազատ աշխատութեան իրաւունքի սիստեմը կերպարուած է հոն: Գործաւորի վաղուան անստուգութիւնը վերջ գտած է: Դատակարգերը ջնջուած են հոն, միայն մէկ դատակարգ գոյութիւն ունի. — աշխատաւորներու դատակարգը: Հոն ուսումը պարտադիր դարձած է մինչեւ 20 տարեկաններու համար: Հոն ծերացածները չեն գործեր, անոնք որոնք 50 տարին լրացուցած են, այդպիսիները կը հանգչին միայն: Հոն միայն աշխատելու ընդունակները կ'աշխատին արտադրելու համար, հիւանդը ու անկարողը ազատ է աշխատութենէն: Ուրիշ խօսքով, հոն ամէն ոք իր կարողութեան չափով կ'աշխատի եւ իր պէտքերուն համեմատ կ'սպասէ:

ԺՈՂՈՎ. — (Բուռն եւ երկարատեւ ծափեր):

ԶԱԻԷՆ. — (Շար.) Ընկերներ, ես վերջացուցած ըլլալով նաեւ իմ տեղեկատուութիւնը, կը վերջացնեմ նաեւ իմ բանախօսութիւնը, մի վերջին անգամ եւս կոչ ընելով



Հայ բանուր հասարակութեան, որ կազմ ու պատրաստ ըլլայ, որպէս մի զինուորը պրօլետարական մեծ բանակին: Որովհետեւ հորիզոնը արդէն մթապնած է, սեւ ամպերը կուտակուել են ու տեղատարափը այնքան ալ հեռի չէ մեզմէ: Եւ այդ օրերուն ընկերներ, ամէն ոք, ամէն հայ գործաւոր, իր վերջին ճիգը պիտի թափէ, իր արեան վերջին կաթիլը պիտի տայ մինչեւ որ յաղթականօրէն հասնինք, մեր երազած կատարեալ ազատութեան:

Ուրեմն կեցցէ՛ Հայ բանուրը եւ կեցցէ՛ բանուրական յեղափոխութիւնը: (Բեմէն վար իջնելով, կը նստի նուար դի առջեւ եղող նստարանին վրայ եւ քրտինքը կը սրբէ):

ԺՈՂՈՎ. — (Բուռն եւ երկարատես ծափեր): (\* )

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Ոտքի կանգնելով) Քաղաքացիներ, մեր պերճախօս ընկերոջ իմաստալից բանախօսութեան վրայ, ես բառ մը իսկ չեմ կարող աւելացնել: Ես պարտաւորուած, ինչպէս կանխաւ յայտարարեցի, այժմ ժամանակ կուտամ բոլոր անոնց, որոնք հարցումներ ունին տալիք, պայմանաւ որ հարցումները ըլլան ընկերոջ խօսածներուն յարակից: (Կը նստի եւ ուշի ուշով ժողովականներուն կը նայի):

ԺՈՂՈՎ. — (Երկար եւ խոր լուսբիւն. յետոյ Ա. Ժողովականը իր ձեռքը կը վերցնէ):

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Անոր նայելով) Հրամեցէք պարսն:

Ա. ԺՈՂՈՎ. — Ես, ես համաձայն եմ Պր. ատենախօսի յայտնած շատ մը մտքերուն, բայց մէկ բան ինձ մութ մնաց եւ կ'ուզեմ հասկնալ: Թէ ի՞նչպէս նիւթական հաւասար վարձատրութիւն պիտի ստանան, իիչ բան չի գիտցող գործաւորները եւ տարիներով դպրոց գնացած, գլուխ մաշեցուցած բժիշկները, փաստարանները, երկրաչափները, արուեստագէտները, վերջապէս խելօքները: (Կը նստի):

(\*) ԾԱՆ. — (Ժողովին այս յետագայ մասը գրուած է միայն կարդացուելու համար, ներկայացման պարագային կարելի է զանց առնել)

ԶԱՒԻՆ. — (Բեմ ելլելով) Ընկեր, ձեր այդ հարցը մի րնդհանուր դոյն ունի, այնպէս որ, գրեթէ ամէն ոք այդ հարցը տուած է ընկերավարականներուս, որուն համար ալ ես այդ հարցին պիտի պատասխանեմ բոլորիդ հասկնալի օրինակով մը: Անշուշտ քեզ ծանօթ է ընկեր, որ այսօր մեր քաղաքական գործերը կարգադրելու համար ընդունած ենք քուէարկելու սովորութիւնը: Չեզ ծանօթ է նոյնպէս, որ ամէն ոք, տղէտ թէ գիտուն, բանուր թէ գործատէր, արրեցող-աւագակ թէ բժիշկ-օրէնագէտ, առանց տարրերութեան, բոլորն ալ մէկ եւ հաւասար քուէի մը իրատունքը ունին, մինչդեռ տարիներ առաջ ժողովուրդը բուէի իրատունք չունէր, այլ միայն թագաւորներն էին որ քմահաճօրէն օրէնքներ կը շինէին եւ կը պարտադրէին ժողովուրդին: Իսկ ժողովուրդը կը խորհէր թէ ըլլալի՞ր միակ կերպը այդ է: Յետոյ փոխուեցաւ, ու այս անգամ ալ քուէարկելու իրատունք ունեցան միայն անոնք՝ որոնք կալուածատէր էին, միայն կալուածատէրը իրատունք ունէր օրէնք շինելու: Իսկ ժողովուրդը, ճիշտ քեզի նման, կը մտածէր թէ ուրիշ կերպ ալ չըլլար: Եւ նոյն իսկ մեր օրերէն, դուն գիտես որ մի քանի տարիներ առաջ կինը քուէ չունէր, եւ թերեւս դու ինքք ալ մէկն էիր անոնցմէ, որոնք կ'ըսէին թէ «կինը չի կրնար քուէարկել, անոր գործը խոհանոցն է», չէ՞: Իսկ այսօր, անոնք կը քուէարկեն, իսկ դուն բերանդ գոցեր նստեր ես, չես կարող իսկ բողոքել: Եւ այսպէս՝ այսօր գիտունն ալ, բժիշկն ալ, օրէնագէտն ալ, մէկ քուէ ունին, որոնք կարող են յաւասպէս գործածել. իսկ անդին տղէտ բանուորն ալ, արուեցողն ալ, աւագակն ալ, մէկ քուէ ունին, որոնք ո՞վ գիտէ մի գուցէ մէկ գաւաթ գարնջուրի, մէկ հատ ծխախոտի ի գին կը ծախեն իրենց քուէն. բայց այդ՝ այդպէս բոլարով մէկատեղ, մենք երբեք չենք փորձեր այս վերջիններէն իրենց քուէն առնել եւ առաջիններուն տալ, կամ գիտուններուն 10—20 քուէի իրատունք չենք տար ու տրդէտները քուէէ զրկել, որովհետեւ մենք բոլորս ալ համոզուած են որ գիտունն ալ, տղէտն ալ, վերջապէս մարդ

են եւ իրաւունք ունին հաւասար քուէի: Այժմ դառնանք ձեր հարցին: Հիմա պահ մը ենթադրենք որ այդ հաւասար քուէին պէս հաւասար վարձատրութիւն ընենք բոլորին անխտիբ, գիտուն թէ ազէտ, արբեցող-աւազակ թէ փաստարան-բժիշկ: Ճիշտ է որ առաջին տարիներուն շատ տարօրինակ պիտի թուի մեզ բոլորիս ալ, բայց տասնեակ մը տարիներ յետոյ, մենք բոլորս ալ, դուն ալ, պիտի ընդունինք որ այդ կերպը շատ արդար է եւ շատ բնական: Չէ՞ որ մենք բոլորս ալ մարդ ենք եւ վերջապէս կարիքներ ունինք ապրելու: Ո՛չ, ո՛չ, ընկերս, մարդիկ հաւասար են ծներ եւ եթէ հաւասար պատենութիւններ ունենան, անոնք բոլորն ալ մի քիչ աւելի կամ պակաս խելօք մարդիկներ կ'ըլլան, որովհետեւ այսօրուան գիտունին եւ աղէտին տարբերութիւնը հոն է, որ այս վերջինը մի քանի տարի դպրոց չէ դացեր, կամ առաջինը A—5 տարի ուսաներ է, չէ՞:

Իսկ անկէ յետոյ ալ եթէ իսկապէս հանճարներ, տաղանդներ ծնին (որուն եւ չեմ հաւատար), այն ատեն ամօթ մը, մեծ ամօթ պիտի ըլլայ, որ այդ մեծ մարդիկը իրենց համար վարձատրութիւն սպասեն եւ այն ալ դրամով: Չէ՞ մի որ այդպիսիները արդէն իսկ վարձատրուած պէտք է գգան, երբ իրենք կ'ունենան ձեր բոլորին յարգանքն ու հիացումը: Ընկերս, պէտք է արուեստը արուեստին համար եւ գիտութիւնը կատարելութեան համար ըլլայ եւ ոչ թէ դրամին: Այո՛, ընկերս, մենք բոլորս ալ մարդ ենք, հաւասար պէտքերով եւ իրաւունքներով, եւ պէտք է ադատօրէն այս ապրինք այս արեւին տակ:

ԺՈՂՈՎ. — (Կը ծախեն):

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Կանգնելով) Ուրիշ հարցե՞ր: (Կը նստի):

Բ. ԺՈՂՈՎ. — (Ոտքի կանգնելով) Բայց ընկերվարութիւնը ընտանիքը կը քայքայէ կ'ըսեն:

ՁԱԽԷՆ. — (Գլուխը շարժելով) Կ'ըսեն՝ ու դեռ շատ բաներ կ'ըսեն մեր հարուստ հակառակորդները, բայց դժբախտարար, իմ այսօրուան նիւթը, մեր հակառակորդ-

ներուն ըսի բաւերուն պատասխանել չէր: Եւ ես կը պատասխանեմ ձեր այդ հարցին ալ ընկեր: Բայց նախ ըսեմ որ դու ինչո՞ւ դող ես ելեր, երբ դու ինքզ ընտանիք չունիս, քու ընտանիքը քայքայուած է, երբ դու ինքզ քառսուն տարեկան ես եղեր եւ դեռ չես ամուսնացեր: Բայց անցնինք ձեր հարցին: Ընկերս, նախ որ դեռ եւս ընկերվարութիւնը այս երկիրը չէ երկեր, որպէս զի դրականօրէն տեսնենք թէ ի՞նչ պիտի ըլլայ ընտանիքը, պիտի քայքայուի թէ պիտի շինուի: Բայց նախ քան ձեր հարցին պատասխանելս, ես ինքս ձեզ հարց պիտի տամ: Ընկեր, դու կարո՞ղ ես ինձ պատասխանել թէ ինչո՞ւ, որ քառսուն տարին լրացուցած կ'երեւիս, դու եւ քեզի նման հարիւր հազարաւոր հայ ամուրիներ չէք ամուսնացած, տուն տեղ չէք եղած, ընտանիք չէք կազմած: (ԼՈՒՍԻՍ...): Դուք չէք պատասխաներ... բայց ես ինքս կը պատասխանեմ, որովհետեւ ես գիտեմ, որ դուք բոլորդ ալ որպէս բանուորներ, հաղիւ հազ դուք ձեզ կը պահէք, այն ալ ամէն օր պայուսակնիդ ձեռքերնիդ այս քաղաքէն այն քաղաքը, միայն չոր հաց մը ձեռք ձգելու համար: Այո՛, դուք չէք ամուսնացեր, որովհետեւ ձեր վաղն իսկ անբարոյց է, ալ ուր մնաց որ ընտանիք կազմէք եւ կին պահէք. գիտեմ որ ճիշտ հիմա, ձեր մտքէն կ'անցնի թէ դուք հայ էք, գաղթական էք, լեզուին անձանօթ էք, երկիրը օտար է ձեզ, եւ ատոր համար ալ, դուք ընտանիք չէք կարող կազմել, չէ՞: Բայց ինչո՞ւ անգամ մը աչքդ չես դարձներ տեղացիներուն վրայ, ինչո՞ւ անոնց կազմած ընտանիքը չես գիտեր: Չորս կողմդ նայէ անգամ մը, տես թէ ընտանիք մնացե՞ր է: Ամուսինը իր կնոջէն պէտք է դատուի, մի ուրիշ քաղաք գործելու համար: Հայրը իր տղէն: Աղջիկը իր մօրէն: Այլը իր կնոջ հաւատարիմ չէ, կինը՝ իր ամուսնոյն: Փողոցները լիքն են ինքզինքներին ծախողներով, որոնք կարող էին լաւ մայրեր դառնալ: Այսօր ամուսնութիւններու թիւը աւելի նուազ է, քան ամուսնալուծողներունը: Դե ամուսնութիւնը, առեւտուր մըն է դարձեր, երբ զառամած հարուստը մանկա-

մարդ աղջիկ մը կ'առնէ, ծերացած պառաւը մանկամարդ աղայ մը: Ըսէ՛, ըսէ՛ տեսնեմ, հոս ընտանիք մնացե՞ր է: Բայց ոչ ընկերս, ընտանիքը արդէն իսկ քանդուած է այսօր, պուրժուազին դայն քանդեր է, այնպէս որ մեզ ընկերվարականներու քանդելու բան մը մնացած չէ, գէթ այդ մարդին մէջ մեզ աւերակ մը մնացած է, եւ մենք դայն պիտի շինենք:

Եւ ես չեմ խօսիր մեր շինելիքներու մասին, բայց այսքան մը յայտնեմ որ իմ այցելած բոլոր ընկերվարական երկիրներուն մէջ, ըլլայ Ռուսաստան, ըլլայ Վրաստան, ըլլայ Հայաստան, հոն ընտանիքը աւելի մաքուր է, աւելի հաստատուն հիմերու վրայ է, քան ուրիշ տեղ:

Եւ դեռ աւելին, հոն Հայաստանի մէջ ես մի հասա կին իսկ չի տեսայ որ իր մարմինը վաճառելով ապրէր:

ԺՈՂՈՎ. — (Բուռն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Ոտքի կանգնելով). Ուրիշ հարցեր չկա՞ն: (Կը նստի):

Գ. ԺՈՂՈՎ. — Պր. աստեախօս, դուք շատ անդամներ խօսած էք թէ գործաւորը հայրենիք չունի, իսկ այսօր ձեր բոլոր խօսածները Հայաստանի մասին էր: (Կը նստի):

ԶԱԻԷՆ. — Ծատ ճիշտ էք ընկերս, որ ես ու իմ ընկերները, շատ անդամներ յայտարարած ենք որ գործաւորը հայրենիք չունի: Այսօր նոյնը կը կրկնեմ, որ գործաւորը հայրենիք չունի, բոլոր այն երկիրներու մէջ, որ ընկերվարութիւնը չի տիրեր: Այո, գործաւորը հայրենիք չունի ճիշտ այնպէս ինչպէս ասուն չունի, տեղ չունի, հող չունի, հանք չունի, երկաթուղի չունի, գործարան չունի, մեքենայ չունի: Որովհետեւ՝ այդ բոլորը պուրժուազին իրեր է անոր ձեռքէն: Բայց այժմ որո՞ւ հայրենիքն է Ռուսաստանը, եթէ ոչ Ռուս աշխատաւորութեան: Որո՞ւ հայրենիքն է Հայաստանը, եթէ ոչ Հայ գործաւորութեան, Հայ գիւղացիութեան: Իսկ եթէ իմ անձնական համոզումները կ'ուղէք գիտնալ, ճիշտ է որ ես ոչ աղգ ունիմ եւ ոչ հայրենիք, այդ ամէնը ինձ համար

ունակութիւն դարձած: խորացած նախապաշարումներ են, իմ ազգս համայն մարդկային ընկերութիւնն է, ըլլայ այն ճերմակ, սեւ թէ դեղին, եւ իմ հայրենիքս՝ ամբողջ երկրագունտն է: Թէեւ չեմ ժխտեր, որ շատ բնական է եւ մարդկային, որ ուրիշ մէկը նախապիտէ անոնք՝ որոնց մօտէն ծանօթ է, որոնց լեզուն ծանօթ է, այն տեղը ուր ծներ է, մեծացեր է, յիշատակներ, մանկական յիշատակներ ունի, եւ ահա ճիշտ այդ յիշատակներուն համար է, որ այսօր կը նախընտրեմ Հայաստանի մէջ ապրիլ քան այս երկիրը: Չէ՞ որ հոն են իմ ծնողքը, որ վերջապէս զիս ծներ են, մեծացուցեր են: Չէ՞ որ հոն են իմ բարեկամները, ծանօթները, եւ բոլոր խաղի եւ վարժարանի ընկերները, որոնց հետ խաղացեր եմ, կարգացեր եմ: Հիմա ընկերս բանական չե՞ս գտներ որ ես այսօր Հայաստանով կը հետաքրքրուիմ: (Կը նստի):

ԺՈՂՈՎ. — (Բուռն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Քաղաքացիներ, այժմ մեր ժամանակը լրացած ըլլալով, ժողովը պիտի փակեմ: Բայց եթէ ուրիշ հարցեր ունեցողներ կան, անոնցմէ կը խնդրենք, որ ժողովէն յետոյ մասնաճիւղիս ակումբը գան, ուր ազատ եւ երկար ժամանակ կ'ունենանք վիճարանելու: Ուրեմն ես այս ժողովը փակուած կը յայտարարեմ, հրատիւրելով մեր երգեցիկ խումբը, որ մեզ երգէ «Հրաժարինք ընկերներ»:

ԵՐԳ. ԽՈՒՄԲ. — (Ոտքի կանգնելով կ'երգէ): (Երկու տուն):

ԺՈՂՈՎ. — (Բոլորն ալ ոտքի վրայ. երգէն յետոյ խումբ խումբ կը մեկնին):

ՏԵՍԻՎ Բ.

(Կը մնան նմանեաններ, Գեղամ, Նազեհի, Սրբուհի, Նուարդ եւ Զաւէն)

ԶԱԻԷՆ. — (Կը մօտեկայ նմանեաններու, որոնք կանգնած վերաբարկուին կը հագնին, իսկ քիչ անդին Գեղամ, Նուարդ, Նազեհի եւ Սրբուհի կանգնած կը խօս-

աւկցին: Զաւէն Սիրաբբիի ձեռքերը բռնելով) *Սքանչելի կերպով արտասանեցիր, Սիրաբբի:*

ՍԻՐԱՐԲԻ.— (հնդալով) *Սիրեցի՞ր:*

ԶԱԻԷՆ.— (Ծիծաղելով) *Անշուշտ սիրեցի, բոլորն ալ սիրեցին, հա՛ այդպէս, միշտ քու լաւագոյնդ պիտի ընես:*

ՍԻՐԱՐԲԻ.— (Ուրախացած, Զաւէնի ձեռքերէն փաշելով) *Լաւ, գնանք մերը, ի՞նչ կայ:*

ԶԱԻԷՆ.— *Բայց մի ուրիշ տեղ պիտի գնամ, Սիրաբբի:*

ՍԻՐԱՐԲԻ.— (Սրտնեղած) *Նօ, եկուր, (քեւէն փաշելով):*

ԶԱԻԷՆ.— (Լրջօրէն) *Լաւ, լաւ, Սիրաբբի, մի ուրիշ օր կուգամ:*

ՍԻՐԱՐԲԻ.— (Ուրախութեամբ) *Շուտով կուգաս, չէ՛:*

ԶԱԻԷՆ.— (հնդալով) *Այո, այո, շատ շուտով: (Յետոյ նամենամներու հետ ձեռքի սեղմումներ քնելով) Ցտեսութիւն, ցտեսութիւն. մի օր կուգամ: (Նամենամները կը մեկնին):*

**ՏԵՍԻԼ Գ.**

ԶԱԻԷՆ.— (Գեղամի դառնալով) *Ընկեմ Գեղամ գեռ չէ՞ք մեկնեք:*

ԳԵՂԱՄ.— (հնդալով) *Ոչ գեռ, Օրիորդ Նուարդ կ'ուզէ ձեզ ծանօթանալ, ընկ. Զաւէն:*

ԶԱԻԷՆ.— (Ծիծաղելով) *Ամենայն սիրով ընկ. Գեղամ, դուք դիտէք, որ ես անմատչելի մէկը չեմ: (կը մօտեցնայ խումբին):*

ԳԵՂԱՄ.— (Զաւէնի դառնալով եւ ցոյց տալով նրաւոր) *Օրիորդ Նուարդ Տարբերան: (Յետոյ դառնալով Նուարդի ցոյց տալով Զաւէնը) Ընկ. Զաւէն: (Նուարդ եւ Զաւէն իրարու ձեռք կը սեղմեն):*

ԶԱԻԷՆ.— (հնդալով) *Ուրախ եմ ծանօթանալու օրիորդ:*

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) *Նոյնպէս ես, Պր. Զաւէն,*

*եւ պարտք կ'զգամ շնորհաւորել ձեզ Պր. Զաւէն: Իսկապէս որ սքանչելիօրէն խօսեցաք:*

ԶԱԻԷՆ.— (հնդալով) *Շատ ազնիւ էք օրիորդ, բայց կը տարակուսիմ, որ իսկապէս հաշտուած ըլլաք իմ յայտնած մտքերուն հետ:*

ՆՈՒԱՐԳ.— (հնդալով) *Բայց իմ ակնարկը ձեր յայտնած մտքերուն չէք այնքան, որքան ձեր խօսելու շնորհքին:*

ԶԱԻԷՆ.— (Ծիծաղելով) *Կը տարակուսիմ եւ այդ մասին ալ օրիորդ, որովհետեւ գիտեմ որ պերճախօս մը չեմ:*

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) *Շատ համեստ էք Պր. Զաւէն:*

ԶԱԻԷՆ.— (կը խնդայ միայն):

ՆՈՒԱՐԳ.— *Բայց Պր. Զաւէն, ի՞նչ ըսել կ'ուզէք, միթէ ես չեմ՞ կարող սիրել, ինչ որ դուք կը սիրէք:*

ԶԱԻԷՆ.— (Ծիծաղելով) *Ոչ, օրիորդ, դուք չէք կարող սիրել, ինչ որ ես կը սիրեմ, բայց մի դուզէ, ես կարող եմ սիրել ինչ որ դուք կը սիրէք: (Բոլորը կը խրնդան, Գեղամ, Նագենի եւ Սրբուհի առանձինն խօսակցելով մի քիչ կը հեռանան, երբեմն բարձրօրէն խնդալով):*

ՆՈՒԱՐԳ.— (Լրջօրէն) *Բայց չըմբռնեցի, թէ ի՞նչ ըսել կ'ուզէք:*

ԶԱԻԷՆ.— (Լրջացած) *Շատ պարզ է օրիորդ, դուք մեծացեր էք, բոլորովին այլ միջավայրի մը մէջ, եւ սրնուեր էք, ձեր դասակարգի հոգեբանութեամբ: Իսկ ես՝ բոլորովին այլ միջավայրի մը եւ այլ պայմաններու մէջ, եւ ճիշտ ատոր համար ալ, մենք երկուքնիս միեւնոյն դա՛րձարները չենք կրնար սիրել, մանաւանդ երբ հարցը ընկերային խնդիրներու շուրջ է: Այժմ կը տեսնես, որ մենք միեւնոյն բաները չենք կրնար սիրել:*

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) *Ըսել կ'ուզէք ես ընկերվարական չեմ՞ կրնար ըլլալ:*

ԶԱԻԷՆ.— *Գրեթէ այդպէս, որովհետեւ դուք չէք ծներ այն պայմաններուն մէջ, որ ձեզ ընկերվարական*

դարձներ, թէ եւ ըսել չեմ ուզեր, որ բացառութիւններ չեն կարող դանուել: Բայց մենք ընկերվարականներս սովորութիւն չունինք բացառութիւններով հասարակական երևոյթները քննել:

ՆՈՒԱՐԳ. — (Ծիծաղելով) Բայց դուք անպայման այդ բացառութիւններէն մին կը կազմէիք, եթէ նոյն իսկ հարուստ ծնած ըլլայիք: **Զէ՞:**

ԶԱԻԿՆ. — Ես ինքս կը տարակուսիմ: (Ծիծաղելով):

ՆՈՒԱՐԳ. — (Ուրախութեամբ) Ուրեմն եթէ հարուստ ըլլայիք, ընկերվարական չէի՞ք ըլլար:

ԶԱԻԿՆ. — (Խնդալով) Բայց ձեր այդ հարցին օրիորդ, ճիշտ կերպով չէ կարելի պատասխանել, միայն մի բան, որ շատ սրուշ է իմ մտքիս մէջ, որ եթէ հարուստ ծնած ըլլայի, իմ հարուստ վիճակին մէջ, մի գուցէ երբեք ալ չէի հեռաբրբրուեր թշուառներու վիճակով, այլ օրինակուելով հօրմէս տեսածէս, ինքս ալ ինքզինքս կուտայի զեղիս ու շոյլ կեանքի մը, առօրեայ հաճոյքներս վայելելու համար: Ես խորապէս համոզուած եմ, որ քիչեր եւ շատ քիչեր միայն, կարող են խուսափիլ այն վիճակէն, որ իրենց միջավայրը ու կեանքի պայմանները կը շինեն զիրենք: (Խնդալով) Եւ անշուշտ այդ քիչերէն մին չէի ըլլար ես:

ՆՈՒԱՐԳ. — (Ծիծաղելով) Բայց ենթադրենք, որ այսօր մէկէն ի մէկ հարստանաս, ի՞նչ կ'ընես, կրկին ընկերվարական կը մնաս:

ԶԱԻԿՆ. — (Գլուխը շարժելով) Այժմ արդէն շատ ուշ է օրիորդ, երբ կեանքի թշուառութիւնը իմ ծուծն է դարձեր, եւ դասակարգային անարդարութիւնները զիս կերտեր են այն ինչ որ եմ այսօր, այժմ իմ կեանքը նոր ուղիներ չի փնտռեր այլեւս, այժմ՝ ոչինչ, բացարձակապէս ոչինչ, չէ կարող փոխել իմ համոզումները:

ՆՈՒԱՐԳ. — (Տրտմելով) Ուրեմն ես ուզեմ իսկ, ընկերվարական չե՞մ կրնար ըլլալ, ձեր մէջ չե՞մ կարող զալ:

ԶԱԻԿՆ. — (Ծիծաղելով) Մի այդպիսի արգելք չու-

նինք օրիորդ, բայց չէ մի որ ընկերվարական ըլլալու համար պէտք է շահագրգռուիլ, իսկ շահագրգռուելու համար, պէտք է շահ ունենալ, պէտքը զգալ: Իսկ դուք՝ ոչ շահ ունիք եւ ոչ ալ պէտքը կ'զգաք:

ՆՈՒԱՐԳ. — (Ծիծաղելով) Բայց ինչո՞ւ:

ԶԱԻԿՆ. — Որովհետեւ, չէ՛ մի որ դուք՝ հարուստի աղջիկ էք եւ արգէն իսկ կեանքը կը վայելէք, չէ՞:

ՆՈՒԱՐԳ. — (Խնդալով) Բայց մի գուցէ ուրիշ շահ ունիմ:

ԶԱԻԿՆ. — (Խնդալով եւ գլուխը շարժելով) Կը տարակուսիմ: (Յետոյ երկու քովնին կամացէն կը խօսակցին երբեմն բարձր խնդալով):

ՄՐԲՈՒՀԻ. — Բայց Պր. Գեղամ, Պր. Զաւէնը՝ իր այսօրուան բանախօսութեան մէջ, երբեք չանդարդարձաւ Թրքահայ խնդրոյ շուրջ:

ՆԱԶԵՆԻ. — Իսկապէս ալ, սեւէ ակնարկութիւն իսկ չըրաւ:

ԳԵՂԱՄ. — Ճիշտ էք, բայց ընկեր Զաւէն երբեք սովորութիւն չունի մեռած հարցերու մասին խօսելու:

ՆԱԶԵՆԻ. — Բայց ի՞նչ կ'ըսէք Գեղամ, ըսել է մեր ըոյր քաջածնէրը պարապը գնացին, ո՛հ, Աստուած իմ, ի՞նչ օրեր էր որ անցուցինք, ի՞նչ կեանք էր որ քաշեցինք, եւ ի՞նչ յոյսերով էր որ այդ տառապանքին տուկացինք:

ԳԵՂԱՄ. — Ճիշտ ես Նազենի, եւ դու ինքզ կենդանի վկան ես այդ քաջածնէրու, բայց ի՞նչ կարելի է ընել, երբ շատ անգամներ յոյսերը եւ երազները, միայն սոսկ երազներ մնալու դատապարտուած են:

Այսօրուան չոր իրականութիւնը՝ ըլլայ այդ դաժան եւ անարդար, մեզ կ'ստիպէ պահ մը, որ ընդունինք թէ Թրքահայաստանի ազատագրումը այժմ միայն անիրականալի երազ մըն է:

ՆԱԶԵՆԻ. — Բայց ինչո՞ւ անիրականալի:

ԳԵՂԱՄ. — Ճիշտ անոր համար, որ այսօր մի հայ իսկ չէ մնացած հայկական կոչուող այդ նահանգներուն

մէջ: Պէտք է ընդունիլ որ առանց Թրքահայ ժողովուրդին Թրքահայ դատ չի կայ, նա մեռած է:

ՍՐԲՈՒՀԻ.— (Զարմացմամբ) Մեռած:

ՆԱԶԵՆԻ.— Բայց Գեղամ, ներկայ Հայաստանը իր այսօրուան սահմաններով այնքան փոքր է, որ նոյն իսկ հոն ապրող ժողովուրդին չի բաւեր: Ուրեմն ո՞ւր պիտի տեղաւորուին հարիւր հազարաւոր Թրքահայ փախստականները, որոնք այժմ Պալքաններու մէջ կեանքերնին բարչ կուտան:

ԳԵՂԱՄ.— Ճիշտ է, այն թշուառներու վիճակը սիրտ մորմոքեցնող է, բայց ի՞նչ կարող ենք ընել, պէտք է մի կերպ տեղ մը տեղաւորուիլ, որովհետեւ անոնք երբեք ալ իրենց տեղերը, ըսել կ'ուզեմ Թրքահայաստան, չեն կարող վերադառնալ:

ՆԱԶԵՆԻ.— Ուրեմն Թրքահայաստանը ընդ միշտ կորած է Թրքահայ ժողովուրդին համար:

ԳԵՂԱՄ.— Այդ չենք կարող ըսել, որովհետեւ չենք դիտեր թէ ապագան ի՞նչ մութ կէտեր կը պահէ իր ծոցին մէջ: Բայց ինչ որ ալ ըլլայ, այդ մասին մտածողները մենք չենք, այլ Սօվետական Հայաստանը եւ Սօվետական Ռուսաստանն են, անոնք եւ միայն անոնք կարող են բան մը ընել, ուրիշ ոեւէ կողմէ ոեւէ յոյս չկայ:

ՆԱԶԵՆԻ.— (Զայրացած) Անպիտան Եւրոպացիներ, ո՞րքան խարեցին մեզ, ի՞նչ յոյսեր տուին, ի՞նչ խոստումներ ըրին, եւ յետոյ ալ ի՞նչպէս վատարար դրժեցին ամէն բան:

ԳԵՂԱՄ.— Ո՛չ Նազենի, ոչ, անոնք այնքան չի խարեցին մեզ, որքան մենք զմեզ խարեցինք. մենք էինք որ անոնց այս ու այն շարժումներէն, հոս ու հոն խօսածներէն, անոր ասոր ըսածներէն, մեծ մեծ ենթադրութիւններ հիւսեցինք, մեզ համար երազներու աշխարհ մը ըստեղծեցինք, եւ ուզեցինք որ այդ օղային-սպանիական դրեակներուն մէջ ապրիլ, իսկ յետոյ՝ յետոյ չոր իրականութիւնը եկաւ ցոյց տուաւ, որ անոնք բոլորն ալ երազներ են եղեր, ուրիշ ոչինչ:

ՆԱԶԵՆԻ.— Ուրեմն՝ Հայաստան պիտի չունենա՞նք:

ԳԵՂԱՄ.— Մի այդպիսի բան չըսի ես, եւ ընդհակառակը, երէկ՝ որ մեր Հայաստանը միայն մեր սրտին ու մեր հոգւոյն մէջ էինք կառուցեր, այսօր նա արդէն իրականութիւն է դարձեր, Արարատի կողքին, այնպէս չէ՞:

ՍՐԲՈՒՀԻ.— (Ծիծաղելով) Բայց այդ Հայաստանը պոլշեփիկ Հայաստան է, կ'ըսեն:

ԳԵՂԱՄ.— Եւ շատ ճիշտ են այդ ըսողները, ու լաւ որ այդպէս է, բայց որո՞նք են հայ պոլշեփիկները, եթէ ոչ հայ գիւղացին, հայ բանւորը, հայ աշխատաւորը, եւ այսօրուան մեր Հայաստանն ալ անոնցն է, հայ մասսաինը: Որո՞ւնը պէտք էր ըլլար, միթէ մեր ուզածն ալ այդ չէ՞ր:

ՍՐԲՈՒՀԻ.— (Զի համակրող ձեւ մը):

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ Սրբուհի, թէ ոչ Ամերիկայի կարգ ու սարքով Հայաստան մը կ'ուզէի՞ր:

ՍՐԲՈՒՀԻ.— Անշուշտ՝ եթէ մեր երկիրն ալ այս կարգ ու սարքով եղած ըլլար, բոլորս ալ կը գնայինք հոն եւ կ'ապրէինք:

ԳԵՂԱՄ.— Ուրեմն այս երկրին մէջ, ձեր ունեցած վիճակէն շատ գոհ էք, օրիորդ:

ՍՐԲՈՒՀԻ.— Անշուշտ, ասկէ լաւ երկիր կ'ըլլայ՞:

ԳԵՂԱՄ.— (Գլուխը շարժելով). «Անշուշտ ասկէ լաւ երկիր կ'ըլլայ», եւ այդ ըսողն ալ գուր էք Սրբուհի, բայց այդ խօսքերը, շատ՝ շատ տարօրինակ կը հնչեն ինձ, մանաւանդ երբ ըսողը դու ես Սրբուհի: Եթէ Նազենին ըսած ըլլար այդ, մի գուցէ այնքան ալ տարօրինակ չի թուեր ինձ, մտածելով որ նա դեռ նոր է եկեր այս երկիրը, դեռ եւս անտեղեակ է այս երկրի կեանքին, երկրորդ՝ երկիրը հարուստի մը աղջիկն ըլլալով, մի գուցէ ձեզ չափ ճաշակած չէ թշուառութեան պտուղէն: Բայց Սրբուհի, գուր ի՞նչն էք սիրեր այս երկրին: Ճիշտ է որ այս երկրի ճարտարարուեստը իր գեներթին հասեր է, մեքենաները հրաշքներ կը գործեն, հազորդակցութեան միջոցները իրենց վերջին խօսքը ըսեր են, բարձր չէնքերու գաղաթները

աստղերուն կը հասնին եւ վերջապէս այս երկիրը աշխարհի էն հարուստ երկիրն է, լա՛ւ, բայց ըսէք տեսնեմ, ի՞նչ ունիք դուք այդ ամբողջին մէջ: Ձէ՞ մի որ այս երկիրը եր այդ բոլոր բարեքներէն ձեզ բաժին հանած է միայն ազախին ըլլալ, (ցոյց տալով Նուարդ) եւ ծառայել այդ օրիորդին եւ իր ծնողներուն: Ճիշտ չէ՞մ:

ՍՐԲՈՒՀԻ.— Այո... բայց...:

ԳԵՂԱՄ.— Բայց կեցիր Սրբուհի, այժմ պահ մը ենթադրենք, որ վաղն իսկ, այս ամբողջ Շիրակօն տակն ու վրայ ըլլայ: Ամբողջ հարստութիւնը փճանայ, առանց ունէ անձի կորուստի, ըսէ տեսնեմ դուք սեւէ հարստութիւն կորսնցուցած կ'ըլլա՞ք:

ՍՐԲՈՒՀԻ.— (Խնդալով) Անշուշտ՝ Պր. Գեղամ, կը կորսնցնեմ, գործս եւ ամսական 20 տոլարս, չէ՞:

ԳԵՂԱՄ.— (Խնդալով) Այո, եւ աղախնութիւնդ, չէ՞: Բայց այդ՝ սեւէ ատեն կրկին կրնաք գտնել, կը բաւէ միայն որ դուք ինքզինքնիդ ծախել կ'ուզէք 20 տոլարի ամսականով, մի վախնաք ձեզ վարձողներ շատ կ'ըլլան:

ՍՐԲՈՒՀԻ.— Բայց Պր. Գեղամ, ենթադրենք որ մասամբ ճիշտ են ձեր ըսածները, մասնաւորապէս ինձ նրկատմամբ, բայց ի՞նչ, ես միշտ ծառայ պիտի մնամ, մի գուցէ (խնդալով) վաղը կ'ամուսնանամ, տուն տեղ կ'ըլլամ, նոյն իսկ փոքրիկ սեփական տուն մըն ալ կ'ունենամ, չըլլա՞ք:

ԳԵՂԱՄ.— (Ծիծաղելով) Ինչո՞ւ չէ, կարող ես օթօմոպիլ ալ ունենալ, աղախին ալ ունենալ, չէ՞ որ ամսական տոլար մը աւելցնելով, մէկ միլիոն տարիէն 12 միլիօն տոլար կ'ունենաս (քահ քահ կը խնդան բոլորը): (Շատ լրջացած) Բայց այդ ամբողջը երազներ են Սրբուհի, երազներ: Բայց չեմ դատապարտեր ձեզ, որովհետեւ այդ թուրութիւնը մարդկային դարձած է, տարբերութիւնը միայն չափին մէջ է, եւ ես վստահ եմ որ այդ յոյսերը ու երազները, ձեզ հետ ալ կ'ապրին մինչեւ մահուան դուռը, հոն՝ գերեզմանին մէջ է միայն, որ մարդը ու իր յոյսերը կ'անջատուին, իրենց յաւիտենական քունը քնանա-

լու համար: (Կարն լուրժեմէ մը յետոյ, բռնելով Նագեմի թեւէն) Գնանք Նաղենի, արդէն շատ ուշացանք: Իսկ Սրբուհիի հետ մեր վիճարանութիւնը կը շարունակենք մի ուրիշ օր:

ՆԱԶԵՆԻ.— Գնանք Գեղամ: (Միասին կը գնան):

ՍՐԲՈՒՀԻ.— (Նուարդի դառնալով) Օրիորդ, ես դուրսը կ'սպասեմ ձեզի:

ՏԵՍԻԼ Գ.

ՆՈՒԱՐԳ.— (Աղախնի կողմը դառնալով) Ես հիմա կուգամ: (Յետոյ Զաւէնի դառնալով) Բայց մի օր մեզի կ'այցելէք անշուշտ:

ԶԱԻԿՆ.— (Խնդալով) Խնդրեմ օրիորդ, ես այցելութիւններ տարւո սովորութիւն չունիմ, մանաւանդ հարուստներու:

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) Բայց հաւատա, որ մեր տունը դուք շատ լաւ ժամանակ մը կ'ունենաք:

ԶԱԻԿՆ.— (Խնդալով) Այո, այո, ձեր տունը ունենալիք լաւ ժամանակս կ'երեւակայեմ, ձեր հօր հետ վիճարանելս պիտի ըլլայ, կատարեալ գլուխցաւութիւն մը, չէ՛:

ՆՈՒԱՐԳ.— Բայց ոչ, Պր. Զաւէն, ես ձեզ այնքան մը կ'ըրազեցնեմ, որ դուք ժամանակ իսկ չէք ունենար վիճարանելու: (Յետոյ Զաւէնի ձեռքը սեղմելով) Յոտութիւն, կուգաս, չէ՞: (Կը մեկնի. կէս քարէն անգամ մը եւս Զաւէնի նայելով եւ ծիծաղելով):

ՏԵՍԻԼ Ե.

ԶԱԻԿՆ.— (Մտազբաղ կը գնայ եւ կը նստի սեղանին մէկ ծայրին վրայ, մէկ ոտքը գետիկը, միւսը կախ, կարն լուրժեմէ մը յետոյ) Բայց ի՞նչ ըսել կ'ուզէք այդ սիրունիկ աղջիկը...: Յիմար պէտք է ըլլամ, որ համոզուիմ, թէ այդ հարուստ աղջիկը, իմ յայտնած դաղափարներով հետաքրքրուեցաւ: (Մտածկոտ, ձեռքերը իր գլխու մագե-





ՏԻԿ. ՏԱՐԲ. — Բայց կարապետ, իրենց ի՞նչ պիտի մնար:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Իրենց ալ կառավարական պաշտօնները, անոնք կը խենդանան պաշտօնի համար: Բերանինն ոսկոր մը նետէ եւ ահա զիրար կը բզբտեն: ... Բայց դըժբախտաբար այդպէս չեղաւ, եւ հիմա ստիպուած, Թուրքին հետ կրկին լաւ մարդ պիտի ըլլանք, ի՞նչ ընենք, մեր շահը այդ կը պահանջէ:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Է՛յ, ուրիշ ի՞նչ կար:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Ուրի՞շ, երկու հատ ալ նամակ կար, Վաշինկթընէն, մէկ նամակով մեզ յայտնած էին, որ մեր ազգին մէջ համեմատաբար մեր ժողովրդի թիւին, շատ մը վնասակար գաղափարներ ունեցողներ կան եղեր եւ մեզ կը յանձնարարէին, որ միջոցներու դիմենք որպէս զի անոնց թիւը շահի: Մենք ալ որոշեցինք որ ուժ տանք եկեղեցիներուն, պատուելի, տէրտէր, վարդապետ պակաս չընենք, երիտասարդներու ակումբ մը պիտի հաստատենք, ուր՝ Փուշմանը պիտի խօսի ամէն Կիրակի, ուսանողներու ֆօլիո մը պիտի կազմենք:

Այս նոյն բաները պիտի ընենք նաեւ Նիւ Եորքի, Պոսթոնի, Իրովիտէնսի, Ուստրի եւ Տիթթոյիթի մէջ: Իսկ միւս նամակը, Հայերու քաղաքացի ըլլալու մասին էր:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Հետաքրքրուած) Իրա՛ւ, այդ խընդիրը ի՞նչ եղաւ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Ոչինչ, այդ ալ ոչինչ, դրամը կը տեսնե՞ս, ամէն բան կը կարգադրէ, անմիջական ծախսերու համար մեծ գումար մը հաւաքեցինք եւ զրկեցինք Վաշինկթըն, այդ ալ այդպէս:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Սրտնեղած) Բայց կարապետ, դուք ինչո՞ւ պիտի ընէք այդ ամբողջ ծախսերը, միւսները Հայ չե՞ն: Մենք արդէն քաղաքացի ենք:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Թագուհի, հոգիս, այդ տեղը քու խելքդ չի հասնիր, Աստուած չընէ, եթէ անգամ մը մօնկոլութիւնը մեզի հազցնեն, ալ մեր պիզմէսին մուխը կը մարի, խեբերնիս կ'անհիծուի:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Տխրօրէն) Լաւ կարապետ, հիմա քիչ մըն ալ մեր մասին մտածենք: Ի՞նչ պիտի ընենք:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Անակնկալօրէն) Ո՞ր մասին, ի՞նչը թէ ի՞նչ պիտի ընենք:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Քա՛ չես հասկնար, Նուարդի մասին, այսօր երեք շարաթ է, որ բանս գործս ձգած, զինքը համոզել կ'աշխատիմ, այժմ իմ բոլոր միջոցները սպառած են, ամէն միջոց գործածեցի, որ Պրն. Պօղոսին հետ գէթ նշանուի, իսկ քանի մը ամիս յետոյ ամուսնանայ, բայց բերնէն ԱՅՈ մը չելաւ, միշտ «ես չեմ ուզեր, ես չեմ առներ, ես չեմ ամուսնանար», կ'ըսէ եւ կուլայ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Ոտքի կանգնելով մտազբաղ) Բայց միտքը ի՞նչ է, ո՞վ անոնի կ'ուզէ, չի հասկցա՞ր:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Պիտի խայտառակուինք կարապետ, իի՛՛ջ ըլլալիք բան է, տարի մըն է որ խեղճ տղան կ'երթայ կուզայ, ամբողջ քաղաքը գիտէ, թէ արդէն նշանուած են, հիմա ի՞նչ պիտի ըսենք Պրն. Պօղոսին, ի՞նչ պիտի խօսին ուրիշները, ի՞նչ պիտի ըսեն մեր ծանօթ Ամերիկացիները, կատարեալ խայտառակութիւն մը պիտի ըլլայ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Ուրեմն բոլորովին կը մերժէ՞:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Կը մերժէ՞, այդ ալ բան է ըսիր, ալ ի՞նչ անակամներ ըսես կուտայ խեղճ տղուն, «անչնորհք», «անկիրթ», «սնափառ», եւ կարգ մըն ալ անգլիերէն խօսքեր, մէկ խօսքով, «չեմ սիրեր», «չեմ առներ», կ'ըսէ, հասկցա՞ր:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Խորհրդաւոր կերպով շրջելով) Ուրեմն անպայման մի ուրիշը կայ, մի ուրիշը կը սիրէ:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Քա՛ մարդ, չերթացած ըլլայինք այդ ժողովին:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Ո՞ր ժողովին, կնիկ: (Կը նստի):

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Այդ գործաւորներու, համալներու ժողովին, պարի՛ ուրիշ օր մըն ալ գնացած ըլլայինք:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Զարմացած) Բայց այդ ժողովը ի՞նչ կապ կրնայ ունենալ, մեր այս խնդրին հետ:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Բայց աղջիկը, անկէ ասդին բոլորովին փոխուեր է, ճիշտ է, առաջ ալ կամքը տուած չէր Պրն. Պօղոսին, բայց երեք շաբաթներէ ի վեր կարծես բոլորովին փոխուեր է:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Բայց այդ ժողովին գնալուս պատճառն ալ աղջիկդ էր, ինք՝ Սրբուհինն հետ այդ ժողովին գնալու մասին կը խօսէր, ես ալ հետաքրքրուեցայ, ըսին որ Հայաստանի մասին պիտի խօսուի, ես ալ խորհեցայ որ լաւ տեղեկութիւններ կ'առնենք, գնացինք:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Բայց կարապետ, լաւ տեղեկութիւններ առնէինք ի՞նչ պիտի ընէինք, թէ ոչ՝ Հայաստան պիտի երթայինք: Ասկէ լաւ երկիր չըլլար կարապետ, կ'երևի մոոցար, Սերաստիոյ մէջ ունեցած վիճակդ: Հոն փոքր խանութպան մըն էիր, իսկ հոս՝ շատ պատիւ ունեցող, մեծ գորգի վաճառական մը: Հոն հազիւ հազ չորս ծայրը իրարու կը բերէիր, իսկ հոս՝ փա՛ռք Աստուծոյ, քսան հատ ալ գործաւոր ունիս: Հոն հազիւ մի քանի հարիւր ռակի ունէիր, իսկ հոս՝ փա՛ռք Տիրոջը, մէկ երկու միլիոնի ձեռք կը զարնես: Ալ ի՞նչ բանի պէտքը ունինք: Հայաստանն ալ իրենց, բանն ալ, ասկէ լաւ Հայաստան չըլլար, մեր Հայաստանը հոս է:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Բայց Թագուհի, հաւատա որ Սերաստիոյ մէջ իմ ունեցած այդ փոքր գրամադուխտոյս, այդ փոքր խանութոյս, մեր վաղը այնքան ստոյգ էր, որքան այսօր չէ, ճիշտ ատոր համար ալ, այսօր իրար էինք անցեր, դու չես գիտեր, թէ ո՞րքան բաւոն է մըրցումը այս երկրին մէջ: Հաւատայ, եթէ օր մը այս մեր խայիի գործը ուշադրութիւնը գրաւէ տեղացիներու կամ հրեայ մեծահարուստներու, եւ ասէ տեսնես մէջտեղ կը բերեն 50 միլիոն տուար եւ մեզ բոլորս ալ կը սնանկացրնեն:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Ոտքի կանգնելով) Զգէ անըմ, պարագ բաներու մասին կը մտահոգուիս, մեր ունեցածը մեզ ալ գերեզման կը տանի, մեր զաւակներն ալ: Այսօր՝ մեր միակ մտահոգութիւնը Նուարդն է, այն ալ ոչ թէ նի-

Թական տեսակէտէն, այլ պարզապէս պատուոյ խնդիր է, եթէ ան ալ ամուսնացնենք Պրն. Պօղոսին հետ, ալ ի՞նչ հոգս ունինք:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Եթէ... ամուսնացնենք, բայց դու ըսիր որ բոլորովին կը մերժէ... անկասկած մի ուրիշը կայ, չի հասկցա՞ր:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Քիչ բան մը հասկցայ, Սրբուհին ինձ յայտնեց, որ այդ անիծեալ ժողովէն յետոյ, մեր տունը զայլն վերջը, աղջիկդ հոն մնացեր եւ ժամերով այդ անկուտի ատենախօսին հետ խօսեր խնդացեր է: Հիմա հասկըցա՞ր, թէ ինչո՞ւ քիչ առաջ այդ ժողովի մասին ակնարկութիւն ըրի: (Կը նստի):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Գլուխը շարժելով) Հիմա հարցը կ'ընտանեցաւ Թագուհի...: Թագուհի, Նուարդը դեռ ուշ տուն կուգայ, դու կարող ես իր սենեակը գնալ եւ տեսնել թէ ուե՛կ թղթակցութիւն ունի... Եթէ նամակներ գտնես, այն ատեն ամէն բան կը պարզուի, մենք ալ ընկիւքնիս կը գիտնանք:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Զարմացած) Շատ լաւ խորհեցար այդ կարոպետ, ես գնամ եւ տեսնեմ: (Կը գնա):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Բացի Պրն. Պօղոսի նամակներէն, միւսները՝ եթէ կայ, բոլորն ալ բեր տեսնենք: (Յետոյ ոտքի կ'ելլէ, քերթը կը վերցնէ, կրկին վար կը ձգէ, յետոյ շրջելով) Բայց չըլլալիք բան, չի հաւատալիք բան... չեմ հասկնար ինչո՞ւ իմ աղջիկս այդ անկուտին, այդ դործաւորը պիտի սիրէ... ուրիշ մարդ չէ՞ մնացեր, Պրն. Պօղոսը տասը անգամ աւելի լաւ տղամարդ է, քան այդ անկուտի պօլշեմիկը... ո՛չ, ո՛չ, այդ չըլլալիք բան է, իմ աղջիկս այդպէս խենդ բաներ չընէր: (Կը նստի մտազբաղ):

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Ներս մտնելով) Ա՛ս, տես ի՞նչ կայ մէջը. (Երկու նստակ կ'երկարէ):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Նամակներէն մին բանալով):

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Կարգա կարապետ, տեսնենք ի՞նչ կայ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ.— Կարգամ: Յունվար 4, Շիբալիօ: Յարգելի Օրիորդ, ինձ համար մեծ անակնկալ մը եղող ձեր երկու նամակներն ալ ստացայ:

Ձեր առաջին նամակին չի պատասխանեցի, մտածելով որ ձեր գրածները արդիւնք են, ձեր զգայնոտ մէկ վայրկեանին ու չեն կարող իսկական սիրոյ մը արտայայտութիւնները ըլլալ:

Իսկ ձեր ակնարկած ժողովին մէջ, ինձ հանդէպ ունեցած ձեր տաք վերարեմունքը, եւ վերագրեցի ձեր նրբացած կենցաղագիտութեան:

Կը գրէք որ դուք զիս սիրած էք, ձեր առաջին տեսութեամբ իսկ, (այր եւ կի՛ն իրարու կը նային) բայց անմիջապէս ձեզ յայտնեմ, որ ձեր եւ իմ մէջս, մեղ իրարու մօտեցնող տուիքներ գոյութիւն չունին:

Դուք փարթամ հարուստի մը աղջիկն էք, եւ առանց ինձ ալ ձեր բոլոր պէտքերուն գոհացում կրնաք տալ, քու հօր անսպաս տղարներով: Ալ ինչի՞ պէտք կը դամ ես:

Յետոյ, դուք ծնած ըլլալով ճոխութեան մէջ, եւ սընած հարուստի մը հոգեբանութեամբ, իսկ եւ աղքատութեան մէջ, սնած գործաւորի տառապանքին մէջ, անտարակոյս, որ մեր երկուքին զաղափարները եւս զիրար կը խաչաձևեն:

Ուրեմն մեր երկուքին ուղին իրարմէ կ'անջատուին եւ ոչ թէ իրարու կը միանան:

Իսկ աւելի կարեւորը, եւ սիրոյ ունէ զգացում չունիմ ձեզ նկատմամբ:

Այս նամակս կ'ըլլայ, առաջինը եւ վերջինը միանգամայն:

Խնդրեմ Օրիորդ, ընդունեցէք իմ յարգանքներու հաւաստիքը:

Յարգանքներով  
ՋԱԻԷՆ

(Նամակը վար ձգելով) Էֆէրիմ անկուտի, գրեր է թէ քեզ չեմ սիրեր:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— (Բռնագրօսիկ ծիծաղով մը) Մենք

տուինք տէ՛ ինքն ալ չի սիրեր եղեր, Էֆէրիմ համալ: Բայց միւսը տենանէք... կարգա կարապետ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ.— (Միւս նամակը բանալով) Շիբալիօ, Յունվ. 14:

Սիրելի Օրիորդ,

Ձեր երրորդ եւ չորրորդ նամակները եւս ստացած եմ: Այս անգամ, ես ինքս ալ ձեր անուան կը կցեմ այն ածականը, զոր դուք կցած էիք իմինին:

Ձեր նամակները շատ մը կէտեր ունէին պատասխանուելիք, բայց զանց կ'ընեմ:

Ճիշտ էք եւ տարօրինակօրէն ճիշտ, որ ես նախորդ նամակովս ամբողջ ճշմարտութիւնը չէի գրած ձեզ, որովհետեւ եւ խորապէս կը բաղձայի, որ մեր միջեւ եղածը պարզ միջադէպի մը վերածուէր եւ երկուքովնիս ալ մոռանայինք: Բայց կը տեսնեմ որ ես սխալած եմ, եւ իմ գրածները միայն հակառակ արդիւնքներ տուած են, որուն համար հաւատա, որ խորապէս կը ցաւիմ:

Ձէք գիտեր, թէ որքան ուրախացայ, երբ կարդացի ձեր սա տողերը. «դուք զիս չէք կարող խաբել, եւ գիտեմ որ դուք զիս կը սիրէք»: Ձեր այդ տողերը, աւելի քան ճիշտ են, եւ ես կը խոստովանիմ դայն:

Բայց աւա՛ղ որ իմ սէրն ալ դեռ եւս բաւական չէ, որ մեր երկուքին ճակատագիրը իրարու միացնենք:

Վերջին անգամ մը ըլլալով կրկին ձեզ կը գրեմ, որ ձեր եւ իմ միջեւ միութիւն մը հաստատելու ազգակիներ չի կան: Երկու շարաթ է, որ ես արդէն տանջուել եմ: Իմ զգացումները երբեմն զիս այնքան հեռուները կ'առաջնորդեն, որ ամէն բան թողում, ամէն բանականութիւն արհամարհեմ, եւ միայն ձեզ իմս դարձնելը իտէալս դարձընեմ: Բայց քիչ յետոյ, երբ զգացումներուս կը յաջորդէ բանականութիւնս եւ միտքս կ'սկսի չափել, ձեւել ու եզրակացնել, որ ես երբե՛ք, երբեք չի պէտք է փորձեմ տրդայութիւններ ընել, ձեզ հետ ամուսնանալու համար:

Ո՛չ, Օրիորդ, յանուն այն գերագոյն սիրոյն, որմով կը սիրեմ ձեզ, նա ինձ թոյլ չի տար, որ ձեզ դուրս քա-

չեմ ձեր հօր հանդստաւէտ տունէն, եւ բերեմ իմ յարկին տակ, ուր ձեր մինչ այժմ ունեցածներէն ոչինչ պիտի գտնէք:

Ես ինչո՞վ կարող եմ բաւարարել ձեր պէտքերը, երբ ես պարզ գործաւոր մըն եմ:

Ո՛չ Օրիորդ, ո՛չ, իմ վաղը շատ անստոյգ է, եւ հէնց ատոր համար ալ, ես դարձեր եմ զաղափարի զինուոր մը, որպէս զի գէթ մեր տառապանքը ժառանգը չի դառնայ յաջորդ սերունդին:

Կը յուսամ որ կը հասկնաք զիս ու այլեւս չէք փորձեր ինձ գրել, եւ ես ալ որպէս վերջին գործ մը, կը խոստանամ ձեզ անձնապէս տեսնել ձեր գրած տեղն ու ժամանակը, բայց կրնաք վստահ ըլլալ, որ իմ բերանացի պատասխանն ալ կրկին «ոչ» պիտի ըլլայ:

Գերագոյն սիրով մը  
ՋԱԻԿՆ

(Նամակը վար դնելով) Թագուհի, այս երկու նամակներն ալ մաքուր սրտի մը արտայայտութիւնն են, բայց իցի՛ւ թէ տղան գործաւոր մը չըլլար, մեր աղջիկը աւելի երջանիկ կ'ըլլար այդպէս սիրա ունեցողի մը հետ:

ՏԻՎ. ՏԱՐԲ. — Կարապետ, կ'երեւի դու ալ ազդուեցար նամակներէն, փոխանակ դրամ չի՛նելու, մարդ դառնայու, պարապ պարապ գրել է սորվեր, այդքան ալ չի գրէ՞: Ո՛չ, ո՛չ Կարապետ, իմ աղջիկս երբե՛ք, երբեք այդ անկուտի պօլշեվիկին հետ չի կրնար ամուսնանալ... Ինձի նայէ Կարապետ, եթէ դու իսկ հաւանիս, ես ամէն միջոցներով պիտի աշխատիմ, որ Պրն. Պօղոսը առնէ, ի՞նչ է եղեր անոր որ չի հաւնիր, ուսում ըսես տեղը, պատիւ ըսես տեղը, հարստութիւն՝ տեղը, խալիի վաճառական, ճարպիկ տղայ, ալ ինչի՞նչ չի հաւնիր Նուարդը:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Սրտնեղած) Օ՛ֆ ցանրմ, կարծես ես բսի թէ աղջիկնիս այդ համալին տանք, որ էլեր այդքան երկար ճառ մը կը կարդաս գլխուս: Դուն մայրն ես նէ ես ալ հայրն եմ, մանաւանդ այդ անպիտան տղան, որ մեզ հարուստներուս շատ հակառակ է, նոյն իսկ շատ մը

հրապարակային ժողովներու մէջ, մեզ՝ մեր անունները յիշելով իսկ անպատուած է... հիմա պիտի ելլեմ աղջիկս անոր տա՛մ: (Մտածկոտ) Ո՛չ, այդ չըլլար... այդ չըլլալիք բան է: (Գլուխը ձեռքերու մէջ առած կը մտաւսնջուռի):

ՏԻՎ. ՏԱՐԲ. — Քիչ յետոյ Նուարդը կուգայ, Կարապետ, պէտք է ամէն միջոց գործածենք, որ անպայման Պրն. Պօղոսը առնէ: Պէտք է յայտնենք, որ եթէ մեր ըսածը չընէ, այլեւս մեր դաւակը չէ: (Զգածուած) Օ՛հ, ի՞նչ տարօրինակ է աշխարհը, զաւակ ունեցիր, վրան դուրգուրայ, հազար ու մէկ շարշարանքներով մեծցուր, յետոյ ալ թող սրիկայ մը, անկուտի մը, պօլշեվիկ մը գայ եւ առնէ տանի: (Լալով) Բայց այդ չէ կարելի, եթէ ան իմ աղջիկս է, իմ խօսքս պէտք է ընէ, նա դեռ ցանկի է, իր ըրածը չի գիտեր... Կարապետ, մի՛ մի՛ թոյլ տար, մի՛ թողուր որ աղջիկս կորսուի: (Կը հեկեկայ):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Ոտքի ելլելով, կը մօտենայ իր կլնոջ, մէկ ձեռքը կնոջ ուսին դնելով) Թագուհի, Թագուհի, ինչո՞ւ պարապ տեղը կուլաս... դեռ մէջտեղը ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, էլի՛ր, էլի՛ր՝, պարապ տեղը արցունք կը թափես: (Կիկը ոտքի հանելով) Մի՛ վախնար, մի՛ վախնար, ես դեռ չեմ մեռեր, այդ սրիկային աղջիկ տուող չի կայ, նա չէ կարող իմ փեսան դառնալ:

ՏԻՎ. ՏԱՐԲ. — (Արցունքները սրբելով դուրս կ'ուզուի):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Թագուհի, Սրբուհիին ըսէ, որ թատրոն պիտի գնանք, թող տղան օրօմուպիլը պատրաստէ. իսկ դու ալ դնա եւ զգեստներդ փոխէ:

ՏԻՎ. ՏԱՐԲ. — (Կը մեկնի):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Մտազբազ, քերթը կը վերցնէ, կը նայի, կը կարդայ) Բայց ի՞նչ որ ալ ըլլայ, հանդիսանիս խոտվեց, եթէ միայն Պրն. Պօղոսը չի սիրելը ըլլար, այդ ոչինչ, թող մի ուրիշը առնէ, բայց ելլել այդ գործաւորի կտորին, այդ անկուտիին, նոյն իսկ այդ անաստուածին

սիրահարիւ, այդ չըլլալիք բան է, չըլլալիք: (Կրկին թերթին վրայ կը նայի):

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Պէտք եղածը ըսի Կարապետ, շուտով պատրաստ կ'ըլլայ, բայց վրաս չի փոխեցի, հաւատա սիրտ չի մնաց, բայց այս ալ լաւ է, ո՞վ ասկից լաւն է հագելը, այսպէս կը գնանք: (Դուռը կը հնչուի) Նուարդը ըլլալու է:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Կամ Պրն. Պօղոսն է, նա ալ պիտի գար:

ՏԵՍԻԼ Բ.

Տէր եւ Տիկ. նմանեաններ, Պօղոս, Նուարդ եւ Սրբուհի

ՆՈՒԱՐԳ. — (Ներս մտնելով, մօրը կը մօտենայ, կը համբուրէ, յետոյ դառնալով հօրը) Ի՞նչպէս ես փա: (Կը հանէ վերարկուն եւ գլխարկը) Սրբուհի', Սրբուհի':

ՍՐԲՈՒՀԻ. — (Ներս գալով) Հրամեցէք Օրհորդ: (Առնելով Նուարդի վերարկուն, գլխարկը եւ ձեռնոցները կը մեկնի):

ՆՈՒԱՐԳ. — (Դաշնամուրիին առջեւ նստելով, հօրը դառնալով) Հայր մի քիչ նուազե՞մ ձեզ համար:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Ոչ աղջիկս, մայրդ մի քիչ տկար է այս երեկոյ, արդէն քիչ յետոյ զինքը քատրոն պիտի տանիմ, մի գուցէ կը լաւանայ: (Կրկին դուռը կը հնչուի):

ՍՐԲՈՒՀԻ. — (Ներս գալով) Պրն. Պօղոսն է գալողը:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Ներս՝ հոս հրամցուցէք զինքը:

ՍՐԲՈՒՀԻ. — (Կկը մեկնի դուրս, մի բուպէ յետոյ դուրսէն դուռը կը բանայ ինքը կրկին դուրսը մնալով) Հրամեցէք Պարոն:

ՊՕՂՈՍ. — (Նայ խոր կերպով գլուխ կուտայ) Բարեւ ձեզ: (Կը մօտենայ նայ Տիկ. Տարբերեանի ձեռքը համբուրելով, կը գնայ Պրն. Տարբերեանի ձեռքը կը սեղմէ, յետոյ կը մօտենայ Նուարդի) Թէ ոչ ձեզ խանգարեցի հոգիս, (վերջին բառը անլսելի):

ՆՈՒԱՐԳ. — Ոչ Պրն. Պօղոս, արդէն չէի նուազեր, մայրս մի քիչ ժամանակ չունի, քիչ յետոյ թատրոն պի-

տի գնան. եթէ անքաղաքաւարութիւն չէք նկատեր, ձեզ եւս պիտի խնդրէի որ իրենց ընկերանաք, ո՞վ զիտէ, մի գուցէ աւելի կը ծանրանայ:

ՍՐԲՈՒՀԻ. — (Ներս մտնելով) Ամէն ինչ պատրաստ է, իսկ ժամը ութին մօտ: (Կը կանգնի դրան մօտ):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Գնանք Թագուհի (ոտքի կանգնելով):

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Ոտքի կանգնելով) Լաւ լաւ, գնանք:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Պօղոսին դառնալով որ մինչ այդ Նուարդի քով կանգնած կը խօսակցէր) Մենք կը գնանք զաւակներս, դուք հոս կը մնաք Պրն. Պօղոս մինչեւ մեր դալը, թող Նուարդը միայնակ չի մնայ, նա այս երեկոյ դուրս գալ չուզեր, մենք շուտով կուգանք: (Իր կնոջը հետ կը մեկնի, անուց կը հետեւի Սրբուհի):

ՆՈՒԱՐԳ. — (Կը վերցնէ «Պայքար» թերթը, կը նստի բազկաթոռի մը վրայ) Խնդրեմ նստեցէք Պրն. Պօղոս: (Կ'սկսի թերթը կարդալ):

ՊՕՂՈՍ. — (Անհանգիստ, միշտ աչքերը Նուարդին վրայ, ինքն ալ կը նստի Նուարդի կողքին ուրիշ աթոռի մը վրայ) Բայց ի՞նչ է պատահեր ձեզ Նուարդ, շատ տըխուր կ'երեւիք այս երեկոյ:

ՆՈՒԱՐԳ. — Ոչինչ, մի առանձին պատճառ չունիմ տխուր ըլլալու, եւ ոչ ալ մի լաւագոյն պատճառ ուրախ ըլլալու:

ՊՕՂՈՍ. — Միթէ իմ ներկայութիւնը բաւականաչափ պատճառ չէ՞ ձեզ ուրախացնելու:

ՆՈՒԱՐԳ. — (Կը ծիծաղի):

ՊՕՂՈՍ. — Թէ ոչ մի ունէ կերպով վշտացուցեր եմ ձեզ, հոգիս:

ՆՈՒԱՐԳ. — Ո՛չ, ոչ, Պրն. Պօղոս, ձեզմէ վշտանալու ունէ պատճառ մը չունիմ:

ՊՕՂՈՍ. — (Ուրախօրէն) Լա՛ւ ուրեմն, եթէ ինձմէ վշտանալու ունէ պատճառ չունիս, քիչ յետոյ, մեծ պատճառ մը կ'ունենաս ուրախանալու, թո՛չնիկս:

ՆՈՒԱՐԳ. — (Լրջօրէն) Բայց չի հասկցայ, ի՞նչ պատճառ:

ՊՕՂՈՍ.— Հիմա կը հասկնաս եւ կ'ուրախանաս :

ՆՈՒԱՐԳ.— (Հետաքրքրուած) Լաւ ուրեմն, կ'սպասեմ հասկնալու եւ ուրախանալու :

ՊՕՂՈՍ.— (Ուրախութեամբ մը ոտքի կ'ելլէ, գըրպանէն տուփ մը կը հանէ, մէջէն աղամանդ մատանի մը, իր երկու մատներուն մէջ առած, միւս ձեռքը կ'երկարէ Նուարդի ձայն ձեռքը բռնելու համար) Տուր ձեռքդ հոգիս, տուր տեսնեմ այդ սիրունիկ մասներդ :

ՆՈՒԱՐԳ.— (Շուարած) Բայց ի՞նչ է այդ, Պարոն Պօղոս :

ՊՕՂՈՍ.— (Ուրախօրէն) Մի չնչին նուէր, պաշտելիս :

ՆՈՒԱՐԳ.— (Շփոթած) Բայց ի՞նչ նուէր Պրն. Պօղոս, երբ այսօր ոչ ֆրիսմս է, ոչ ալ Նիւ երբ եւ ոչ ալ իմ պըրք տէյս : Ի՞նչ նուէր է այդ :

ՊՕՂՈՍ.— Բայց Նուարդ, այս նուէրը իւրաքանչիւր աղջիկ միայն մէկ անգամ կ'ստանայ իր կեանքին մէջ :

ՆՈՒԱՐԳ.— (Հաւկցած) Ի՞նչ, թէ ոչ...

ՊՕՂՈՍ.— Այո, այո, պաշտելիս, նշանուելու մատանի մը, անարժէք նուէր, բայց սովորութիւն է :

ՆՈՒԱՐԳ.— (Այլալլած) Բայց ի՞նչ կ'ըսես պարոն...

ՊՕՂՈՍ.— Կ'զգամ որ սա շատ փոքր է, ձեզ պէս սիրունիկ էակի մը համար, արժէր որ աշխարհի էն մեծ աղամանդը ձեզ տայի, բայց ասկէ յետոյ իմ ամբողջ ունեցածս ձերն է, ես ինքս ձերն եմ, իմ եւ քո չկայ այլևս :

ՆՈՒԱՐԳ.— (Նեղացած) Բայց ես չեմ կարող ըմբռնել, թէ ի՞նչ համարձակութեամբ, առանց իմ կամքը հարցնելու նոյն իսկ ծախս ըրած էք, աղպլիսի մի մտադրութիւն էք ունեցած, կը ցաւիմ Պրն. Պօղոս :

ՊՕՂՈՍ.— (Ուրախ տրամադրութեամբ) Բայց Նուարդ, հոգիս, ցաւելու ի՞նչ կայ, մատանիին եղածը ի՞նչ է, չէ՞ մի որ ամիսներէ ի վեր մենք զիրար հասկցած, զիրար սիրած ենք, ես ուզեցի որ այս երեկոյ ձեզ սրբարայգ մը ընեմ :

ՆՈՒԱՐԳ.— (Նեղացած) Եւ իսկապէս ալ ըրիք,

դուք՝ զիս ուրիշ տեւէ կերպով աւելի սրբարայգ չէիք կարող ընել :

ՊՕՂՈՍ.— (Ուրախութեամբ) Գիտէի, զիտէի, որ ուրիշ կերպ ալ չէր ըլլար : (Կրկին ձեռքը երկարելով) Հիմա տուր տեսնեմ, տուր տա ձեռքդ հոգեակս, որ սիրունիկ մտադ անցնեմ : (Ցոյց տալով մատանին) :

ՆՈՒԱՐԳ.— (Սրտնեղած) Բայց ոչ, Պրն. Պօղոս, ես տեւէ մտադրութիւն չունիմ ամուսնանալու եւ չեմ գիտեր ինչո՞ւ կը յամառիք չի հասկնալ զիս :

ՊՕՂՈՍ.— Նուարդ, այժմ միայն կը նշանուինք, իսկ ամուսնութեան մասին յետոյ կը մտածենք :

ՆՈՒԱՐԳ.— Բայց ես ոչ կ'ուզեմ նշանուել եւ ոչ ալ ամուսնանալ, ինչո՞ւ չես ուզեր հասկնալ :

ՊՕՂՈՍ.— (Այլալլած) Ուրեմն... ուրեմն... կը մերժես զիս : (Ընկնուած կը նստի գլուխը երկու ձեռքերուն մէջ առած) :

ՆՈՒԱՐԳ.— (Ոտքի ելլելով) Այժմ լսէ Պրն. Պօղոս, ես ոչ մի օր, ոչ մի ժամանակ, մտքս իսկ չեմ անցուցած ձեզ հետ ամուսնանալ, դուք զիտէք որ ես տեւէ կերպով, ոչ բերանացի եւ ոչ ալ իմ վարուելակերպով ձեզ հակըցուցած չեմ, թէ ձեզ կը սիրեմ : Քո եւ իմ մասին դուրսերը եղած տարաձայնութիւնները, դու ինքդ ալ գիտես, որ քո եւ իմ ծնողքին խօսուրտութիւններն էին : Ես ամէն անգամ ալ իմ ծնողքին յայտնած եմ, որ ես չեմ ամուսնանար, բայց կ'երեւի անոնք՝ փոխանակ ձեզ յայտնելու իրողութիւնը, ձեզ քաջալերած են, ինչպէս այս երեկոյ ըրին : Ոչ, Պրն. Պօղոս, ես եւ դու միայն ծանօթներ ենք, այն ալ քո եւ իմ ծնողներու բարեկամական փոխ յարաբերութեանց պատճառաւ :

ՊՕՂՈՍ.— Բայց հոգիս, հիմա արդէն շատ ուշ է, երբ ես ամբողջ հոգուով, բոլոր զգացումներովս տարուած եմ ձեզի : Ես մինչ այս հասակս ոչ ոք չեմ սիրած, բացի քեզմէ, ու այդ սէրս այնքան բուռն է որ պատրաստ եմ կեանքս իսկ տալ : (Ոտքի կը կանգնի ու Նուարդի ձեռքերը բռնելով, աղաչակամ) Մի՛, մի՛ ըներ Նուարդս, ես չեմ

կարող ապրիլ առանց ձեզի, ես կը խելագարիմ, ես կը մեռնիմ: (Նուարդը իրեն սեղմելով):

ՆՈՒԱՐԳԻ.— (Ինքզինքը ազատելով անկէ) Բայց անօգուտ է Պրն. Պօղոս, ես սիրոյ կը հաւատամ, իսկ քեզ հանդէպ սիրոյ ունէ գգացում չունիմ, ի՞նչպէս կարող եմ ամուսնանալ:

ՊՕՂՈՍ.— Մի՛, մի ըսեր այդ Նուարդ, մենք երկուքովնիս աշխարհի են երջանիկ գոյգը կ'ըլլանք:

ՆՈՒԱՐԳԻ.— (Կարեկցելով) Բայց իսկապէս կը ցաւիմ ձեր այդ վիճակին վրայ Պրն. Պօղոս, ես ոչ մէկ պատճառ չեմ տուած ձեզ, այդպէս գգալու:

ՊՕՂՈՍ.— Նուարդ, անուշիկս, հոգ չէ թէ դուք ունէ պատճառ չէք տուած, բայց չէ՞ մի որ ես ինքս, ձեզ կը սիրեմ անասմանօրէն, հոգ չէ, դուք՝ մի սիրէք զիս, յետոյ ես ամէն ամէն բան ընելու պատրաստ եմ ձեր սէրը գրաւելու համար, դու միայն պատեհութիւն մը տուր, ժամանակ տուր, միայն հետս նշանուելով:

ՆՈՒԱՐԳԻ.— (Զայրացած) Օ՛հ Աստուած իմ, բայց ինչո՞ւ չէք հասկնար Պրն. Պօղոս, ես ձեզ չեմ սիրած, չեմ սիրեր այժմ, եւ վստահաբար պիտի չի սիրեմ վաղը, իսկ առանց սիրոյ ամուսնութիւն, ո՛չ, ո՛չ, այդ չըլլալիք բան է:

ՊՕՂՈՍ.— (Նուարդի ձեռքերը բռնած, ծունկի եկած, արտասուալից աչքերով) Մի՛, մի ըներ հրեշտակս, ես չեմ ուզեր ապրիլ առանց ձեզի, ես կը խելագարիմ, ես կը մեռնիմ:

ՆՈՒԱՐԳԻ.— Բայց ինչո՞ւ չէք հասկնար զիս Պրն. Պօղոս, ես... ես մի ուրիշը կը սիրեմ:

ՊՕՂՈՍ.— (Այլայլած) Մի՛... ու... րիշը: (Կ'իյնայ բազկաթոռին վրայ, գլուխը աթոռի քեւին դրած՝ կ'արտասուէ):

ՆՈՒԱՐԳԻ.— (Կը մօտենայ Պօղոսին, իր ձեռքը անոր ուսին դրած) Բայց Պօղոս, դուք երեխայ չէք, ձեր այդքան գգացուիլը բոլորովին աւելորդ է, մի գուցէ այս է աշխարհի օրէնքը, դուք զիս կը սիրէք, բայց ես չեմ սի-

րեր ձեզ, ես ալ մի ուրիշը կը սիրեմ, նա ալ զիս չի սիրեր, ու թերեւս մի ուրիշն ալ, ձեզ կը սիրէ եւ դուք զայն չէք սիրեր:

ՊՕՂՈՍ.— (Գլուխը բարձրացնելով) Ո՞վ, ո՞ր արարածն է, որ ձեզ նման հրեշտակ մը պիտի չի սիրէ, ո՛չ, Նուարդ ո՛չ, ունէ տղամարդ չէ կարող չի սիրել ձեզ, բայց ես կը խորհէի որ դու իմս պիտի ըլլաս, որովհետեւ ես ամէնէն շատ կը սիրեմ քեզ:

ՆՈՒԱՐԳԻ.— Ինչքա՛ն կը բաղձայի, որ ձեր վերջին նախագասութիւնը իմ սիրած տղան կրկնէր ու այն ատեն, ես աշխարհի են երջանիկ աղջիկը կ'ըլլայի:

ՊՕՂՈՍ.— (Գլուխը առջեւը ծռած գետիկը նայելով) Մի՛ ուրիշը... եւ ո՞վ գիտէ, այդ մի ուրիշը... ինչքա՛ն հարուստ է:

ՆՈՒԱՐԳԻ.— Այդ ձեզ չի վերաբերիր, Պրն. Պօղոս, բայց կը բաղձամ որ սխալ չի հասկցուիմ, ես ձեզ արդէն յայտնեցի, որ մի ուրիշը կայ: Այժմ ալ կը յայտնեմ որ ձեր ենթադրութեան ճիշտ հակառակն է: Այդ մի ուրիշը, շատ, շատ աղքատ է, պարզ գործաւոր մը, որուն համար ալ ծնողքս կը հակառակին:

ՊՕՂՈՍ.— (Զարմացած եւ յուսահատած) Աղքատ:

ՆՈՒԱՐԳԻ.— Այո աղքատ, եւ շատ աղքատ, գործարան գործող գործաւոր մը: Բայց նա սէր չի մուրար, եւ կ'արհամարհէ հարստութիւնը, եւ իմ բոլոր հետապնդողներուս փոխարէն, ես մինչեւ այսօր ալ չ'որ մերժում մըն եմ ստացեր:

ՊՕՂՈՍ.— (Յուսապնդուած) Բայց այդ չըլլալիք գործ է Նուարդ, ձեր ծնողքը երբե՛ք երբեք հաւանութիւն չեն տար ձեր ամուսնութեան, հոտ նոյն իսկ պատուոյ խնդիր կայ, իսկ եթէ պնդես եւ ընդդիմանաս, ոչ միայն խնդիր կայ, իսկ եթէ պնդես եւ կորսնցնես թէ ծրերջանիկ չես ըլլար, այլ նոյն իսկ կը կորսնցնես թէ ծրնողքդ եւ թէ անոնց ունեցած հարստութիւնը, անոնք քեզ կը զրկեն ժառանգութենէ:

ՆՈՒԱՐԳԻ.— Ինձ կը թուի, որ հօրս հարստութիւնը ձեզ աւելի շատ կը հետաքրքրէ, քան զիս, բայց ես այժմ

հարստութիւններու մասին այն համոզումը չունիմ, ինչպէս երէկ, հարստութիւնը շատ երերուն բան է, մանաւանդ այս դարուն. այսօր կայ, կարող է վաղը չի կենայ, միթէ այդպէս չեղա՞ւ Ռուսիոյ, Թուրքիոյ եւ ուրիշ շատ մը երկիրներու մէջ: Ի՞նչ եղան Ռուս մեծահարուստները, նոյն իսկ ի՞նչ եղան Կ. Պոլսոյ, Չմիւռնիոյ մեծահարուստ Հայերը, որոնք երէկ մեզմէ շատ աւելի հարուստներ էին:

ՊՕՂՈՍ.— Բայց նուարդ, Ռուսիոյ մէջ անպիտան սոյլեմիկներն էին, որ տակն ու վրայ բրին: Իսկ Թուրքիոյ մէջ, չուն Թուրքերը: Բայց հոս ապահով Ամերիկայի մէջ, ո՞վ կարող է այդպէս բան մը բնել:

ՆՈՒԱՐԳ.— Հոն ընողները մարդիկ էին չէ՞, ուրեմն ինչո՞վ կ'երաշխաւորէք, որ նոյն բաները հոս ալ չեն պատահիր վաղը: (Ոտքի կ'ելլէ):

ՊՕՂՈՍ.— (Ինքն ալ ոտքի ելլելով) Հասկցա՛յ, հասկրցա՛յ, ո՞ր կողմէն կուգան այդ հովերը, այդ ամբողջը այն դատարկասիրտ, երազատես հաւալիմ գաղափարներն են, որ յաջողեր է ձեր գլուխը թիմել:

ՆՈՒԱՐԳ.— Մենք մինչեւ հետ իրարու սեւէ անպատշաճ լեզու չի գործածեցինք, բայց անոր հասցէին ըրած ձեր այդ լուսանքները, դիւս կ'ստիպեն ձեզ ըսելու, որ դուք անոր կօշիկին կապերը իսկ չէք արժեր:

ՊՕՂՈՍ.— (Սաստիկ գայրացած, դէպի դուրս կ'ուզդուի) Լա՛ւ, յաւ Օրբորդ, կը տեսակցինք շուտով, ես կը տեսնեմ ձեր ծնողքը վաղն իսկ, եւ դու համոզուած եղիր, որ այդքան ալ դիւրին, այն ալ մի անարժէք գործաւորի համար, դիւս այսպէս չես կարող խայտառակել:

ՆՈՒԱՐԳ.— (Չեռքը Պօղոսի ուղղութեամբ բարձրացնելով) Բայց կեցէք Պրն. Պօղոս, նախ քան մեկնելնիդ յսեցէք եւ դիւ... ես դիտէի որ չեմ սխալած Պրն. Պօղոս, եւ ճիշտ հիմա դուք ապացուցիք զայն, ուրեմն սուտ էին, կեղծ էին քիչ առաջուան ձեր բոլոր ըսածները, ձեր բոլոր ձեւերը, ձեր բոլոր արցունքները: Ճիշտ հիմա ձեր փնտոածը ձեր եսն է միայն: Դուք մտահոգուած էք,

որ ձեզ մերժեցի մի ուրիշին ստորագասելով: Ձեզ հետաքրքրողը այժմ, միայն ձեր փրէսքիժն է, եւ որուն համար ալ նոյն իսկ կ'սպաննաք, բայց դուք ձեր այդ դիրքով, այժմ իմ աչքին աւելի փոքրացաք, աւելի պղտիկացաք: Հաւատա Պրն. Պօղոս, ես կը նախընտրէի դեռ ես խարուած մնալ, քան այսքան յուսախարուիլ: Այո, դուք այս երեկոյ շատ փոքրացաք, շատ ցածցաք, այժմ ես ինքնիրմէս կ'ամաչեմ, մտածելով թէ ինչպէս չեմ ձանարկեմ ձեզ եւ ձեզ հետ որպէս ծանօթի, որպէս բարեկան մի յարարերել եմ: Աժօթ է ձեզ Պրն. Պօղոս, աժօթ է ձեզ: (Գէպի դուրս դառնալով) Սրբօ՛հի, Սրբօ՛հի...: ՍՐԲՈՒՀԻ.— (Ներս մտնելով) Հրամեցէք Օրբորդ: ՆՈՒԱՐԳ.— Խնդրեմ, Պարոնին վերաբերուն եւ գլխարկը...:

ՊՕՂՈՍ.— (Առանց սեւէ բան ըսելու կը մեկնի):  
ՍՐԲՈՒՀԻ.— (Կը հետեւի անոր):  
ՆՈՒԱՐԳ.— Երթա՛ք բարով: (Կը դիտէ հետեւն):

ՏԵՍԻԼ Գ.

Նուարդ, Սրբուհի եւ Զաւէն

ՍՐԲՈՒՀԻ.— (Ներս մտնելով) Ուրիշ հրաման մը ունի՞ք Օրբորդ:

ՆՈՒԱՐԳ.— Այո՛, այո Սրբօ՛հի, մի քիչ եւս պիտի սպասես, ճիշտ ժամը Գին Պրն. Զաւէնը հոս պիտի դայ, զայն ընդունելէ յետոյ, կարող ես սենեակդ դնալ եւ նոյն իսկ ննջել:

ՍՐԲՈՒՀԻ.— Բայց Օրբորդ, ծնողք...:  
ՆՈՒԱՐԳ.— Հասկցա՛յ, բայց թող մէկ այս երեկոյ ալ ծնողքս իրենք հոգան իրենց պէտքերը: Ձեռ կրնա՞ր:

ՍՐԲՈՒՀԻ.— Շատ լաւ, Օրբորդ: (Կը մեկնի):  
ՆՈՒԱՐԳ.— (Կը վերցնէ «Պայքար»ը, կը նստի, չէ կարող կարդալ, կը գնայ դաշնամուրիս ստջեւ, փորձ մը կ'ընէ, չէ կարող նուագել, յետոյ ժամացոյցիմ նայելով եւ ուրախութեամբ) Օ՛հ, ժամը մօտեցեր է, քիչ յետոյ կու-

գայ: (Կը նստի խոր մտածումներուն մէջ) ... Բայց ինչո՞ւ ուրախ չեմ... ինչո՞ւ այսպէս տարօրինակ կ'զգամ... Օ՛հ, ինչքան թուլացայ ես... ես ոչ մէկ տղամարդու հանդէպ այսքան թուլացած չէի...: Քիչ յետոյ հոս պիտի ըլլայ... եւ ուրախ եմ որ պիտի տեսնեմ, յետոյ՝ կարծես չեմ ուզեր որ դայ, կարծես վերջինը պիտի ըլլայ: Կարծես պիտի կորսնցնեմ զինքը... բայց տարօրինակ վիճակ է այս: Ուրախ եմ որ պիտի տեսնեմ, կը վախնամ որ կորսնցնեմ...: (Քիչ մը լռութենէ յետոյ) Ի՞նչպէս պիտի դիմագրաւեմ... Ի՞նչ պիտի խօսինք... Իսկ եթէ յամառի, կրկին ոչ ըսէ, ինչպէս իր նամակներով... բայց ո՛չ, ո՛չ, նա այդ չընէր, նա թափանցող է, նա կարեկցող է, նա զգայուն է, նա կ'զգայ իմ վիճակը, չէ՞ մի որ նա ինքն ալ զիս կը սիրէ...: Ուրեմն ինչո՞ւ կը մերժէ, մի ուրիշը կա՞յ...: Ո՛չ, ո՛չ, այդ ալ չէ... նա չի ստեր, նա չի կեղծեր, եթէ այդ ըլլար՝ նա կ'ըսէր ինձ...: Այո, քիչ յետոյ, քիչ յետոյ, նա ինքը հոս՝ քովս պիտի ըլլայ, ամէն բան կը պարզուի, ամէն ինչ կը հասկնամ: (Մտածկոտ լռութենէ մը յետոյ) Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ այսպէս կ'զգամ, կարծես ամբողջ մարմնովս կը դողամ, կարծես ջերմութիւն ունիմ: Ամբողջ հոգովս կը սիրեմ զինքը... բայց ինչո՞ւ... ինքս ալ չեմ գիտեր... շարաթներէ ի վեր, միտքս իրմով զբաղեցաւ, ամբողջ հոգովս իր հետ էի: Ամբողջ մտածումներս իր մասին էին, ամբողջ խորհուրդներով իր հետ ապրեցայ, եւ նոյն իսկ, ամէն գիշեր իրմէ չի բաժնուեցայ, բոլոր երազներուս մէջ միշտ զինքը տեսայ: Գրկեցի, սիրեցի, համբուրեցի... եւ հիմայ որ երազներուս թաղաւորը՝ սիրած տղաս քիչ յետոյ հոս՝ քովս պիտի ըլլայ, ընկճուած կ'զգամ, կարծես հիւանդ եմ, տարօրինակ վիճակ... տարօրինակ սէր...: (Ձանգը կը հեջուի): (Ոտքի կը ցատկէ) Գնամ, գնամ սենեակս, մի քիչ սխառաստուիմ, թող այսպէս չի տեսնէ զիս, թող Սրբուհին զինքը ընդունի: (Արագ դուրս կը գնայ):

ՍՐԲՈՒՀԻ.— (Ներս մտնելով, Ձաւէն կը հետեւի իրեն) Հրամայէք Պարոն, նստեցէք, ես գնամ եւ Օրիորդին

կը յայտնեմ ձեր գալուստը: (Կը մեկնի առնելով Ձաւէնի վերարկուն եւ գլխարկը):

ՁԱԻԷՆ.— (Իր վերարկուն եւ գլխարկը յանձնելէ յետոյ, կանգնած նախ սեղանին վրայի թերթերը կը դիտէ, յետոյ պատերէն կախուած նկարները, յետոյ սենեակին նոյնութիւնը, կը մտնեայ դաշնամուրին, ձեռքը կ'երկարէ նուարդի նկարին, յետոյ առանց առնելու ետ կը փաշուի եւ ուրախ սրամադրութեամբ նստելով՝ դուրը կը դիտէ):

ՆՈՒԱՐԳ.— (Ներս մտնելով, իր երկու ձեռքերը Ձաւէնի երկարած, միշտ ծիծաղկոտ) Օ՛, բարի էք եկեր, Պրն. Ձաւէն:

ՁԱԻԷՆ.— (Ոտքի ելած, սենեակին կէտը յառաջացած, բռնելով նուարդի երկու ձեռքերը, միշտ ծիծաղկոտ) Ի՛յ, ի՞նչպէս էք Օր. Տարբերեան:

ՆՈՒԱՐԳ.— Շատ լաւ, բայց խնդրեմ, զիս իմ անուանովս կոչեցէք:

ՁԱԻԷՆ.— Նու...արդ, բայց ի՞նչքան ալ սիրուն անուն է:

ՆՈՒԱՐԳ.— (Կը շիկնի, գետիկը նայելով) Խնդրեմ, նստեցէք Պրն. Ձաւէն:

ՁԱԻԷՆ.— Բայց նուարդ, ինձ թոյլ չի տուիք ձեզ՝ ձեր վերջին անուննով կոչելու, բայց դուք իմինին կցեցիք երբեք իմ անունին հետ կապ չունեցող անական մը, պա...րոն:

ՆՈՒԱՐԳ.— (Մատը բերնին տարած եւ արագ կերպով) Ձաւէն:

ՁԱԻԷՆ.— Ճիշտ այդպէս: (Կը նստի բազկաթոռներէն մէկուն վրայ):

ՆՈՒԱՐԳ.— (Անոր կողքին նոյն աթոռի թելին վրայ տեղաւորուելով) Բոլոր նամակներս ալ ստացաք, չէ՞:

ՁԱԻԷՆ.— Այո, բոլորն ալ, եւ իւրաքանչիւրն ալ մի բանի անգամ կարգացի:

ՆՈՒԱՐԳ.— (Շիկնելով) Ուրեմն, իմ զգացումներս ձեզ հանդէպ, զաղտնիք մը չեն այլեւս:

ԶԱԻԷՆ.— Ոչ Նուարդ, եւ իմ իններս ալ ձեզ ծանօթ են, չէ՞:

ՆՈՒԱՐԳ.— (Նազակեմով մը) Բայց ինչո՞ւ զիս տանջեցիք ամբողջ երեք շաբաթներ:

ԶԱԻԷՆ.— Ո՞վ, Ե՞ս, ես տանջեցի՞ր ձեզ:

ՆՈՒԱՐԳ.— Այո՛, դուք:

ԶԱԻԷՆ.— Ես հաղար անգամ ներողութիւն կը խընդրեմ, եթէ՛ իրաւ, անպիտակցարար ձեր տանջուելուն պատճառ դարձեր եմ: Նոյն իսկ այս երեկոյ պիտի չի գայի, մտածելով որ մի գուցէ ձեր ծնողաց տհաճութիւն պատճառելով՝ ձեզ ալ նեղութիւն պատճառած կ'ըլլամ:

ՆՈՒԱՐԳ.— (Տըտմած) Բայց եթէ չի գայիր, ես աւելի քան կը տանջուէի այս երեկոյ: (Ծիծաղկոտ) Ծընողքս թատրոն գացին, 12էն առաջ չեն գար, այնպէս որ երեք ժամ ունինք միասին ըլլալու:

ԶԱԻԷՆ.— Բայց Նուարդ, ես երեք ժամ հոս մնալու մտադրութիւն չունիմ, պէտք է շուտով մեկնիմ:

ՆՈՒԱՐԳ.— (Տըտմած) Մեկնիս... շուտով... ո՛չ, ոչ Ձաւէն:

ԶԱԻԷՆ.— Այո, ես եկեր եմ, անգամ մը եւս բերանացի կրկնելու իմ նամակներուն պարունակութիւնը, որպէս զի վերջ տանք այս աննորմալ վիճակին, եւ ապրինք այնպէս՝ ինչպէս կ'ապրէինք զիրար չի ճանչնալէ առաջ:

ՆՈՒԱՐԳ.— Բայց կը խորհի՞ս, որ այդ կարելի է:

ԶԱԻԷՆ.— Ինչո՞ւ չէ, միայն հարկաւոր է կամք, եւ ես փոտահ եմ, որ մենք երկուքսմքս ալ այդ կամքը ունինք:

ՆՈՒԱՐԳ.— Բայց Ձաւէն, չէ՞ որ դու խոստովանեցար թէ զիս կը սիրես:

ԶԱԻԷՆ.— Բայց չէ՞ որ ես գրեցի իմ պատճառները, յետոյ գրեցի իմ ՈՉը:

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) Այո, բայց ձեր ՈՉԵՐԸ՝ ես միշտ ԱՅՈ կը կարդայի:

ԶԱԻԷՆ.— (Քահ քահ կը խնդայ, աւելի սեղմելով Նուարդի ձեռքերը):

ՆՈՒԱՐԳ.— Ձաւէն, ես գիտեմ որ զիս կը սիրես, եւ դու ալ գիտես իմ զգացումները հանդէպ ձեզ: Ձեր նամակներու մերժողական տրամադրութիւնները ոչ միայն չի նուազեցուցին իմ սէրը, այլ ընդհակառակը, ես անոնցմով պատահութիւն ունեցայ ձեզ լաւապէս ըմբռնելու, որ մինչ այդ ինձ անծանօթ էր, ու հիմա իմ երէկուան զգացողական սիրոյն միացուցած եմ, յարգանքի ու ակնածանքի զգացումներ, կամ աւելի ճիշտը զբական սէր մը:

ԶԱԻԷՆ.— (Ոտքի կանգնելով եւ Նուարդի երկու ձեռքերը պահելով իր ձեռքերուն մէջ) Լսէ՛ Նուարդ, քեզ առաջ դու յայտնեցիր որ քեզ կը սիրեմ, կրնաս փոտահ ըլլալ, որ իսկապէս ալ ձեզ կը սիրեմ եւ անսահման սիրով մը: Այժմ դուն ինձի ըսէ, Բ՞նչպէս կարող եմ ես ինձ թոյլ տալ, որ զիտակցարար ձեզ հետ ամուսնանալով՝ ձեր թշուառութեան պատճառ դառնամ:

ՆՈՒԱՐԳ.— (Ինքն ալ ոտքի կանգնելով) Բայց Ձաւէն, դու ըսիր որ զիս կը սիրես, եւ որուն համար ալ չես ուզեր թշուառացնել զիս: (Աղաչական) Բայց չէ՞ս մտածեր, որ զիս յաւէտ թշուառացուցած կ'ըլլաս, եթէ յամառիս այդ մտադրութեանդ վրայ:

ԶԱԻԷՆ.— (Քաշելով Նուարդի ձեռքերէն եւ իրարու կողքին մեծ քաղկաթոտիս վրայ նստելով) Մի գուցէ ճիշտ էք Նուարդ... բայց... ուրիշ կերպ ալ չէ կարելի:

ՆՈՒԱՐԳ.— (Լալազիս) Օ՛հ, մի՛ մի՛ այդպէս խօսիր... ես առանց ձեզ այս աշխարհի էն թշուառ աղջիկը կ'ըլլամ, մի օր իսկ չեմ տեսներ, մի օր իսկ չեմ վայելիր...: Բայց ոչ Ձաւէն, դուք այդ չէք ըներ, դուք զիս չէք մերժեր, չէ՞: (Գլուխը Ձաւէնի կուրծքին դրած կը հեկեկայ):

ԶԱԻԷՆ.— (Զգածուած նախ իր կուրծքին կը սեղմէ Նուարդը, յետոյ երկու ձեռքերով կը բռնէ անոր գլուխը ուղիղ աչքերուն մէջ նայելով՝ կը մտնեայ համբուրելու գայն... չի կրնար, կը քողու Նուարդը, գլուխը ձեռքերուն մէջ առած կը մտածէ գետիմը նայելով, յետոյ կըր-

կին կը դառնայ Նուարդին, կը սեղմէ անոր ձեռքերը) Հիմա լսէ՛ սիրելիս, ես իմ նամակներով ուզեցի ամէն ինչ իրականել ձեզ եւ այժմ կը պարտաւորուիմ բերանացի կրկնել բոլորը: Նուարդ, այն ճանապարհը որ ես կտրեր եմ ու դեռ պիտի գնամ, ձեզ անձանօթ է, դուք մեծացեր էք ձեր հարուստ հօր տունը, դուք ապրեր էք անհոգ, հանգիստ, երջանիկ, ձեր բոլոր պէտքերը ու պահանջները հոգացուեր են ձեր ծնողքէն, դուք մինչեւ այս հասակնիդ, երբեք չէք ճաշակած կեանքի դառնութեան պրտուղը, եւ այսօր դուք չէք գիտեր ի՞նչ ըսել է կարիք, չքաւորութիւն, գործաւորութիւն, անգործութիւն, ուրիշ խօսքով՝ դուք ապրեր էք կեանքի մէկ կողմը միայն, իսկ միւս կողմը բոլորովին անձանօթ է ձեզ: (Քիչ մը լռութեմէ յետոյ) Ես գիտեմ, ճիշտ հիմա, ձեր սէրը հանդէպ ինձ զգացողական է, իսկ զգացողականը միշտ վազանցուկ է, շուտով անոր կը յաջորդէ բանականութիւնը, եւ կեանքի կարիքները շուտով կը մեռցնեն ձեր զգացողական սէրը, եւ ահա օր մըն ալ ձեր դատողութիւնը միացած ձեր բանականութեան, կ'եղրակացնէ որ դուք սխալ եւ շատ սխալ քայլ մը առած էք զիս ձեր կեանքի ընկերը ընտրելով: Այժմ ըսէ Նուարդ, զիս կը դատապարտե՞ս, որ ես մի քիչ հեռուն դիտեմ, մի քիչ ապագան մտածեմ:

ՆՈՒԱՐԴ.— Բայց ի՞նչ բաներ կը խօսիք Ձաւէն, ես երեսայ չեմ, ես ինքս ալ անդրադարձեր եմ այդ երեւոյթներուն վրայ, ես այդ ուղղութեամբ ձեզ շատ բան եմ գրեր, իմ նամակներովս, այժմ ես ոչինչ չեմ ակնկալեր իմ ծնողքէս, գիտեմ որ անոնք պիտի հակառակին, բայց ես պատրաստ եմ ձեզ օգնելու, ձեզ հետ աշխատելու, մինչեւ որ կարենանք լաւապէս ապրիլ:

ՁԱԻԿՆ.— Ծա՛տ, շատ ազնիւ էք Նուարդ... սա- կայն...

ՆՈՒԱՐԴ.— Բայց սպասէ Ձաւէն... հաւատա որ շատ անգամներ, ես սկսեր եմ ատել ինքզինքս, երբ մտածեր եմ որ անհոգ, անաշխատանք, տունը նստած, կ'ուտենք, կը խմենք, կը զուարճանանք. հաւատա Ձաւէն,

քանի՛ քանի անգամներ բաղձացած եմ այդ խանութները դործող, օֆիսները ծառայող, եւ փոքր խանութները վարող աղջիկներէն մին ըլլալ, որովհետեւ անոնք բան մը ըրած ըլլալու, աշխատանք մը տարած ըլլալու ինքնադոհութիւնը ունին, իսկ ե՞ս:

ՁԱԻԿՆ.— Նուարդ, ես կը յարգեմ ձեր այդ զգացումները, բայց չէ՞ որ սոսկ զգացումներ են անոնք, եւ մոռացուելու դատապարտուած: Դուք ըսիք որ ձեր ծընողըը արգելք մը չեն: Դուք ըսիք որ կ'արհամարհէք ամէն բան, հանգստութիւն, ծնողք եւ ամէն ինչ, ու այդ ամբողջը միայն զիս ունենալու համար, բայց ատով իսկ դուք չէ՞ք ցուցադրեր մի փոքր անձնասիրութիւն:

ՆՈՒԱՐԴ.— Բայց ի՞նչ անձնասիրութիւն կայ հոտ, Ձաւէն:

ՁԱԻԿՆ.— Ձէ՞ որ ձեր սիրածը, ձեր բաղձացածը իմ անձն է միայն, եւ այն ալ անոր համար, որ կը խորհիք թէ շատ երջանիկ պիտի ըլլաք ինձ հետ:

ՆՈՒԱՐԴ.— Բայց Ձաւէն, միթէ ձեր ուզածն ալ այդ չէ՞, երջանիկ ընտանիք մը կազմելու համար ի՞նչ հարկաւոր է, եթէ ոչ երկուստեք մաքուր սէր, եւ հիմա որ մենք երկուքս ալ զիրար կը սիրենք, ալ ի՞նչ կը մնայ երջանկօրէն ապրելու:

ՁԱԻԿՆ.— (Դառնօրէն ժպտելով) Դեռ շատ բան հոգիս, դժբախտաբար դեռ շատ բան կը մնայ: (Լրջօրէն) Նուարդ, մենք երկուքովնիս միայն երջանիկ չենք կարող ըլլալ, որովհետեւ այս աշխարհի վրայ միլիոնաւոր երկուքներ, զոյգեր՝ կան եւ դժբախտաբար անոնցմէ քիչերը եւ շատ քիչերն են որ ամէն բան ունին, կեանքը վայելելու, երջանիկ ըլլալու համար, ինչպէս ձեր ծնողքը: Իսկ անոնցմէ շատերը եւ շատ շատերը սոսկ գործաւորներ — քսաներորդ դարու գերիներ, ստրուկներ են, ինչպէս նըմանեաները, ինչպէս ես ինքս: Իսկ հիմա դուն այդ քիչեմանեաներէն, ես այդ շատերէն — աղքատներէն, ըէն — հարուստներէն, տուն ըլլանք, ընտանիք կազմենք, կ'ուզենք որ միանանք, տուն ըլլանք, ընտանիք կազմենք, կեանքը ապրելու, երջանիկ ըլլալու համար: Բայց ես

ըստ որ բովանդակ մարդկային ընկերութիւնը միայն երկու դասակարգերէ կազմուած է — քիչ հարուստներով եւ շատ աղքատներով, իսկ մենք, դու եւ ես, այդ երկու դասակարգին մէկ մէկ ներկայացուցիչներն ենք: Այժմ ըսէ՛ նուարդ, մենք երկուքովնիս միացած՝ այդ դասակարգերէն ո՞ր մէկին պիտի պատկանինք, վաղուան կեանքը ապրելու, երջանիկ ըլլալու համար:

ՆՈՒԱՐԳ.— (Նախ կը շուարի, յետոյ կը մտածէ, յետոյ ծիծաղելով) Լա՛ւ, մենք ալ երկուքին եւս կը պատկանինք, նախ աղքատներուն, իսկ յետոյ կ'աշխատինք, դրամ կը շինենք եւ հարուստներուն կը պատկանինք, չըլլա՞ր:

ԶԱԽԷՆ.— (Խնդարով) Անշուշտ ոչ, հիմա լսէ՛ սիրելիս, հարստութիւնը՝ այս քսաներորդ դարուն մէջ, միայն քիչերու վերապահուած է, պէտք է անպայման հազարաւոր գոյգեր տառապին, տանջուին, որպէս զի անդին մէկ գոյգ զիս ու շուքս կեանք վաշխէ: Իսկ զայն ձեռք բերելը, շատ՝ շատ դժուար է, չէ՞ որ հազարէն միայն մին կրնայ հարուստ ըլլալ: Տե՛ս հիմա, ենթադրենք որ այդ հարստութիւնը պտուղ մըն է ծառի դազածին, եւ հազար հատ ճարպիկ սղաքներ կ'ուզեն զայն ունենայ, բայց չէ՞ մի որ այդ հազարէն մի քանի հարիւրը ծառին տակ իսկ պիտի կոխկոտուին, մի քանի հարիւրն ալ ծառին բունին իսկ պիտի չհասնին, իսկ մի քանի հարիւրը հազիւ ծառին ճիւղերուն հասած, միւս մնացեալներն ալ ծառին այս ու այն կէտին վրայ, ահա միայն մէկն է որ մինչեւ գազաթը մագլցելով, զայն կարող է ունենալ. այնպէս չէ՞, այս պարզ չէ՞:

ՆՈՒԱՐԳ.— (Մտածելով զլլտով հաճութիւն կուտայ):

ԶԱԽԷՆ.— (Շար.) Դուք զիտէք նուարդ՝ որ մեր ապրած սարը հարուստներու — գործատէրերու, եւ աղքատներու — գործաւորներու դարն է: Մարդկային ընկերութիւնը կազմողներէն մի չնչին մասը, քիչերը տիրացել են երկրագնդի բոլոր հարստութեան, հողերին, հանքերին, երկաթուղիներին, մեքենաներին եւ գործա-

րաններին, եղեր են հարուստներ — գործատէրեր եւ երջանիկ են: Իսկ անչին նոյն մարդկութեան ստուար մեծամասնութիւնը սեւէ բանի տիրացած չըլլալով, եղեր են աղքատներ — գործաւորներ եւ ապերջանիկ են: Հիմա եթէ պահ մը ուզենք որ ամբողջ մարդկութիւնը երջանիկ ըլլայ, այն ատեն պէտք է բոլորն ալ գործատէր դառնան, հարուստ ըլլան, որ երջանիկ ապրին: Իսկ այդ՝ դու ինքզ ալ գիտես որ անկարելի է, անհնար է, չէ՞ մի որ մէկը գործատէր ըլլալու համար, հազարներ գործաւոր պէտք է ըլլան, ուրեմն այդ չըլլար, ըլլալիքը այդ չէ: Այժմ ատենք միւս կողմը, եթէ բոլոր գործաւորները գործատէր չեն կարող ըլլալ, այդ անհնար է, այժմ փորձենք բոլոր գործատէրերը գործաւոր դարձնել, եւ կը տեսնենք որ այդ է միակ կարելին, չէ՞ մի որ ընկերութեան բոլոր գործառնութիւններն ընողը արտադրողը, միան գործաւորն է, չէ՞ մի որ այսօրուան գործատէրը սեւէ մաս իսկ չէ վերցուցած իր գործարանը, նոյն իսկ իր գործին մէջ, չէ՞ մի որ անոնցմէ շատերը, նոյն իսկ իրենց գործարանին տեղն իսկ չեն գիտեր, ուրեմն այդպիսիները զրկելով իրենց գործատիրութենէն ընկերութիւնը սչինչ չի կորսնցներ, ընդհակառակը շատ բան կը շահի, ձրիակերներէն կ'ազատի, եւ աշխատողներու թիւը կը շատանայ:

Գիտեմ որ այդ ընելը դիւրին գործ չէ, որովհետեւ հարուստները չեն որ իրենց կամքով գործաւոր պիտի դառնան, ձեռք պիտի քաշեն իրենց այսօրուան ատանձնանքը, ձեռք պիտի քաշեն իրենց ի՞նչպէս այդ աչք ծակող շրնորհեալ վիճակէն: Ուրեմն ի՞նչպէս այդ աչք ծակող անարդարութիւնները պիտի վերանան, եթէ ոչ կոխով, անարդարութիւնները պիտի միանան, եւ գիտակցին, պիտի կազմակերպուին, պիտի միանան, եւ պիտի ապստամբին, որպէս զի կարելի ըլլայ ներկայ անարդար կարգերը տապալելով՝ անոր տեղ նոր ու արդար կարգեր հաստատուին, որպէս զի ամէն ոք, ամէն դար կարգեր հաստատուին, որպէս զի ամէն ոք, ամէն գոյգ կարենան երջանիկ ապրել, ահա ատոր համար ալ ես՝ մի զինուորը դարձեր եմ յեղափոխութեան:

ՆՈՒԱՐԴ.— (Խոր մտածումներու մէջ, կ'ուզէ բան մը ըսել, ոտքի կանգնելով) Բայց ի՞նչ կ'ուզէ թող ըլլայ, մենք ըլլանք հարուստ թէ աղքատ, ես միշտ քու կողքին կը մնամ, միշտ քեզ հետ կ'աշխատիմ, եւ այդ՝ հաւատարմօրէն կը տանիմ մինչեւ մահս: (Կը նստի):

ԶԱԽԷՆ.— Մի գուցէ ճիշտ ըլլաք Նուարդ, եւ իրաւցնէ չեմ տարակուսիր, բայց ես գիտեմ որ ես՝ ինքս պիտի տանջուիմ, երբ անկարող պիտի ըլլամ ձեր պէտքերուն, ձեր կարիքներուն բաւարարութիւն տալու, բայց այդ ոչինչ՝ եթէ միայն ես ըլլամ տանջուողը: Սակայն ես գիտեմ նաեւ որ դու ինքդ ալ պիտի տանջուիս, երբ տեսես որ ուրիշ կիներ անհող, անաշխատանք, ամէն ինչ ունին կեանքը վայելելու, իսկ դու կարիքներու մէջ չարաչար կ'աշխատիս, որ երկուքովնիս չորս ծայրը իրար բերենք, պիտի տանջուիս...: Նուարդ՝ դու ինքդ ալ կին ես եւ ոչ ոքէ երկրորդ, եւ երբ տեսես որ ուրիշներ կ'ապրին եւ դու կը չարչարուիս, պիտի տանջուիս եւ շատ պիտի տանջուիս, մանաւանդ երբ մինչեւ այսօր, դու ամէն ինչ ունեցեր ես, այո՛ պիտի տանջուիս, ու ինձ համար չա՛տ շատ դժուար է տեսնել իմ սիրածին տանջուիլը:

ՆՈՒԱՐԴ.— Մի գուցէ ճիշտ էք Զաւէն, բայց ես կը նախընտրեմ ձեզ հետ տանջուիլ, քան ուրիշի մը հետ կեանքը վայելել:

ԶԱԽԷՆ.— (Մտազբաղ եւ խորհրդաւոր, գլուխը շարժելով) Բայց դեռ այդ ալ բաւական չէ հոգիս. այժմ ենթադրենք որ ամուսնացեր ենք, տուն տեղ ենք եղեր, գաւակներ ալ ունինք եւ նոյն իսկ սեփական տուն, իսկ ես՝ դարձեր եմ ընտանիքի տէր մարդ, առանձնացած տան չորս պատերուն մէջ, քաջուած աշխարհէն, շրջապատուած ձեզմով, եւ անձնասիրաբար կ'ապրինք մենք մեզի համար: Խնդրեմ, ըսէ՛ Նուարդ, ալ ես ինչի՞ պէտք կուզամ: Մինչդեռ անդին ընկերական պայքարը, գասակարգային կռիւը, յեղափոխութիւնը, զինուորներու եւ ետեւնին բեռ չունեցող զինուորներու պէտք ունի, եւ դու գիտես որ ես այդ զինուորներէն մէկն եմ: (Ոտքի

կանգնելով) Ճիշտ է Նուարդ, երբեմն կը թուլանամ, ձեզ հանդէպ ունեցած անասման սէրս, զիս հեռուները կը տանի, կ'սկսիմ մտածել, որ սրահ մը ամէն ինչ թողում, ամէն բանէ քաշուիմ, միայն մէկ իտէպլ ունենամ եւ այն ալ ձեզ՝ իմ կինս դարձնելը ըլլայ, եւ ահա՛ այդ մտածումներուս մէջ, սքանչելի պատկեր մը, որ երեւակայութեանս առջեւ կը պատկերանայ: Փոքրիկ մաքուր տուն մը, դու ինքդ տան թագուհին, մի քանի փոքրիկներ, սիրուն, մաքուր, խնամուած: Ես ինքս ալ հոն եմ, կամ փոքրիկները սիրելով եւ կամ ձեզ հետ կատակելով եւ մենք ամբողջովնիս սիրոյ բոյն մը ենք դարձուցեր մեր տունը, մաքուր, խաղաղ, երջանիկ: (Կը նստի առանձին աթոռի մը վրայ, գլուխը երկու ձեռքերու մէջ առած) Բայց ահա՛ այդ գեղեցիկ պատկերը կ'անհետանայ աչքերէս, ուրիշ մը կը յաջորդէ անոր: Երեկոյ է, տուն կը վերադառնամ, Մէտիսըն փողոցին վրայ եմ, առջեւէս շարան՝ շարան՝ կ'անցնին դորձաւորները, բոլորն ալ արին քրտինքի մէջ: Ահա՛, հոս ու հոն, մութ փողոցներուն մէջ, հազարաւոր յամուկներ, ցնցոտիներ աղտոտութեան մէջ: Եւ ահա հարիւրաւոր այլանդակուած աղջիկներ, ինքզինքնին կը ծախեն սպրեւելու համար, ահա եւ մուրացողները կտոր մը հաց կը խնդրեն: Ահա եւ իմ ընկերները, գաղափարի ընկերները, յոգնած, հեւասպառ, բայց պատնէշին վրայ, ու ամէնէն վերջը բազմահազար ամբոխ մը, զինուած բիրերով, կացիններով, զէնքերով, ջարդուփչուր ընելու ամէն բան: Բայց յանկարծ, այդ ջարդուփչուր ընելու եւ զիս տեսնելով՝ ցուցամասնին բոլորը կանգ կ'առնեն եւ զիս տեսնելով՝ ցուցամասնին ինձ կ'ուզողեն, դասալի՛քը, դասալի՛քը, աղաղակելով: (Կը ցնցուի, ծուկի եկած երկու ձեռքերը ուղղած Նուարդի) Բայց ո՛չ Նուարդ, ո՛չ, դու ըսիր որ զիս կը սիրես, չէ՞, ուրեմն դու այլեւս չես պնդեր որ ես դասալիք մը դառնամ, ես իմ կեանքի ամբողջ կէսը անցուսալիք մը դառնամ, ես իմ կեանքի ամբողջ կէսը անցուցեր եմ կարօտութեան, ցաւի, տանջանքի մէջ, ես մինչ ցեր եմ կարօտութեան, ցաւի, տանջանքի մէջ, ես մինչ այս հասակս, մի օր իսկ չեմ տեսեր, բայց ամբողջ հոգաւորս կը բաղձամ, որ իմ կեանքի միւս կէսը եւս, նոյն

ճանապարհէն գնամ, որուն մէջ՝ գէթ գաղափարային, իմ եւ ինձ նմաններուն ծառայած ըլլալու ինքնագոհութիւնը կ'ունենամ: (Ոտքի ելլելով) Ո՛չ, ո՛չ Նուարդ ես թոյլ չեմ տար, որ քու սեռային սէրը յաղթանակէ իմ գաղափարի սիրոյն: Այժմ թոյլ կուտաք որ ես գնամ, չէ՞: (Մի քանի քայլ ետ գնալով):

ՆՈՒԱՐԳ.— (Ոտքի կ'ելլէ, կը մօտեցայ Զաւէնի, կը բռնէ անոր երկու քրտուկները եւ արտասուաբար աչքերով) Լսէ՛ ինձ Զաւէն, ես կը խոստունեմ որ ձեզ չէի ճանաչեր, այժմ միայն հասկցայ ձեզ, եւ հիմա՝ թոյլ կուտամ որ գնաք: Ես այլեւս չեմ փորձեր խանգարել ձեր գաղափարի սէրը, ես կ'զգամ որ դուք գայն աւելի կը սիրէք, քան զիս: Կ'զգամ նաեւ որ ես արդելք մը պիտի ըլլայի ձեզ, ձեր ոտքը կապելով տան չորս պատերին, որպէս զի իմս ըլլայիք, եւ միայն ինձ ծառայէիք: Ո՛չ, ո՛չ Զաւէն, ես այդքան ալ անձնասէր չեմ, ես այլեւս խոչընդոտ չեմ ըլլար ձեր ճամբուն վրայ, ես չեմ ուզեր տեսնել, որ դուք դասալիք մը ըլլաք, ո՛չ Զաւէն ո՛չ, ես չեմ ուզեր որ ձեր հոգին փոքրանայ, դուք մեծ մնացէք, դուք մաքուր եղէք, դուք բարձր կանգնեցէք, ու ես կամովին կը հեռանամ ձեզմէ, ձեր մեծութիւնն ու մաքրութիւնը հեռուէն դիտելու համար: (Յուզուած) Բայց միայն մէկ բան, մէկ բան կը խնդրեմ ձեզմէ, որ դուք խոստանաք ինձ, որ ոչ ոքի հետ պիտի չամուսնանաք, դուք կամ իմս պիտի ըլլաք, կամ ոչ ոքին: (Դառն կերպով լալով, կ'իյնայ աթոռի մը վրայ, իր գլուխը դրած աթոռի թեւին՝ կը հեկեկայ):

ԶԱԻԿՆ.— (Ինքն ալ արտասուելով) Կը խոստանամ Նուարդ, կը խոստանամ: (Յետոյ կը գնայ Նուարդի, իր երկու ձեռքերով կը բռնէ Նուարդի երկու երեսները, անյագօրէն կը նայի անոր աչքերուն մէջ, կը կանգնեցնէ եւ բուռն կերպով քանի մը անգամ կը համբուրէ գայն):

ՆՈՒԱՐԳ.— (Գիւնովցած Զաւէնի համբոյրներէն) Բայց ես ինքս ալ թոյլ պիտի չտամ որ ձեր գաղափարի սէրը մեռցնէ իմ սեռային սէրը: (Կ'իյնայ աթոռին վրայ)

Բայց Աստուած իմ... ես... որքա՛ն պիտի համբերեմ, որքա՛ն պիտի սպասեմ: (Կը հեկեկայ):

ԶԱԻԿՆ.— (Կը նստի Նուարդի աթոռին մէկ թեւին վրայ եւ շոյելով Նուարդի մագերը) Ինձ լսիր Նուարդ, տես ի՞նչ պիտի ըսեմ... լսիր Նուարդ... լսիր:

ՆՈՒԱՐԳ.— (Գլուխը կը վերցնէ, թաշկինակով արտասուեքը կը սրբէ):

ԶԱԻԿՆ.— (Ծիծաղով մը) Նուարդ, դու քիչ առաջ քաջարար ըսիր թէ թոյլ պիտի չտաս, որ իմ գաղափարի սէրը մեռցնէ քու սեռային սէրը: Այժմ ինչո՞ւ կուլաս... դու ցոյց տուիր, որ կամք ունիս, ու այդ կամքին առջեւ կը խորտակուին բոլոր դժուարութիւնները: Այն՝ ինչ որ այսօր կարելի չէ, մի գուցէ վաղը կարելի կը դառնայ, եւ ո՞վ գիտէ թերեւս մեր բաժանումը, չա՛տ չա՛տ ժամանակաւոր է: (Ոտքի ելլելով):

ՆՈՒԱՐԳ.— (Ինքն ալ ոտքի կանգնելով կը բռնէ Զաւէնի քրտուկները) Ուրեմն իմ յոյսերը չե՞ն խորտակուած Զաւէն: (Աւելի մօտեցալով Զաւէնի):

ԶԱԻԿՆ.— (Անգամ մը եւս իր կուծփին կը սեղմէ եւ անյագօրէն համբուրելով) Ո՛չ հոգիս ո՛չ: (Բաժանուելով անկէ) Այժմ կրնամ գնալ, չէ՞:

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) չիմա... անչուտ...: (Դուրս կը գնայ, կը վերադառնայ իր թեւին վրայ ունեցալով Զաւէնի վերաքիւռն եւ գլխարկը, գլխարկը սեղանին վրայ դնելով, վերաքիւռն կը բռնէ) Խնդրեմ հագէք... այսպէս:

ԶԱԻԿՆ.— Բայց թող, ես կարող եմ հագնել: (Վերաքիւռն բռնելով):

ՆՈՒԱՐԳ.— Ո՛չ, ո՛չ, հագէք... խնդրեմ:

ԶԱԻԿՆ.— (Կը հագուի, գլխարկը կ'առնէ, Նուարդի ձեռքը սեղմելով) Գնամ:

ՆՈՒԱՐԳ.— (Բռնած Զաւէնի ձեռքերը) Բայց իմ նամակներուն պիտի պատասխանես չէ՞:

ԶԱԻԿՆ.— (Խնդալով) Այո:

ՆՈՒԱՐԳ.— Երբեմն մեր փողոցէն պիտի անցնի՞ս:

ԶԱԻԷՆ.— Այո, ուրի՞շ:

ՆՈՒԱՐԳ.— Երբ թելեֆոն ընեմ, հոս պիտի դա՞ս:

ԶԱԻԷՆ.— Այո, այո, ուրի՞շ:

ՆՈՒԱՐԳ.— Ուրի՞շ ոչինչ:

ԶԱԻԷՆ.— (հնդալով) Բայց մի բան մոռացար, Նուարդ:

ՆՈՒԱՐԳ.— (Աւելի մօտեցալով) Ի՞նչ:

ԶԱԻԷՆ.— Մոռացար ըսելու, որ ամէն բաժանուելոս ձեզ պէտք է համբուրեմ: (Կրկին կը գրկեղխառնուին, կը համբուրուին, յետոյ միասին դուրս կը մեկնին):

ՏԵՍԻԼ Գ.

Նուարդ եւ Արբուի

ՆՈՒԱՐԳ.— (Ուրախութեամբ ներս մտնելով, կը շրջի սենեակին մէջ, կը վերցնէ «Պաշար» թերթը, կը նստի. թերթին վրայ նայելով) Օ՛հ, բայց ի՞նչ անուշ էին իր համբուրները... Ինչո՞ւ զնաց... Երանի քիչ մըն ալ մնար: (Ոտքի կ'ելլէ, դաշնակին կը մօտեցայ) Բայց շատ ուշ է արդէն: (Կը նստի եւ մտազբաղ) Բայց ի՞նչ պիտի ընեմ... նա շատ յամառ է... գիտեմ՝ իր վերջին խօսքերը ըսաւ, որպէս զի չի ամենջուրիս ես... նա շամուսնանար... (Յանկարծ ուրախանալով) Շատ ճիշտ եմ, ճիշտ այդ է պատճառը... մենք երկուքովնիս գաղափարի նոյնութիւնը չունինք: Հասկցա՞ր, հասկցա՞ր: (Կը ցատկէ, ոտքի կ'ելլէ, եւ դէպի դուռը գնալով) Սրբուհի, Սրբուհի, եթէ չես ննջեր, վար եկուր:

ՍՐԲՈՒՀԻ.— (Ներս մտնելով) Ինձ պէտք ունի՞ք, Օրիորդ:

ՆՈՒԱՐԳ.— Անշուշտ, եկուր: (Կը գրկէ եւ Զաւէնի ձեւերով կը համբուրէ, խնդալով):

ՍՐԲՈՒՀԻ.— (Ինքն ալ ուրախ) Բայց ի՞նչ էք եղեր, ի՞նչ է պատահեր ձեզ, Օրիորդ:

ՆՈՒԱՐԳ.— (Խնդալով) Նոր բան մը եղեր եմ, մէկ ժամուան մէջ, շատ բան է պատահեր ինձ:

ՍՐԲՈՒՀԻ.— (Կը համբուրէ Նուարդը) Ձեմ գիտեր

թէ ի՞նչ էք եղեր, չեմ ալ գիտեր թէ ի՞նչ է պատահեր ձեզ, բայց չեմ ալ կրնար արցունքներս դսպել: (Թաշկիւնակով աչքերը սրբելով) Երբ ձեզ այսքան ուրախ կը տեսնեմ: Դուք չէք գիտեր Օրիորդ, բայց ամբողջ երեք շաբաթ է որ մեր տունը սուգի տուն էր դարձեր: Խեղճ ծընողքը շատ ամենջուրեան, անոնք սիրտը կտոր կտոր կ'ըլլար երբ ձեզ տրամած կը տեսնէին, բայց ի՞նչ ընեն խեղճները, միայն քեզ ունին. իսկ քու ալ խնդալը չի տեսան երեք շաբաթէ ի վեր: Օ՛հ, որքան ուրախ պիտի ըլլան, երբ քեզ այսպէս ուրախ տեսնեն:

ՆՈՒԱՐԳ.— Կը սխալիք Սրբուհի, անոնք երէկ՝ տրամութեանս համար մտահոգուեցան, իսկ վաղն ալ ուրախութեանս համար պիտի մտատանջուին:

ՍՐԲՈՒՀԻ.— Բայց այդ չէ կարելի Օրիորդ:

ՆՈՒԱՐԳ.— Այո Սրբուհի, ճիշտ այդպէս ալ պիտի ըլլայ, մինչեւ որ դրամը պաշտելէ դադրին, մինչեւ որ վերջ տան նախապաշարումներուն, մինչեւ որ գիտակցին որ մարդիկ բոլորն ալ հաւասար են, մինչեւ որ մէկ կողմ թողուն անձնասիրութիւնը եւ ուրիշներու մասին ալ մը տածեն:

ՍՐԲՈՒՀԻ.— (Զարմացած) Բայց իսկապէս, դուք բան մը եղեր էք օրիորդ, այդ ամբողջը նորութիւններ են ինձ համար:

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) Դեռ շատ նորութիւններու ականատես պիտի ըլլաս, ճիշտ է, որ ես բան մը չեմ եղեր դեռ, (խորհելով) բայց շուտով պիտի ըլլամ: (Կատակելով) Հասկցա՞ր, ես ինքս ալ ընկերվարական պիտի ըլլամ, սօցիալիստ, պօլիտիկ, բոմբակաւ պիտի ըլլամ, հասկցա՞ր:

ՍՐԲՈՒՀԻ.— (Խնդալով) Կը կատակէք ինձ հետ, օրիորդ:

ՆՈՒԱՐԳ.— (Թեւեմ քաշելով) Լաւ, լաւ, հոս եկուր, նստէ: (Ինքն կը նստի) Նստէ... հոս քովս, նստէ... (Կը քաշէ եւ կը նստեցնէ):

ՍՐԲՈՒՀԻ.— (Կը նստի) Լաւ, ի՞նչ պիտի խօսիս:

ՆՈՒԱՐԳ.— (Խնդալով) ձիւտը պիտի խօսիս Սրբու-  
հի, ուեւէ տղայ սիրած էս:

ՍՐԲՈՒՀԻ.— (Ոտքի ելլել կ'ուզէ փախչելու համար):

ՆՈՒԱՐԳ.— (Թոյլ չի տար, ամուր բռնելով) Ըսէ  
սիրե՞ր էս:

ՍՐԲՈՒՀԻ.— (Կը շիկնի, գլխով այո կ'ըսէ):

ՆՈՒԱՐԳ.— Է՛յ, Ի՞նչպէս կ'զգայիր այդ օրերուն:

ՍՐԲՈՒՀԻ.— Չեմ կարող բացատրել, մի քիչ տարօ-  
րինակ:

ՆՈՒԱՐԳ.— (Խնդալով) Կը քնանայի՞ր:

ՍՐԲՈՒՀԻ.— (Խնդալով) Անշուշտ, բայց միշտ ե-  
րազներու մէջ զինքը կը տեսնէի:

ՆՈՒԱՐԳ.— Իսկ ցերեկնե՞րը:

ՍՐԲՈՒՀԻ.— Գործ չունեցած ատեններս, իր մասին  
կը մտածէի:

ՆՈՒԱՐԳ.— Բայց Ի՞նչ ընել կը մտածէիր, Լթէ քեզ  
չառներ:

ՍՐԲՈՒՀԻ.— Արդէն շատու, էս ալ մտածածս ըրի:

ՆՈՒԱՐԳ.— (Զարմացած) Ի՞նչ ըրիր:

ՍՐԲՈՒՀԻ.— (Խնդալով) Չե՞ս տեսներ, քեզի աղա-  
խինութիւն: (Երկուքովնին քահ քահ կը խնդան):

ՆՈՒԱՐԳ.— Լաւ, անկէ յետոյ Ի՞նչ ըրիր, մի ուրիշը  
չի սիրեցի՞ր:

ՍՐԲՈՒՀԻ.— (Զի պատասխաներ, կը կարմրի, կ'ու-  
զէ կրկին փախչիլ):

ՆՈՒԱՐԳ.— (Թող չի տար) Բայց ըսէ, էս ալ իմ սի-  
րածիս անունը քեզի պիտի յայտնեմ:

ՍՐԲՈՒՀԻ.— (Քաջալերուած) Բայց՝ դու ալ պիտի  
ըսես, հա՛:

ՆՈՒԱՐԳ.— Խոստացայ չէ՞, հիմա դու ըսէ, թէ ո՞վ  
կը սիրես:

ՍՐԲՈՒՀԻ.— Նմանեաններու տղան, ծանը:

ՅԵՍԻ, Ե.

Նուարդ, Սրբուհի եւ Տէր եւ Տիկին Տարբերեան

ԳՈՒՌ.— (Զանգը կը հնչուի, Սրբուհի ոտքի կը  
ցատկէ եւ դուռը կը վագէ):

ՆՈՒԱՐԳ.— (Անպարտօք «Պայքար»ը ատնելով կը  
նստի եւ կը կարդայ):

ՏԱՐԲԵՐԵԱՆ.— (Ներս կը մտնեն Տէր եւ Տիկին  
Տարբերեաններ) Միայնակ է՞ք աղջիկս:

ՆՈՒԱՐԳ.— Ոչ հայրիկ, Սրբուհին հոս էր, կը խօ-  
սակցէինք:

ՏԻԿ.— ՏԱՐԲ.— Պրն. Պօղոսը շուտ մեկնեցա՞ւ:

ՆՈՒԱՐԳ.— Այո մայր, հազիւ կէս ժամ մնաց, յե-  
տոյ մեկնեցաւ:

ՏԻԿ.— ՏԱՐԲ.— (Խոժոռ ակնարկ մը տալով) Անշուշտ  
կրկին վշտացուցիր զինքը:

ՆՈՒԱՐԳ.— Չինքը վշտացնող բան մը չըրի մայր,  
բայց Լթէ վշտացաւ, ինչո՞վ կարող եմ օգնել:

ՏԻԿ.— ՏԱՐԲ.— (Նեղացած) Դուք ձեզ կը տեսնէք,  
Նուարդ, Ի՞նչ ըսել է թէ ինչով կարող էս օգնել:

ՆՈՒԱՐԳ.— Ի՞նչ կարող եմ ընել մայր, էս քանիցս  
ձեզ յայտնած եմ, որ էս զինքը չեմ սիրեր, չեմ ամուս-  
նանար. իսկ դուք՝ փոխանակ այդ իրեն յայտնելու, կ'ե-  
րեւի աւելի քաջալերած էք, այնպէս որ ինքն ալ այս ե-  
րեկոյ, ատանց ինձ կանխաւ բան մը ըսելու, խոչոր բակ-  
լայի մը չափ ազամանդ մատանի մը բերած կ'ուզէր հետս  
նշանուիլ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ.— (Որ մինչ այդ սենեակին մէջ կը շըր-  
ջէր, կը նստի) Լաւ, դուք Ի՞նչ ըրիք:

ՆՈՒԱՐԳ.— Ի՞նչ ընէի հայր, մերժեցի:

ՏԱՐԲԵՐԵԱՆ.— (Զայրացած) Մեր... թե... ցիւր, ու-  
րեմն կոխով բաժնուեցա՞ք, չե՞ս ալ ամաչեր կ'ըսես ալ:

ՆՈՒԱՐԳ.— Այո հայր, բայց Ի՞նչ կընայի ընել:

(Կուլայ):

ՏԱՐԲԵՐԵԱՆ.— (Սաստիկ գայրացած իր գուլթը

ձեռքերուն մէջ առած) Ի՞նչ կարող էիր ընել... մեր-  
ժե...ցիր:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Իշտէ այս է աշխարհի գործը կարա-  
պետ, աղջիկ մեծցուր, չարչարուէ, տանջուէ, ամէն պէտ-  
քերը հոգայ, մեծցուր՝ որ վերջն ալ խօսքդ սէնթի մը իսկ  
չառնեն:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Բարկացած) Պօղոսը չե՞ս ուզեր...  
բսէ՛ ըսէ տեսնեմ, ո՞վ կ'ուզես:

ՆՈՒԱՐԳ. — Բայց հայր, ես Պօղոսը չեմ սիրեր, ես  
չեմ ուզեր ամուսնանալ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Աւելի զայրացած) Ո՛չ, ո՛չ, դու  
չես կարող խարել զիս, Պօղոսը չես սիրեր, սիրադ այդ  
անկուտի, անկրօն, անաստուած, գործաւորի կտորին ես  
տուեր, չե՞:

ՆՈՒԱՐԳ. — (Պաղատագին մօրը դառնալով) Մա՛յր,  
ի՞նչ կ'ուզէք ինձմէ, ինչո՞ւ կը նեղէք զիս, ի՞նչ եմ ըրեր  
ձեզի: (Լալագին ինքնիրեն) Կարծես աւելորդ մէկը ըլլամ  
տան մէջ, կարծես բեռ մըն եմ իրենց վրայ, կարծես  
կ'ուզեն աղատուիլ ինձմէ, ո՛չ, Աստուած իմ, կարծես  
իրենց դաւակը չեմ:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Ազդուած ինքն ալ կ'արտասուէ):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Ոտքի ելլելով աւելի զայրացած)  
Մեր աղջիկն էիր մինչեւ այսօր, մեր աղջիկն ալ կը մնաս,  
եթէ մեր կամքովը կ'ամուսնանաս Պօղոսին հետ:

ՆՈՒԱՐԳ. — (Լալագին) Բայց հայր, ես ի՞նչպէս  
կարող եմ ամուսնանալ չի սիրած տղուս հետ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Կը խոյանայ Նուարդի վրայ, բը-  
ռունձները սեղմած) Անպիտան աղջիկ... չես սիրեր  
Պօղոսը... այդ սրիկան, այդ պարապ տղան կը սիրես...  
մեզ խայտառակ ընել կ'ուզես: (Բռունձք բարձրացու-  
ցած):

ՆՈՒԱՐԳ. — (Գլուխը քեւերուն տակ ծածկելով)  
Հա՛յր...:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Ինքիրովէն ելած) Ո՛չ, ո՛չ, ես քո  
հայրը չեմ, դու իմ դաւակս չես այլեւս, երբ առանց իմ

կամքին այդ սրիկային հետ կ'ուզես ամուսնանալ:

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Արցունքները սրբելով) Կարապետ,  
թող Պօղոսի հետ չամուսնանայ, ի՞նչ կ'ըլլայ, տղայ  
չկա՞յ, միայն թէ այդ Զաւէնին հետ չամուսնանայ:

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Ամուսնանա՛յ... Զաւէնին հետ,  
այդ այս տան մէջ տեղի չունենար: Կը հասկնա՞ս:

ՆՈՒԱՐԳ. — (Բարձրօրէն կը հեկեկայ):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — Մինչեւ վաղը, կը հասկնա՞ս, մին-  
չեւ վաղը կամ այդ շան անունը չես յեշեր, կամ այլեւս  
իմ դաւակս չես, գնա ո՞ւր որ կ'ուզես, առ ո՞վ որ կ'ու-  
զես, ապրէ ի՞նչ կերպ որ կրնաս, բայց իմ տանս մէջ  
քեզի տեղ չկայ, քեզի հաց չկայ: (Կ'ուղղուի դէպի դու-  
ռը):

ՆՈՒԱՐԳ. — (Ոտքի կանգնելով, արտասուալից աչ-  
քերով) Լաւ, հայր լաւ, ես կը գնամ, ես կը մեկնիմ վա-  
ղը, ես ալ կը գնամ գործելու եւ ապրելու ինձ նման մի-  
լիոնաւորներու կողքին, բայց այն ատեն, գէթ ազատ  
կ'ըլլամ, իմ սիրածը առնելու... Ես կը գնամ հայր, ես  
այլեւս չեմ ուտեր քու հացը, ես հոս կը թողում ամէն  
բան, որ մինչեւ այսօր գներ ես ինձ համար, ես կը թո-  
ղում տունդ, բայց դու զիս՝ կարող չես ալ քու գորգե-  
րուդ նման ուզած յաճախորդիդ ծախել: Ես՝ ձեզ կը թո-  
ղում վաղը, բայց եթէ այս էր ձեր ընելիքը, ինչո՞ւ, ին-  
չո՞ւ զիս ծնեցաք: (Կ'իյնայ նստարանին վրայ, դառնօրէն  
հեկեկալով):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Զգածուած, իր արցունքները սրբ-  
ելով դուրս կը մեկնի):

ՏԻԿ. ՏԱՐԲ. — (Ոտքի կ'ելլէ, կը մօտենայ աղջկան,  
արտասուալից աչքերով կը գրկէ Նուարդը եւ կը համ-  
բուրէ մի քանի անգամ) Ո՛չ, ո՛չ աղջիկս, դու տեղ մըն  
ալ չես գնար, դու հոս կը մնաս, միշտ ինձ մօտ, միշտ իմ  
քովը, դու իմս ես, իմ դաւակը, իմ արիւնէն, իմ մսէն...  
դու իմս ես... ոչ ոքիւր... միայն իմս... ես եմ ծներ  
դու հոգիս, դու դեռ մայր չես եղեր, որ գիտնաս մօր հո-  
գին, մօր սիրտը, մի՛ մի լար աղջիկս... ես չեմ կարող քո

լացը լսել, քո արտասուքը տեսնել... մի՛ լար... մի լար ձագս: (Ինքն ալ դառնօրէն կ'սկսի լալ):

ՆՈՒԱՐԴ.— (Իր արցունքները սրբելով) Բայց մայր, չի՞մա ալ դուք կուլաք:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— Ի՞նչպէս չի լամ աղջիկս, ի՞նչպէս չի լամ, մի՛ մի առնէր Պօղոսը, թող մի ուրիշը ըլլայ, ո՞վ քեզ չի սիրեր, մի ուրիշը թող ըլլայ:

ՆՈՒԱՐԴ.— Մայր, բայց ես չեմ ուզեր ամուսնանալ:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— (Ուրախութեամբ) Ուրեմն Ձաւէնն ալ չե՞ս առնէր:

ՆՈՒԱՐԴ.— Ոչ մայր, Ձաւէնն ալ չեմ առնէր, ճիշտ է, ես կը սիրեմ զինքը, բայց նա մերժեց զիս, իսկ ես լաւագոյն պատճառներ ունիմ՝ այն ալ չառնելու:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— (Կրկին կը համբուրէ) Բայց հոգիս, առաջ ինչո՞ւ չըսիր, որ այսքան քեզ նեղեցինք, որ այսքան տանջուեցանք: Կը ցաւիմ աղջիկս, կը ցաւիմ որ քեզ լացուցինք, ո՞՛հ, ինչքա՞ն անգութ եղանք մենք հոգիս, (Կը համբուրէ):

ՆՈՒԱՐԴ.— (Ուրախութեամբ) Մայր, ալ պիտի չի նեղէ՞ք զիս:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— Ո՛չ, աղջիկս ոչ: (Կը համբուրէ):

ՆՈՒԱՐԴ.— Ալ պիտի չի խօսի՞ք իմ ամուսնութեան մասին:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— Ո՛չ, աղջիկս ոչ:

ՆՈՒԱՐԴ.— Մայր, ճիշտն ըսէ, զիս առաջուան պէս պիտի սիրե՞ս:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— (Կրկին լալ սկսելով) Ե՞րբ, ե՞րբ չենք սիրեր քեզ աղջիկս, մենք միշտ քու երջանկութեան մասին ենք մտահոգուած, եթէ նոյն իսկ անգիտակցարար քեզ նեղեր ենք, գիտցիր՝ որ կրկին քու լաւութեանդ համար ենք ըրեր:

ՆՈՒԱՐԴ.— (Կը գրկէ մայրը, կը համբուրէ) Մայր, կրկին կուլա՞ս: (Իր թաշկինակով մօր արցունքները կը սրբէ):

ՏԻԿ. ՏԱՐԲ.— Ձեռ գիտեր աղջիկս, ամէն անգամ որ ձեր վրայ նայիմ, աչքիս առջև կուզայ ձեր երախայտութիւնը, ինչե՛ր քաշեր եմ, ի՞նչ հաճոյքով եմ ծառայել քու բոլոր քմահաճոյքներուն: Սիրեր եմ, գրկեր եմ, պաքեր եմ, եւ չիմա՛ որ մեծ աղջիկ ես դարձեր, բայց կրկին իմ պէյպի ես, ուրիշ մը չունիմ, եւ երբ կը մտածեմ որ վերջապէս մէկը՝ Պօղոսը թէ Ձաւէնը, վերջապէս օտար աղայ մը, քեզ ինձմէ պիտի դատէ, պիտի տանի, ո՞՛հ... բայց ի՞նչ կրնամ ընել, աշխարհի օրէնքն է:

ՆՈՒԱՐԴ.— (Օգտուելով մօր վիճակէն) Ոչ մայր, մի այդպիսի օրէնք չկայ, ես չեմ ուզեր ամուսնանալ, ես կ'ուզեմ միշտ քու քով մնալ, միշտ քու պէյպին ըլլալ:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— (Կրկին կը համբուրէ աղջիկը, ոտքի կ'ելնէ) Գնանք աղջիկս, գնանք: (Կը գնան):

(Վարագոյր)

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

ժամանակ — երեք ամիս յետոյ  
եղանակ — Գարուն

ՏԵՍԻԼ Ա.

(Բեմը կը ներկայացնէ նմանեաններու ննջատենեակ-  
հիւրանոցը: Կահաւորուած է աղքատիկ կերպով, սենեակ-  
կին մէկ կողմը կայ գոցուող անկողին մը, մէջտեղը սե-  
զան մը, մէկ անկիւնը դաշնակ մը եւ հոս ու հոն իրարու  
չի նմանող աթոռներ, պատերէն կախուած են ազգային  
կարգ մը հերոսներու նկարները: ԾԱՆՈԹ.— Այս Արա-  
ուածին մէջ ամէն ոք հագուած է գարնանային զգեստ-  
ներ):

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Հագուած աղքատիկ տնական ըզ-  
գեստներ, նստած ձեռագործով կ'ըրաղի):

ՍԻՐԱՐԲԻ.— (Նստած անկողնին վրայ, բովը կարգ  
մը գրքեր, ձեռքը թուղթ եւ մատիտ, իր դասերով կ'ըզ-  
րաղի):

ՆՄԱՆԵԱՆ.— (Գործաւորական զգեստներով, բնատ  
աչքերով, ներս կը մտնէ կուտրտուելով, կնոջը դառնա-  
լով) *Կերակուրը պատրաստ է:*

ՏԻԿ. ՆՄԱՆ.— *Ի՞նչպէս թէ պատրաստ է, անշուշտ  
պաղեցաւ, երեք ժամ է կը քնանաս, հիմա երևր կերակուր  
կը փնտռես: Աղէկ սորվեցար ծուլութիւնը Միսաք, երեք  
ամիս է ծոյլ՝ ծոյլ՝ քնանալէ զատ բան մը ըրած չունիս:*

ՍԻՐԱՐԲԻ.— (Խոժոռ կերպով մօրը նայելով) *Մայ-  
րիկ...: (Յետոյ կը գնայ եւ հօրը ձեռքը բռնելով) Նստէ  
հայրիկ, ես հիմա կը դնամ կը տաքցնեմ: (Գուրս կը զը-  
նայ):*

ՆՄԱՆԵԱՆ.— (Կը հանէ իր փայփը, կը նստի, ծխա-  
խոտ լեցնելով) *Ճիշտ ես կնիկ, լաւ սորվեցայ ծուլու-  
թիւնը, երեք ամիս է քնանալէ զատ ուրիշ բան ըրած չու-  
նիմ: (Գլուխը շարժելով) Ի՞նչ, ի՞նչ չուտ կը մոռացուի*

*ամէն բան... ապերա՛խտ աշխարհ... 21 տարի անընդ-  
հատ, ստրուկի մը, գերիի մը նման, երկաթի գործա-  
բաններու ծուխին, փոշիին մէջ կեանքդ մաշեցուր, ի՛նչ  
է կին պիտի պահես, զաւակներ պիտի մեծացնես, եւ հի-  
մա՛ որ իմ կամքէն բոլորովին անկախ պատճառներով,  
գործէ զրկուած եմ, գործ չեմ կարող գտնել... ծոյլ եմ  
եղեր... կը քնանամ եղեր... Օ՛հ... ապերա՛խտ աշ-  
խարհ:*

ՏԻԿ. ՆՄԱՆ.— *Բայց Միսաք, դուն չես գործեր,  
տղէդ խեղ մը չկայ, պարտքերու տակ խեղդուած՝ տան  
երկու ամսականը չենք վճարած, նպարտվածառին երկու  
շարաթէ ի վեր բան մը վճարած չունինք: Դաշնամուրի  
մարդէն նօթիս է եկեր: Իսկ իմ առած փէյս ալ, հազիւ  
հազ չոր հացի մը կը բաւէ: Ըսէ Միսաք, ի՞նչ պիտի ըլ-  
լայ մեր այս վիճակը, ո՞ւր պիտի հասնի:*

ՆՄԱՆԵԱՆ.— *Բայց կնիկ, ես գիտե՞մ թէ ի՛նչ պիտի  
ըլլայ, մինչեւ այսօր ինչ որ եղեր է, անշուշտ ասկէ յե-  
տոյ ալ նոյնը կ'ըլլայ:*

ՆՄԱՆԵԱՆ.— *Բայց ի՞նչ է եղեր մինչեւ այսօր:*

ՆՄԱՆԵԱՆ.— *Ի՞նչ է եղեր... ինչ որ Պրն. Զաւինը  
բաւ. «Ժամանակակից գործաւոր հայրը, ստրուկ մըն է,  
մեքենայ մըն է, գործելու եւ քայքայուելու, որպէս զի  
իր կինը եւ զաւակները պահէ, յետոյ օր մը չի տեսած  
ձերանալու եւ մահանալու»: Ահա այս չէ՞ եղածը, այս  
չէ՞ ըլլալիքը:*

ՏԻԿ. ՆՄԱՆ.— *Բայց մինակ դու չես մաշուողը, քայ-  
քայուողը, ես ինքս ալ կը գործեմ չէ՞:*

ՍԻՐԱՐԲԻ.— (Ներս կուգայ եւ կանգնած իր ծնո-  
ղաց կը լսէ):

ՆՄԱՆԵԱՆ.— *Ճիշտ ես որ քանի մը ամիսներէ ի վեր  
դու ալ կը գործես, (փայփը քաշելով) բայց երանի չի  
գործէիր, քանի գործել սկսած ես, գլխուս պօս մը դար-  
ձեր ես, հիմա՛ ալ զիս մտիկ ընող չկայ, տղադ, աղջիկդ  
միայն քեզ կը լսեն, կարծես ես այս տանը մարդը չեմ,  
կարծես ես ստուեր մըն եմ տան մէջ:*

ՍԻՐԱՐԲԻ.— (Հօրը մօտ գնալով) Ո՛չ հայրիկ, ես քեզ աւելի շատ կը սիրեմ, քան մայրիկը: (Դուռը կ'ուղղուի) Տեսնեմ կերակուրդ տաքացա՞ւ: (Դուրս կը գնայ. Բիչ յետոյ վերադառնալով) Հայրիկ պատրաստ է:

ՆՄԱՆԵԱՆ.— Ախորժակ չունիմ աղջիկս, թող մնայ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Ելի՛ր Միսաք, ելի՛ր կերակուրդ կեր, ի՞նչ յուսահատ յուսահատ նստեր ես, Աստուած բան մը կ'ընէ, յոյսդ մի կտրեր:

ՆՄԱՆԵԱՆ.— (Գլուխը շարժելով) «Աստուած բան մը կ'ընէ», բայց այդ Աստուածը եթէ իրաւ բան մը կըրնար ընել, մինչեւ հիմա ըրած պէտք էր ըլլար: «Յոյսդ մի կտրեր», ճիշտ ես, եթէ այդ պարսպ յոյսն ալ չըլլայ, պէտք է ինքզինքնիս ջուրը նետենք: Բայց սա քանի՞ երրորդ անգամն է, որ կը յուսամ եւ կը յուսախարուիմ: Ամերիկա գալուս յուսացի, որ շուտով մի քանի հարիւր տոյար կ'աւելցնեմ, երկիր կուզամ եւ ձեզ բոլորդ գլուխս հաւաքած՝ հանգիստ կ'ապրինք... Եղա՞ւ: Յետոյ մի քանի հարիւր տոյար անկէ առկէ գտայ, ձեզ զրկեցի, յուսալով որ հոս կուզաք, ինձ կ'օգնէք, տուն սեղ կ'ըլլանք... Եղա՞նք:

ԳՈՒՌ.— (Դուռը կը գարնուի):

## ՏԵՍԻԼ Բ.

Նոյնիս եւ Զաւէն

ՍԻՐԱՐԲԻ.— (Կը ցատկէ, դուռը կը բանայ) Լաւ որ եկար: (Զեռփէն փաշելով ներս կը բերէ. Տէր եւ Տիկին Նմանեաններ ուռփի կը կանգնին եւ նստարան ցոյց կուտան) Հրամայէ՞ք նստեցէք Պրն. Զաւէն, հոս, այստեղ:

ԶԱԻԷՆ.— (Կը նստի Սիրարփիի կողքին գոցուած անկողնին վրայ) Է՛յ, ի՞նչպէս էք:

ՏԻԿ. ՆՄԱՆԵԱՆ.— Լաւ լաւ, դուք ի՞նչպէս էք:

ԶԱԻԷՆ.— Մենք ալ լաւ, եթէ լաւ կարելի է ըլլալ:

ՆՄԱՆԵԱՆ.— Է՛յ տեսնենք, ի՞նչ նորութիւն ունիք:

ԶԱԻԷՆ.— Մի առանձինն նորութիւն մը չունիմ, քիչ

յետոյ ժողովի մը պիտի գնայի, մի քիչ կանուխ էր, այս կողմէն կ'անցնէի, ըսի անգամ մը ներս մտնեմ, տեսնեմ ի՞նչ կ'ընեն:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Շատ շնորհակալ ենք Պրն. Զաւէն, բայց դուք արդէն խոստացաք որ այս երեկոյ հոս պիտի ըլլաք, մանաւանդ որ ուրիշներ ալ պիտի գան:

ԶԱԻԷՆ.— Մի դուցէ քիչ մը ուշանամ, բայց անպայման կուզամ:

ՆՄԱՆԵԱՆ.— Պրն. Զաւէն, ի՞նչ պիտի ըլլայ մեր այս ներկայ դրութեան վերջը:

ԶԱԻԷՆ.— Ո՞ր մէկ դրութեան կ'ակնարկէք, Պրն. Նմանեան:

ՆՄԱՆԵԱՆ.— Այս համատարած գործերու թուլութիւնը, անգործութիւնը, աւագակութիւններու, անձնասպանութիւններու շատանալը, եւայլն: Ամբողջ երեք ամիս է գործ մը կը փնտռեմ, չեմ կարող գտնել, թէ ո՛չ՝ նախագահական ընտրութիւններու հետ կապ ունի:

ԶԱԻԷՆ.— Ձեր թուած կարգ մը երեւոյթները, ինչպէս աւագակութիւն, անձնասպանութիւն, արդիւնք են անգործութեան, իսկ անգործութիւնը, ինքն ալ արդիւնք է գերարտադրութեան, եւ ժողովուրդի սպառողական կարողութեան նուազումին: Այնպէս որ նախագահական ընտրութիւնները ոչինչով չեն կարող ազդել գործերու ընթացքին վրայ: Անցեալ տարիներու այս երկրի մէջ գործերու առատութիւնը պէտք է վերագրել միայն մեծ պատերազմի ընթացքին, Եւրոպայի քայքայուած արնտեսութեան, իսկ հիմա որ Եւրոպան սկսած է կազմակերպել իր ճարտարարուեստը, այդ է որ մեծապէս կ'անդադրանայ Ամերիկեան գործերուն վրայ:

ՆՄԱՆԵԱՆ.— Բայց Պրն. Զաւէն, ո՞ւր պիտի հասնի ասոր վախճանը, այսպէս չէ կտրելի շարունակուի:

ԶԱԻԷՆ.— Այսպէս ալ կը շարունակուի, մինչեւ որ հասնի ուղղակի հոն՝ ուր որ հասաւ Ռուսիոյ վախճանը:

ՆՄԱՆԵԱՆ.— Ըսել կ'ուզէք հոս ալ պօլշեփկութիւն պիտի գայ:

ԶԱԻԷՆ.— Այո, ճիշտ այդպէս, ներկայ դրութեան, անգործութեան, թշուառութեան վերջ տալու ուրիշ միջոց, ուրիշ կերպ չկայ:

ՏԵՍԻԿ Գ.

Նոյքք եւ ձան

ՃԱՆ.— (Ներս մտնելով խոժոռ աղնարկ մը տալով Զաւէնին) Բարեւ Պրն. Զաւէն, բարի էք եկեր:

ԶԱԻԷՆ.— Բարեւ, բարեւ ձան: (Կը խօսակցին Սիբարբիի հետ):

ՃԱՆ.— Մայր, կերակուրս պատրաստ է:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Նեղացած) Երբ անօթենաս, այն ատեն միայն տուն դադը միտքը կ'իյնայ:

ՃԱՆ.— Ի՞նչ... պօրտս չե՞մ վճարած, դուրս գնալու մասին ալ խօսելու իրաւունք չունիք, ես այժմ 20 տարեկան եմ, դու ալ պօսս չես, հոս Ամերիկա է, ոչ թէ ետ մնացած Թուրքիա:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Ամերիկա ըլլալով ի՞նչ կ'ըլլայ, թէ ոչ անունը փոխեցիր, կը խորհիս թէ գլուխդ ալ փոխեր ես:

ՃԱՆ.— Անշուշտ փոխուեր եմ, չէն գիտաւ իսրմպը կարծեցիր, որ էջի պէս, ուր որ քչես, գնամ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Ծաղրակամ) Էֆէրիմ տղաս, բաւական զարգացեր ես, ալ խրատի պէտք չունիս:

ՃԱՆ.— Անշուշտ խրատի պէտք չունիմ, ես իմ ըրածս գիտեմ, ես իմ հասկցած ձեռով կեանքս կը վայելեմ:

ԶԱԻԷՆ.— Ուրեմն կեանքը կը վայելես ձան, է՞ջ:

ՃԱՆ.— Անշուշտ կը վայելեմ, քեզի պէս բանս գործըս ժողովուրդը չեն, ես երազներու, ցնորքներու չեմ հաւատար, այսօր կամ՝ վաղը չկամ, ի՞նչ որ ընեմ այն քովս կը մնայ:

ԶԱԻԷՆ.— Էֆէրիմ ձան, փիլիսոփայ ես դարձեր պէ:

ՃԱՆ.— Ի՞նչ, կը ծաղրե՞ս զիս:

ԶԱԻԷՆ.— Ո՛չ, ձան ոչ, ես չեմ սիրեր ծաղրել սա-

կայն խորասպէս կը ցաւիմ որ դուք ձեր չի գիտնալը իսկ չէք գիտեր, եւ սկսած սրճարանի փիլիսոփայութիւններ ընել ինձ:

ՃԱՆ.— Լա՛ւ լաւ, իմ չի գիտնալս ինձի կը վերաբերի:

ԶԱԻԷՆ.— Բայց ձան, բաներ կան որ պէտք է գիտնաս, դու այլևս երեխայ չես, փոխանակ փողոցները ուղքտալու, սրճարանները խաղալու, մուվիցի փիքչըրներէն դուրս չելլելու, միթէ աւելի լաւ չե՞ր ըլլար, որ գիշերային վարժարան մը յաճախէիր, մի քիչ անգլիերէն սովորէիր, որ գէթ յետոյ պատեհութիւն կ'ունենայիր մի արհեստանոց մտնելու, արհեստ մը սովորելու եւ այդպէսով ծնողքիդ մի քիչ օգնելու:

Դու փոքր չես ձան, այժմ դու պէտք է ըմբռնես որ պարտականութիւններ ունիս հանդէպ՝ եթէ ոչ ընկերութեան, գէթ քո ծնողքին, որոնք մինչեւ այս հասակը քեզ խնամեր են, քեզ մեծցուցեր են, բայց այդ ալ մէկ կողմ, նոյն իսկ դու քեզի համար, քո ապագային համար:

Նայիր անգամ մը ծնողքիդ վրայ, երկուքն ալ նիհարացեր, կմախք դարձեր են, նայիր անգամ մը, մասնաւորապէս խեղճ հօրդ վրայ, որ աւելի քան քսան տարիներէ ի վեր երկաթի գործարանները մաշեր հայեր է: Իսկ այժմ՝ արդէն ծերացեր է ու վաղը եթէ գործերը շատ իսկ ըլլան, նա անընդունակ կ'ըլլայ գործելու, եթէ նոյն իսկ ինք կամք եւ ոյժ ունենայ գործելու, գործատէրերը զինքը չեն վարձեր, որպէս ծերացած, անպէտ դարձած մարդ:

ձան, ես գիտեմ որ ձեր ընտանիքը նեղ դրութեան մէջ է, ես գիտեմ որ դուք պարտքերու տակ էք: Ուրեմն ինչո՞ւ, ինչո՞ւ դու եւս չի մտահոգուիս տան գործերով, ընտանիքի հոգսերով, ինչո՞ւ դու եւս չօգնես ծնողքիդ եւ այդպէսով, գէթ մի քիչ թեթեւցնես անոնց ծանր բեռը:

Ես քիչ առաջ լսեցի քո մօրդ ուղղած խօսքերդ, որ պօրտ կը վճարես եղեր, ամօթ է այդ ձան, ամօթ է: Ոչ մէկ զաւակ, ոչ ոք այս աշխարհի վրայ, կարող է պօրտ

վճարելով իր պարտականութիւնը կատարած ըլլալ հանդէպ իր ծնողքին: Մի տարի է որ շարաթական հինգական տուր կը վճարես տանը, եւ կը խորհիս թէ արդէն շատ մեծ բան է որ վճարած ես: Բայց ո՞վ, ո՞վ վճարեց քու պօրտերը մինչեւ քսան տարեկան հասակդ, եթէ ոչ հայրըդ: Հինգ տուր կը վճարես տանը, եւ կը խորհիս որ ատով իսկ հասուցած կ'ըլլաս մօրդ այն բոլոր տանջանքներուն համար, որ նա կրեր է, քեզ ծնելէն մինչեւ այսօր: Ամօթ է այդ ձան, ամօթ է: Դու երեխայ չես:

ՃԱՆ.— (Զգաճուած) Բայց ի՞նչ կրնամ ընել, Պրն. Զաւէն:

ՁԱԻԷՆ.— Օ՛ շա՛տ բան, ձան, շա՛տ բան կարող ես ընել:

ԴՈՒՌ.— (Դուռը կը գարնուի) —

ՄԻՐԱՐԲԻ.— (Կը բանայ, յետոյ դառնալով) Մայրիկ տանտէրն է:

ՏԵՍԻԼ Դ.

Նոյնիք եւ Տանտէր

ՏԱՆՏԷՐ.— (Ներս մտնելով, ձեռքը թուրք մը) Բարեւ ձեզ: (Ընդհանուր տխրութիւն մը) Պրն. Նմանեան, անշուշտ հինգ օրեայ ոթիս ստացաք: Երկու ամիս է վարձք չէք վճարած, միշտ այսօր, վաղը ըսելով մինչեւ հիմա զիս խաղցուցիք, բայց վաղը ոթիս վերջին օրն է, այնպէս որ եթէ ճիշտ հիմա երկու ամսականս չի վճարէք, վաղը երեկոյ իսկ ձեր բոլոր ունեցածը փողոցը կը գանձէք, իսկ այս դաշնամուրն ալ վար կը դնեմ վարձքիս տեղը, այն ալ եթէ վճարած էք, եթէ ձեզի կը պատկանի:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Աղաչական) Բայց պարոն, դու ինքդ դիտես, որ ամուսինս երեք ամիսներէ ի վեր չի գործեր, տղուս առածը հազիւ իրեն կը բաւէ, իսկ իմ առածն ալ հազիւ չոր հացի մը, քար պիտի չուտենք եւ, ի՞նչպէս կրնամ վճարել:

ՏԱՆՏԷՐ.— Ձեր ի՞նչպէսը ինծի չի վերաբերելը Տի-

կին, տունս կը նստիք, դրամս պէտք է վճարէք, ես ուրիշ բան չեմ ճանչնաք:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց Պարոն, ես չըսի թէ չենք վճարեր, մեր պարտքն է, կը վճարենք, միայն մեզ ամիս մը եւս ժամանակ տուր, որ ամուսինս ալ գործի սկսի, հաւատա որ առաջին շարաթականն իսկ ձեզ կը վճարենք, ի՞նչ կ'ըլլայ:

ՏԱՆՏԷՐ.— Ո՛չ, ո՛չ Տիկին, այդ սին խոստումներով երկու ամսականս չի գանձեցի, այժմ անոր վրայ հատ մը եւս չեմ բարդեր, կը հասկնաս, կամ հիմա դրամս կուտաք, եթէ ոչ վաղը երեկոյ իսկ տան դուռը դոց կը գանձէք, հասկցա՞ր:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց ի՞նչպէս կարող էք այդ ընել պարոն, դուք խիղճ չունի՞ք, դուք Աստուած չունի՞ք, ես ի՞նչպէս կարող եմ դուրսը մնալ, այս գաւակներովս:

ՏԱՆՏԷՐ.— Տիկին, ձեր եւ ձեր գաւակներուն մասին ես չեմ որ պիտի մտածեմ, այդ ձեր գործն է. ես միայն իմ վարձքովս կը շահագրգռուիմ: Իսկ դուք եթէ գաւակ չէիք կրնար պահել, թող չի շինէիք, եթէ չէիք կրնար սպրել, թող շամուսնանայիք, կը հասկնաս:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Աղաչական) Բայց սիրելիս, միայն մէկ ամիս, մէկ ամիս եւս սպասէ, եթէ չի կրցանք վճարել, այն ատեն ինչ որ կ'ուզես ըրէ, ալ բան մը չեմ ըսեր:

ՏԱՆՏԷՐ.— Ո՛չ, ո՛չ Տիկին, գթախտարար՝ չեմ կարող սպասել. ես ալ ծախսեր ունիմ, քէֆս պիտի վճարեմ, ջուրի պիլ պիտի վճարեմ, նորոգութիւններ պիտի ընեմ, փայփերը պիտի շինեմ, այնպէս որ չի խորհիք թէ ձեր տուածը դրպանս կը մտնէ, ընդհակառակը, սէնք մը իսկ ինձ չի մնար: Հիմա պիտի վճարէ՞ք թէ ոչ գնամ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Կը խնդրեմ որ մի քիչ ալ սպասէք, հիմա միայն քսան տուր ունիմ, այդ առ, միւսն ալ տեսնենք ի՞նչ կրնանք ընել: (Սիրարբիին դառնալով) Սիրարբի, գնա դարակէն այդ քսան տուրը բեր որ պարոնին տանք:

ՍԻՐԱՐԲԻ.— (Դուրս կը գնայ եւ անմիջապէս դրամը  
ձեռքին կը վերադառնայ) Ահա մայրիկ: (Դրամը մօրը  
կուտայ):

ՏԱՆՏԷՐ.— Քսան տղար միայն է՛յ, միւս 16 տո-  
լարը՞:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Դրամը երկարելով) Խնդրեմ առ ա-  
սիկա, միւսն ալ բան մը կ'ընենք:

ՏԱՆՏԷՐ.— (Դրամը խլելով) Տիկին, եթէ միւսն ալ  
կուտաք՝ լաւ, եթէ ոչ ոտքիս՝ ոտքիս է եւ վաղն իսկ  
մնւլ պէտք է ըլլաք:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց պարոն, դուք իսկապէս խիղճ  
չունիք, դուք Աստուած չունիք, հիմա որ մեր ունեցած  
վերջին քսան տղարն ալ աւիր, որը մեր հացէն կտրած  
էինք, այժմ ի՞նչպէս կարող ենք մնւլ ըլլալ... Օ՛Ք Աս-  
տուած իմ փողոցները պիտի մնանք:

ՏԱՆՏԷՐ.— (Բարկացած) Տիկին այդ իմ գործս չէ,  
ճիշտ հիմա կամ 16 տղարը կուտաք, այլապէս վաղը  
դուրսը կը մնաք: (Կ'ուղղուի դուրս գնալու):

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Լալագին) Բայց սիրելիս, դաւակ-  
ներու տէր եմ, ի՞նչպէս... ի՞նչպէս... դուրսը մնամ:

ԶԱԻԷՆ.— (Որ մինչ այդ կը հետեւէր խօսուածնե-  
րուն, ոտքի ելլելով) Կեցի՛ր իժի ծնունդ, կեցի՛ր:

ՏԱՆՏԷՐ.— (Կանգ առնելով Զաւէնի կը նայի):

ԶԱԻԷՆ.— (Շար.) Կը տեսնեմ, որ ամէն մաքուր  
գգացում մտեր է ձեր մէջ, դու ոչ խիղճ ունիս, ոչ ալ  
գութ, դրամը, շահը, ձեզ անասնացուցեր է, եւ դուք՝  
կեղծաւոր փարիսեցիներ, Աստուծոյ անունով ալ կը խօ-  
սիք, իսկ ձեր միակ Աստուածը դրամն է դրամը: (Գըր-  
պանէն 16 տղար հանելով կը նետէ տանտիրոջ երեսն ի  
վեր):

ՏԱՆՏԷՐ.— (Զաւէնի կը նայի, յետոյ դրամին, կը  
ծռի կ'առնէ եւ արագ կերպով գրպանը դնելով երկու քայլ  
էւս կ'առնէ):

ԶԱԻԷՆ.— Ա՛ն սողուն, առ ու գնա, մարդկային ըն-  
կերութեան տղրուկներն էք դուք, բայց վատահ եղէք, որ

ձեր թաղաւորութեան օրերն ալ համբուած են, եւ վա՛յ  
ձեզի որ այդ օրերն ալ պիտի տեսնէք:

ՏԱՆՏԷՐ.— (Անձայն դուրս կը մեկնի):

ԶԱԻԷՆ.— (Ժամացոյցը նայելով) Ժողովիս ժամա-  
նակը հասեր է: (Կը պատրաստուի մեկնելու):

ՍԻՐԱՐԲԻ.— (Զաւէնի ձեռքէն բռնած) Բայց պիտի  
դաս քիչ յետոյ, չէ՞, թուղթ պիտի խաղանք, խնձոր պի-  
տի խաղանք, կուզաս չէ՞:

ԶԱԻԷՆ.— Այո, այո, չուտով Սիրարբի, մէկ ժամէն:

ՆՄԱՆԵԱՆ.— (Տէր եւ ՏԻԿ. Նմանեան ոտքի կ'ելլեն  
Պրն. Նմանեան Զաւէնի կ'ընկերանայ մինչեւ դուրս):

ՆՄԱՆԵԱՆ.— (Ներս մտնելով, ընկնուած եւ գլուխը  
շարժելով) Շատ տարօրինակ տղայ է Զաւէնը, եթէ իր  
նմաններու թիւը շատ ըլլայ, հաւատա որ մենք չուտով  
կ'ազատուինք. բայց աւա՛ղ, որ շատ քիչ են:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Ամէն բանով լաւ է, բացի իր անկրօ-

նութենէն, ոչ Քրիստոսի կը հաւատայ եւ ոչ Աստուծոյ:

ՆՄԱՆԵԱՆ.— (Նեղացած) Աման կնիկ, դուն հաւա-  
տացեր ես՝ ի՞նչ է եղեր, վիճակնիս այս չէ՞, օր մը տե-  
սե՞ր ենք:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց Միսաք, մի գուցէ Տէրը մեզ  
կը փորձէ:

ՆՄԱՆԵԱՆ.— Օ՞ք նախըմ, Տէրը մեզ կը փորձէ ե-  
ղեր, բայց աւելի լաւ չէ՞ր ըլլար, որ նախ տանտէրը  
փորձէր՝ յետոյ մեզ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց Միսաք, մենք ալ Տիրոջ թա-  
ղաւորութիւնը պիտի վայելինք: Չէ՞ որ գրուած է թէ  
«աւելի ճէշտ է ուղտը ասեղին ծակէն անցնի, քան հա-  
րուտոր արքայութիւն մտնէ»:

ՆՄԱՆԵԱՆ.— (Ծիծաղելով) Երանի քեզի կնիկ, որ  
խելք չունիս. թող մենք վայելինք այս աշխարհի վրայ,  
յետոյ երկնքի մասին ալ կը մտածէինք, եթէ կայ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Նեղացած) Է՛յ, Միսաք, կրկին ըս-  
կըսար Զաւէնի նման...:

ԴՈՒՌ.— (Դուրս կը գարնուի):

ՏԵՍԻԼ Ե.

Նոյնիք եւ կաթնավաճառ

ՍԻՐԱՐՔԻ.— (Գուռը բանալով) Մայրիկ հիմա ալ կաթնավաճառն է:

ԿԱԹՆԱՎՃ.— (Ներս մտնելով, կապոյտ վերարկու հագած) Երկու տողար տասնեւմէկ սէնթ, Տիկին:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Ամուսնոյն նայելով, յետոյ կաթնավաճառին) Պարոն խնդրեմ, Երկու շարթի եկէք, այսօր մանր չունինք:

ԿԱԹՆԱՎՃ.— (Մօտենալով Տիկնոջ) Այդ ոչինչ Տիկին, տուէք խոչորը, ես կը մանրեմ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց լաւ կ'ըլլայ որ վաղը գաս, չըլլա՞ր:

ԿԱԹՆԱՎՃ.— Ո՛չ Տիկին, ես գործաւոր մըն եմ, ինչ որ պօստ ըսաւ, պէտք է ընեմ, եթէ դրամը չի վճարէք այլեւս կաթ չեմ ձգեր:

ՆՄԱՆԵԱՆ.— (Կնոջը դառնալով) Էյ, թող չի ձգէ: (Յետոյ կաթնավաճառին) Լաւ պարոն, մի ձգէք մինչեւ որ այդ դրամը վճարենք:

ԿԱԹՆԱՎՃ.— Բայց այդ դրամը այսօր իսկ պէտք է վճարէք, եթէ չէք ուզեր որ դատարանական ծախսերն ալ դուք վճարէք:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Սիրարբի, գնա տես զանձարանդ որքա՞ն դրամ ունիս:

ՍԻՐԱՐՔԻ.— Մայրիկ զանձարանս միայն մէկ տողար եւ 86 սէնթ կայ:

ՆՄԱՆԵԱՆ.— (Գրպանէն 25 սէնթնոց մը հանելով) Ահա աղջիկս, առ սա քառորդը եւ վճարէ կաթնավաճառին:

ՍԻՐԱՐՔԻ.— (Գրամը առնելով) Եկուր որ վճարեմ: (Միասին դուրս կը գնան, Սիրարբի քիչ յետոյ կը վերադառնայ) վճարեցի մայրիկ:

ՆՄԱՆԵԱՆ.— (Լոռիքիւնը խօսելով) Ճան... կեանքը կը վայելես կոր չէ՞... եւ ասոր անունն ալ կեանք է ե-

ղեր... բայց ես հազար անգամ մահը կը գերադասէի այս կեանքէն... Պարտքերու տակ խեղդուած, գործարաններու առջեւ գործ կը մրուրանք, շան մը նման կը քչնն մեզ, ամիսներէ ի վեր գործ չունինք, տանտէրը դուրս կը փտարէ, գրպաննիս սէնթ մը չկայ ծախսելու, եւ ասոր անունն ալ կեանք է եղեր, (գլուխը շարժելով) կեանք... է... եղեր:

ՃԱՆ.— (Զգածուած) Բայց ի՞նչ ընեմ հայրիկ: (Մօրը դառնալով) Մայր, յետայսու ես իմ ամբողջ փէյսս ուսնց բանալու քեզի կուտամ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Լաւ, տղաս լաւ: ԳՈՒՌ.— (Գուռը կը գարնուի):

ՏԵՍԻԼ Զ.

Նոյնիք եւ նպարավաճառ

ՍԻՐԱՐՔԻ.— Ահա ուրիշ մըն ալ: (Գուռը բանալէ յետոյ) Մայր այս ալ նպարավաճառն է:

ՆՊԱՐԱՎՃ.— (Երկար ներմակ վերարկու մը հագած, ձեռքը տետրակ մը, վրան նայելով) Պրն. Նմանեան, սա մեր հաշիւը կը փակէ՞ք այսօր, գիտէք որ երկու շաբաթուան հաշիւ է, մանաւանդ շատ մը պիլիեր ունիմ վճարելիք, եթէ այսօր վճարէք, հաւատա որ կարծես նուէր մը կ'ընէք ինձ:

ՆՄԱՆԵԱՆ.— Լաւ լաւ, քանի՞ է ամբողջը: ՆՊԱՐԱՎՃ.— (Ուրախութեամբ) Ոչինչ, միայն 13 տողար եւ 24 սէնթ, բայց 13 տողարը վճարէք բաւ է, միւսն ալ իմ կողմէ Սիրարբիի զանձանակը ձգեցէք: (Աւելի կը մօտենայ):

ՆՄԱՆ.— Քեզմէ շատ չնորհակալ ենք բարեկամ, որ մեզի այդքան ապառիկ տուիք, իսկապէս որ այսքան պէտք չէր ուշացնել:

ՆՊԱՐԱՎՃ.— (Աւելի կը մօտենայ, ձեռքը երկարելով):

ՆՄԱՆԵԱՆ.— (Շար.) Բայց ի՞նչ կարող ենք ընել,

երբ երեք ամիսներէ ի վեր չեմ գործեր, իսկ խեղճ կնոջս ստացածն ալ՝ հազիւ չոր հացի մը կը բաւէ, ճիշտ քսան տուար ունէինք, այն ալ տանտէրը առաւ գնաց, ի՞նչ կրնայինք ընել, այլապէս վաղը փողոցը պիտի մնայինք:

ՆՊԱՐԱՎ.Ճ.— (Նեղացած) Ուրեմն չէ՞ք կրնար վճարել:

ՆՄԱՆԵԱՆ.— Հաւատա որ սէնք մը իսկ չունինք, նոյն իսկ գրպանս ծխախոտի իսկ դրամ չունիմ: Բայց երկուշաբթի գործի պիտի սկսիմ, այնպէս որ կրնաս վրատահ ըլլալ որ Շարաթ օր իսկ այդ քու հաշիւդ կը մաքրեմ:

ՆՊԱՐԱՎ.Ճ.— Լաւ լաւ, մինչև շաբաթ ալ կ'սպասեմ: (Գուրս ելլելու առեմ) Ձի սպասէի, ի՞նչ պիտի ընէի:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Միտաք, իսկապէս պիտի գործե՞ս երկուշաբթի, թէ ոչ պլըֆ մըն էր նետեցիր:

ԴՈՒՌ.— (Գուռը կը գաբնուի)

ՏԵՍԻԼ Է.

Նոյնիք եւ հանութպան

ՍԻՐԱՐԲԻ.— Հայրիկ չի բանոմ, այս ալ մի ուրիշը ըլլալու է:

ՆՄԱՆԵԱՆ.— Բաց աղջիկս բաց, կարծես խրատուէր, խօսք մէկ ըրած, վրանիս կուզան:

ՍԻՐԱՐԲԻ.— (Գուռը բանալով) Այս ալ առնելիքուր կը նմանի, բայց նոր մարդ է:

ԽԱՆՈՒԹՊԱՆ.— Բարեւ ձեզ: (Յետոյ ձեռքի թուղթիւն վրայ նայելով) Տիկին, կը ցաւիմ որ աւելի երկար չեմ կարող սպասել, միայն չորս ամսական վճարած էք, այժմ կը պարտիք ամբողջ 8 ամսականը, կամ ամբողջը հիմա կը վճարէք եւ կամ երկուշաբթի առաւօտ կառք մը կը զրկեմ, դաշնամուրը անոր կը յանձնէք:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Պարոն, չէ՞ կարելի որ մի քանի շաբաթ եւս օր տաք. երկուշաբթի ամուսինս գործի պիտի սկսի, կը յուսամ որ չուտով կը վճարենք:

ԽԱՆՈՒԹՊԱՆ.— Տիկին, մինչև հիմա մենք ալ յուսացինք, թէ կը վճարէք, բայց տեսանք որ յուսալով դաշնամուրին գինը չի վճարուիր, կարծեմ աւելորդ ժամավաճառութիւն է աւելի խօսիլ, շատ շատ մի շարաթ եւս կ'սպասեմ, իսկ յետոյ արդէն ձեր ստորագրած համաձայնագրի օրն ալ կը լրանայ, ուրեմն մինչև յաջորդ երկուշաբթի եթէ չի վճարէք, կառքս բերելով ես կը տանիմ: (Կը մեկնի):

ՍԻՐԱՐԲԻ.— Հայրիկ, ես չեմ տար դաշնամուրս, եթէ տանի՞ ես ի՞նչպէս փորձ պիտի ընեմ, չեմ տար, չեմ թողուր որ տանի:

ՆՄԱՆԵԱՆ.— Ո՛չ աղջիկս ոչ, չենք կարող չի տալ, օրէնքը անոնց կողմն է, օրէնքները հարուստները կը չենեն, հարուստը պաշտպանելու համար: Ներկայ օրէնքները միայն սանձ մըն են՝ աղքատներու բերանը անցուած, ուրիշ ոչինչ:

ՍԻՐԱՐԲԻ.— Բայց հայրիկ, բան մը ըրէ, ես փորձ պիտի ընեմ, ես չեմ տար (կուլայ):

ՆՄԱՆԵԱՆ.— (Զգացուած) Մի լար աղջիկս, մի լար, աղքատը զրկուած է ամէն բանէ, եւ դեռ կ'ըսես որ հաւատար ստանհութիւն ունինք սորվելու:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Մի լար Սիրարբի, ես չեմ թողուր որ տանի, երեկոյին կը խօսիմ Պրն. Չաւէնին, նա քեզ շատ կը սիրէ, այդ ալ թող վճարէ, մենք իրեն կը վճարենք յետոյ:

ՍԻՐԱՐԲԻ.— (Կ'ուրախանայ, կը գրկէ եւ կը 'համբուրէ մայրը):

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Միտաք՝ չըսիր թէ, իրա՞ւ երկուշաբթի պիտի գործես:

ՆՄԱՆԵԱՆ.— Այո, Չաւէնը գործ մը գտեր է ինձ համար, երկուշաբթի իր հետ պիտի գնամ եւ գործեմ, շաբաթական քսանեւփեց տուարով: (Տան մէջ ընդհանուր ուրախութիւն մը կը տիրէ):

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Լաւ լաւ, փառք Աստուծոյ, գէթ չափով մը կազատուինք:

ՆՄԱՆԵԱՆ.— «Փառք Աստուծոյ», բայց եթէ Աստուծոյ մնար գործը, դեռ երկար կը տանջուէինք: Այո, ես ալ կը հաւատամ որ մի օր կ'ազատուինք այս վիճակէն, բայց այդ ոչ Աստուծոյ շնորհիւ, այլ Զաւէնի եւ իր նրմաններու շնորհիւ, այլապէս եթէ Աստուծոյ մնայ գործը, այս հարուստները մեզ՝ մեր մահէն յետոյ իսկ կը չահագործեն:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Միտաք, դու այս երեկոյ շատ տարօրինակ կը խօսիս, կը զարմանամ ես:

ՆՄԱՆԵԱՆ.— Բայց զարմանալին հոն է, որ այսօրուան քու տեսածներէդ յետոյ, դուն եւս տարօրինակ չես խօսիր:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Ի՞նչ, թէ ոչ դու ալ ընկերվարական եղեր ես:

ՆՄԱՆԵԱՆ.— Էլմաս, ես չեմ գիտեր, թէ ո՞վ, ո՞վ ալեքի պէտք ունի ընկերվարական դառնալու, քան ես: Այսօր բոլոր անոնք՝ որոնք գործատէր չեն, հողատէր չեն, առեւտրական չեն, ուրիշ խօսքով՝ ապրելու համար ուրիշին կը գործեն — գործատու են, այդպիսիները պէտք է ընկերվարական դառնան:

ձիշտ է, ես ինքս կուսակցութեան մը անդամ չեմ արձանագրուած, բայց այդ ոչ անոր համար որ հակառակ եմ, կամ տարակարծիք, ոչ՝ ընդհակառակը, ես չեմ արձանագրուած պարզ անոր համար, որ միշտ ալ ընտանեկան հոգսերով բեռնաւորուած, հազիւ հազ ձեր պէտքերուն հասեր եմ, եւ այդպէս սէնք մը իսկ չեմ աւելցուցեր որ կուսակցականի մը պարտականութիւնս կատարեմ:

Թէեւ անոնք ինձ նման ընտանեկան հոգսերով բեռնաւորուածներէ անդամավճար իսկ չեն պահանջեր, բայց վերջապէս ես ալ մարդ եմ, ես ալ զզացում ունիմ, մէկ չի տամ, երկու չի տամ, երրորդին առ նուազն ամօթէս պիտի կարմրիմ, երբ մանաւանդ գիտեմ որ ուրիշներ հըսակայ զհոգսութիւններ կ'ընեն:

ԴՈՒՌ.— (Դուրը կը զարնուի):

ՏԵՍԻՍ Ը.

Նոյնք, Գեղամ, Նագեցի եւ Սրբուհի

ՍԻՐԱՐԲԻ.— Մայր բանամ, թէ ոչ այս ալ առնելիքոր է:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց աղջիկս, այս ատեն առնելիքուր կ'ըլլամ:

ՃԱՆ.— (Մինչ այդ՝ ձան բուրը բացած կ'ըլլայ, ներս կը մտնեն Գեղամ եւ Նագեցի, իսկ Սրբուհի միայն դրան մէջ կ'երեսի, ձան դուրս կը գնայ դուրբաշերով եւ Սրբուհիի հետ դուրսը մնալով: Բարեմերէ եւ ձեռք սեղմուցներէ յետոյ, Նագեցի կը նստի Սիրարբիի կողքին, իսկ Գեղամ՝ Տէր եւ Տիկ. նամակներու մէջտեղ):

ՆՄԱՆԵԱՆ.— Լաւ որ եկաք, թէ միայնակ էինք եւ թէ սխուր:

ԳԵՂԱՄ.— Տխրութեան ի՞նչ ունէիք, բան մը պատահած է:

ՆՄԱՆԵԱՆ.— Ոչինչ, ի՞նչ պիտի պատահի, աղքատութիւնը չի՞ բաւեր: (Փայլը քաշելով):

ԳԵՂԱՄ.— (Սիկարէք մը վառելով) Զի՞ բաւեր, շատ իսկ է, աղքատութիւնը նոյն ինքն տխրութիւնն է, թըշուառութիւնն է, բայց մենք իրաւունք չունինք արանջելու, որովհետեւ մենք ենք անոր բուն պատճառը, մենք՝ ուրիշ ոչ ոք:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Ի՞նչպէս թէ մենք ենք անոր պատճառը:

ԳԵՂԱՄ.— Շատ շատ պարզ կերպով Տիկին, ո՞վ, ո՞վ կը բռնէ մեր ձեռքերը, եթէ ուզենք մի քիչ հետաքրքրուիլ, մի քիչ կարգալ, մի քիչ սորվիլ, հասկնալ մեր վիճակը, ճանչնալ մեր դասակարգային շահերը, մասածել մեր ընկերներուն վրայ, եւ երբ կ'եղրակացնենք թէ ի՞նչ պէտք է ընենք, այն ատեն ալ պէտք է մէկ մարդու պէտքի կանգնինք, արիւն թափենք, մինչեւ որ ազատագրուինք: Ո՞վ, ո՞վ է մեղաւորը Տիկին, երբ մենք տգէտ ենք, անտեղեակ ենք մեր դասակարգի շահերուն եւ հլու

հարատակներու պէս կը գնանք հոն՝ ուր մեր տէրերը կը քչեն մեզ: Ի՞նչ տարբերութիւն կայ մեր եւ ոչխարներուն միջեւ, չէ՞ որ անոնք ալ կը գնան հոն՝ ուր որ հովիւը կ'ուզէ եւ կուենկնդրեն ինչ որ հովիւը կը նուագէ:

ՏԻԿ. ՆՄԱՆ. — (Չիսկանալով) Բայց ի՞նչ կրնանք ընել, երբ անգամ մը աղքատ ենք եղեր, իսկ հարստանալը շատ դժուար է այժմ:

ԳԵՂԱՄ. — Ո՛ր ո՛ր Տիկին, դուք չըմբռնեցիք զիս, եւ հարստանալու մասին չի խօսեցայ, դուք ըսիք թէ հարստանալը դժուար է Տիկին, բայց եւ կ'ըսեմ որ ոչ թէ դժուար է, այլ անկարելի, կարող է մի մարդ, մի ընտանիք հարստանալ, բախտին այս ու այն բերումով, բայց ատով երբեք չի վերջանար աղքատութիւնը, թշուառութիւնը, ընդհակառակը այսօր հարուստներու մէջ տեղի ունեցած անկասելի մրցումը, ամէն օր, հազարաւոր նախկին հարուստներ աղքատներու շարքը կը նետէ: Ուրեմն՝ հասարակական այդ վէրքին վրայ, անհատարար հարբատանալու ակնոցով պէտք չէ նայիլ, անոր զեզը, անոր դարմանը ուրիշ է, եւ որպէս զի վէրքը ճանչնանք՝ նախ անոր պատճառը պէտք է գտնենք: Ի՞նչ է ուրեմն մեր աղքատութեան պատճառը, եթէ ոչ տգիտութիւնը, այո մեր տգիտութիւնն է պատճառը, արդիւնքը՝ թշուառութիւնը, իսկ դարմանը՝ գիտակցութիւնը:

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Շատ լաւ կը խօսիք, Պրն. Գեղամ, բայց հիմա որ դուք գիտակ էք, թէ պատճառին, թէ արդիւնքին եւ թէ դարմանին, խնդրեմ ըսէք, դուք ինչո՞ւ աղքատ մնացեր էք, չէ՞ որ դուք եւս մեզ նման գործարանները կը շարձարուիք, եւ նոյն իսկ Զաւէնը, նա ալ գործաւոր չէ՞:

ԳԵՂԱՄ. — Կրկին չի հասկցաք զիս՝ Տիկին, միակ գիտակցութիւնը, միակ դարմանը գտնելը չի բաւեր, պէտք է զայն գործածել, չէ՞: Աղքատը միայն դուք, միայն եւ եւ Զաւէնը չենք, չէ՞ որ մարդկութեան ստուար մեծամասնութիւնը աղքատ է, գործաւոր է: Ուրեմն հարկաւոր է, որ միլիոնաւորներ գիտակցին, միլիոնաւորներ

ոտքի կանգնին, միլիոնաւորներ յամառօրէն կոխին մէջ նետուին, արիւն թափեն, ինչպէս այդ ըրին Ռուսաստանի, Վրաստանի եւ Հայաստանի մէջ: Ահա այն ատեն միայն կարելի կ'ըլլայ ներկայ անարդար սխառեմիս վերջ տալ, կործանել ներկայ կարգերը, եւ անոր տեղ ընկերատալ, կործանել հաստատել, որպէս զի վերջ դրուի աղվարական կարգեր հաստատել, որպէս զի վերջ դրուի աղքատութեան, թշուառութեան: Իսկ մինչ այդ՝ մենք դեռ շատ պիտի տրտմինք, շատ պիտի տանջուինք:

ՍՐԲՈՒՀԻ. — (Ճանի հետ ներս մտնելով) Սիրարբի, քեզ յետոյ ինձ համար քէլեֆօն մը պիտի դայ, զիս պիտի կանչեն քովի դեղարանէն, երբ գան՝ խնդրեմ ինձ լուր տուր:

ՍԻՐԱՐԲԻ. — Շատ լաւ օրիորդ:  
ՃԱՆ. — Ի՞նչ Սրբուհի, թէ ոչ շուտով պիտի մեկնիս:  
ՍՐԲՈՒՀԻ. — Ոչ ձան, կարծեմ օրիորդս հոս պիտի

դայ:  
ՏԻԿ. ՆՄԱՆ. — Ի՞նչ, Օր. Նուարդը, Տարբերեաններու աղջեկը... հոս պիտի դայ: (Զարմացած):

ՆՄԱՆԵԱՆ. — Իսկպէս այդ անակնկալ մըն է:  
ԳԵՂԱՄ. — Բայց անակնկալի ի՞նչ կայ, չէ՞ որ Զաւէնն ալ հոս պիտի ըլլայ:

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Բայց Զաւէնի հոս ըլլալը ի՞նչ կապ կրնայ ունենալ օրիորդին հոս գալուն հետ: Զաւէնը շատ անգամներ հոս եղած է:

ՍՐԲՈՒՀԻ. — Տիկին, դու միայն կաս երուպողմ, դեռ չե՞ս լսեր:  
ՏԻԿ. ՆՄԱՆ. — Բայց ի՞նչ կայ, ի՞նչ է եղեր:

ԳԵՂԱՄ. — Կարծեմ Օր. Նուարդը տաք զգացումներ ունի ընկ. Զաւէնի հանդէպ:  
ՆՄԱՆԵԱՆ. — Պրն. Զաւէնն ալ տեղեկութիւն ունի՞

թէ ոչ:  
ԳԵՂԱՄ. — (Խնդալով) Այդ կէտը Սրբուհիին հարցուցէք:

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Իրաւ՝ ի՞նչ կայ Սրբուհի, պատմէ տեսնենք, մենք ոեւէ բանէ լուր չունինք:

ՍՐԲՈՒՀԻ.— (Ուտֆի կանգնելով եւ իր հագածները ցոյց տալով) Չե՞ս տեսներ, այս բոլորը օրիորդս տուաւ ինձ: (կը նստի):

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Նեղացած) Օ՞Փ, հոգի կը հանես Սրբուհի, պատմէ տեսներ ի՞նչ է եղելութիւնը:

ՍՐԲՈՒՀԻ.— Ի՞նչ պատմեմ, քիչ յետոյ Պրն. Չաւէնը կուգայ, թող ինք պատմէ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց դու չըսիր թէ Չաւէնը գիտէ՞:

ՍՐԲՈՒՀԻ.— Չաւէնը գիտէ՞, այդ ալ խօսք է: (Խընդալով) Օ՞Փ, Աստուած իմ, եթէ միայն իմ տեսածները դուդ տեսնէիք:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Սրտնեղած) Է՛յ պատմէ տեսներք:

ԳԵՂԱՄ.— Պատմէ Սրբուհի, թէ ոչ գաղտնիք պիտի մնայ, այս արեւին տակ գաղտնիք չի մնար, պատմէ:

ՍՐԲՈՒՀԻ.— Լաւ, կարճ կերպով պատմեմ. ճիշտ քանի մը ամիսներ առաջ, Կիրակի երեկոյ մը, պօսէրս թատրոն գնացին, տունը մնացին Օրիորդս եւ իրեն տղան Պրն. Պօղոսը. չեմ գիտեր ի՞նչ անցաւ մէջերնին, մէկ ալ Օրիորդս գիտ կանչեց, Սրբուհի՛ Պարոնին գլխարկը եւ վերարկուն տուր եւ դուրս առաջնորդէ: Օրիորդս շատ տխուր էր, իսկ տղան ըսես, մահու չափ տխուր եւ առանց մնաս բարեւ ըսելու քթին առջև բան մը մուտալով դուրս ելաւ, դուռն ալ ամուր կերպով քաշելով: Յետոյ Օրիորդս նորէն գիտ կանչեց, ըսաւ որ Պրն. Չաւէնը հոս պիտի գայ, ճիշտ ժամը 9-ին, եւ իրաւ ալ, ճիշտ ժամը 9-ին մոմի պէս անկուեցաւ դուռը. ներս հրամցուցի, օրիորդը իր սենեակին էր, կարծեմ ինքզինքը կը շակեր, վար կանչեցի. տեսնէիք իր ուրախութիւնը, ինքզինքը մոռցաւ եւ ինձ դառնալով «Սրբուհի քեզի պէտք չունիմ, կարող ես գնալ եւ սրակիր»... բայց ես ո՞վ եմ, ես ալ ոտքերս գետինը խփելով մինչեւ սանդուխներուն գլուխը ելայ, յետոյ կօշիկներս հանեցի եւ կատուի նման կամացուկ մը կրկին վար իջայ, դրան ճեղքէն սկսայ գիտել, թէ եւ անքաղաքավարութիւն էր, բայց անգամ մը ըրած եղայ: (Ուրախութեամբ) Մէյ մըն ալ ի՞նչ տեսնեմ, իրար պլլուած՝

այնպէս կը համբուրուէին որ նըփ, նըփ ձայնը մինչեւ ականջներուս հասաւ:

ՆԵՐԿԱՆԵՐԸ.— (Բոլորը քահ քահ կը խնդան):

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Է՛յ, յետո՛յ, պատմէ, պատմէ տեսներք:

ՍՐԲՈՒՀԻ.— Յետոյ ի՞նչ ըլլայ: Պրն, Չաւէնը մեկնեցաւ, եւ անկէ ասդին Օրիորդս բոլորովին փոխուած է, կարծես ալ առջի աղջիկը չէ, վրաս պօսուքիւն չըներ, կարծես իր քոյրն եմ, ունեցածները հազիւ քանի մը անգամ կը հագուի, ինձ կուտայ...: Օ՛հ, հետս այնքան լաւ կը վարուի, որ չեմ կրնար պատմել, շատ անգամներ ալ դրամ կուտայ, առանց ինձի քատրոն չի գնար, մէկ խօսքով, ալ Չաւէնը տեսնելէն յետոյ, առջի Օրիորդս չի մնաց, բոլորովին փոխուեցաւ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց իր ծնողքն ալ գիտե՞ն:

ՍՐԲՈՒՀԻ.— Կարծեմ քիչ մը գիտեն, բայց Օրիորդս այնքան ճարպիկ է որ, առաջ որ տան հասցէով նամակներ կ'ստանար, այժմ դադրած են, բայց ամէն օր կրկին կ'ստանայ եւ նամակ կը գրէ, կարծեմ նեկէրայ տիլիվրով կ'ստանայ: Իսկ ամէնէն զարմանալին հոն է որ առաջ Օրիորդս մէկ օրը՝ մէկ սիրահարական գիրք կը կարգար, սենեակը սիրահարական գրքերով, մակագիններով լեցուած էր, այդ բոլորը դուրս թափել տուաւ, հիմա ալ սկսեր է նոր տեսակի գրքեր կարդալ, կողքերը կարմիր գրքեր, կարգ մըն ալ հայերէն կան, անցեալ օր, սենեակը մաքրած ատենս, ծոնցայ տեսնեմ ի՞նչ գրքեր են ըսի, ի՞նչ տեսնեմ, «Պետութիւն եւ յեղափոխութիւն», «Քօմունիզմի Ա. եւ Բ. ք», «Պրոլետարական դիկտատորիա», ի՞նչ գիտնամ, այսպէս կարգ մը գրքեր...: Հա՛, մոռացայ, երբեմն ալ, երբ մանաւանդ իր ծնողքը տունը չեն կը քաշուի իր սենեակը, եւ բարձրօրէն բաներ մը կը խօսի, նախ խորհեցայ որ քովը մէկը ըլլալու է, բանալիին ծակէն գիտեցի, տեսայ որ քովը մէկը չկայ, եւ անդիւրէն կը խօսի, հասկցայ որ աստեալսօտութեան փորձեր կ'ընէ, արդէն գիտէի որ փրպլիֆ սիլիֆինկի դաս ալ կ'առ-

նէ, կ'երեւի Չաւէնին պէս, ինքն ալ կ'ուզէ խօսող ըլլալ: ԵՆԲԿԱՆԵՐԸ.— (Բոլորը քահ քահ կը խնդան): ԴՈՒՌ.— (Դուռը կը գարնուի):

ՏԵՍԻԼ Թ.

Նոյնիք եւ Չաւէն

ՍՐԲՈՒՀԻ.— (Գէպի դուռը վագելով) Լաւ որ եկար Պրն. Չաւէն: (Չեռֆէն ներս քաշելով):

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Ուրախ) Լաւ որ եկար Պրն. Չաւէն, մենք ալ ճիշտ ձեր մասին կը խօսէինք: (Աթոռ մը ցոյց տալով) Խնդրե՛մ՝ նստեցէք: (Յետոյ սովորական բարի եկաքները բոլորին կողմէ):

ՉԱԻԷՆ.— Բարի տեսանք, բարի տեսանք: (Կը նստի):

ԳԵՂԱՄ.— Ի՞նչպէս անցաւ ժողովը Պրն. Չաւէն:

ՉԱԻԷՆ.— Շատ շատ լաւ անցաւ, մեծ ոգեւորութիւն կար:

ԳԵՂԱՄ.— Այն ծանօթ խնդրոյ մասին ի՞նչ որոշուեցաւ:

ՉԱԻԷՆ.— Ճիշտ այնպէս ինչպէս երէկ երեկոյ կ'ենթադրէինք:

ԳԵՂԱՄ.— Լաւ, այդ սքանչելի է եղեր:

ԴՈՒՌ.— (Դուռը կը գարնուի):

ՍԻՐԱՐԲԻ.— (Դուրս կը գնայ եւ յետոյ ներս գալով)

Օր. Սրբուհի ձեզ կը կանչեն, թէ լէ՛ֆօն ունիք:

ՍՐԲՈՒՀԻ.— Տիկ. Նմանեան, եթէ կէս ժամու չափ ուշացայ, գիտցիր որ տուն եմ գնացեր, իսկ եթէ Օրիորդս գայ, այն ատեն արդէն միասին կուգանք:

ՃԱՆ.— (Ոտքի կանգնելով) Հայրիկ, ես ալ գնա՞մ Սրբուհիին հետ, մի գուցէ տուն գնալ ստիպուի, փողոցները թէ մութ են եւ թէ վտանգաւոր:

ՆՄԱՆԵԱՆ.— Լաւ սղաս լաւ, միասին գնացէք: (Կը մեկնի):

ԳԵՂԱՄ.— Տիկ. Նմանեան, կ'երեւի չուտով ձանն ու Սրբուհիին ալ կը միանան, կ'ամուսնանան:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Մի որոշ բան չկայ դեռ, բայց կ'երեւի իրար սիրեր են, եթէ Աստուած կամենայ՝ կ'ըլլայ, չըլլալիք ի՞նչ կայ:

ՆՄԱՆԵԱՆ.— Ճիշտն ալ այդ է, կարգենք՝ տեսնենք խելքը գլուխը կը հաւաքէ՞, մարդ կը դառնայ: (Փոխելով նիւթը) Պրն. Չաւէն, ի՞նչ կը խորհիք Պրն. Մանկասարեանի մասին, այս կիրակի Woods թատրոնին մէջ կը խօսէր, ինքս ալ ներկայ եղայ այս առաւօտ, և շատ ալ ժողովուրդ կար:

ՉԱԻԷՆ.— Ի՞նչ, նորէն կրօնական հարցերու մասին սկսինք:

ՏԱՐԲԵՐԵԱՆ.— Բայց ի՞նչպէս ժամանակնիս պիտի անցնի:

ԳԵՂԱՄ.— Ընկ. Չաւէն, ճիշտ է որ բաւական հետաքրքրական մարդ է եւ շատ լսողներ ունի:

ՉԱԻԷՆ.— Բայց մեզ ընկերվարականներու համար այնքան ալ հետաքրքրական մէկը չէ, իրր թէ էթէիսք մըն է, բայց իմ առումով, սոսկ պուրժուա լիպերալիզմի մի ներկայացուցիչն է, միայն՝ մի քիչ աւելի ձախ, ուրիշ խօսքով Ինկրուստան դպրոցի աշակերտ մը:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց դուք կրկին սկսաք կրօնական վէճերու:

ՆՄԱՆԵԱՆ.— Մեր կիներ շատ կրօնասէր եւ աստուածափախ է, ընկ. Չաւէն:

ԳԵՂԱՄ.— Ճիշտ ատոր համար ալ Աստուած իր բոլոր բարիքները ձեր կնոջ տուեր է, տուն, տեղ, օթոմօս պիլ ու չի հատնելիք դրամ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Բայց Պրն. Գեղամ, Տիրոջը գործերուն մեր խելքը չի հասնիր:

ԳԵՂԱՄ.— (Խնդալով) Ճիշտ էք Տիկին, մեր խելքը հազիւ հազ գործուած գործերուն կը հասնի, ալ ո՞ւր կը մնայ չի գործուած գործերուն հասնիլը:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Ձարմացած) Ըսել կ'ուզէք, Տէրը չի՞ գործեր:

ԳԵՂԱՄ. — Անշուշտ Տիկին, ոչ ինչը միայն ոչ ինչ կը գործէ :

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Ըսել կ'ուզէք Աստուած չկա՞յ :

ԳԵՂԱՄ. — Անշուշտ ոչ, Տիկին, այդ Աստուածը միայն ծերացած ուղեղներու մէջ գոյութիւն ունի :

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Բայց չէ՞ որ միլիոնաւոր մարդիկ Անոր գոյութեան կը հաւատան :

ԳԵՂԱՄ. — Բայց ի՞նչ ըսել կ'ուզէք Տիկին, եւ որովհետեւ միլիոնաւոր մարդիկ կը հաւատան, մենք ալ պարտաւոր ենք հաւատալ, չէ՞ մի որ այդ նոյն միլիոնաւորները, երէկ ալ, չար ոգիներու, կախարդներու, երկրագունտի սափակ ըլլալուն, արեւին երկրիս բոլորտիքը դառնալուն կը հաւատային : Իսկ այսօր, եթէ այդ նոյն բաներուն եւ ինքս հաւատամ, վստահ եմ որ դու ինքզիքա կը խնդաս : Այսօր՝ քիչ թէ շատ մտածող ռեւէ մարդ եւ նոյն իսկ առօրեայ թերթերը, մարդու ծագումը միլիոնաւոր տարիներ ետ կը տանին, բայց դու եւ քու հետ բոլոր կրօնականները, դեռ եւս կը հաւատան որ այս աշխարհի ստեղծումը միայն 6000 տարի առաջ է եղեր, այնպէս չէ՞ :

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Բայց դարերէ ի վեր, մարդիկ Աստուծոյ գոյութիւնը եւ Քրիստոսի Աստուածութիւնը ընդունած են :

ԶԱԻԷՆ. — Տիկին՝ ոչ թէ Աստուծոյ, այլ Աստուածներու, որովհետեւ մարդոց պաշտած Աստուածներու թիւը աւելի շատ է եղած, քան ձեր գլխի մագերուն թիւը : Իսկ Քրիստոսի Աստուածութիւնը ընդունողներու թիւը՝ մարդկութեան հագիւ մէկ տասներորդը չկայ, դեռ չի հաշուելով բոլոր անոնք՝ որոնք Քրիստոնեայի անուան տակ, անհաւատներ են, չէ՞ որ զիս ալ Քրիստոնեայ կը հաշուէք :

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Բայց շատ տարօրինակ կը խօսիք Պրն. Զաւէն, ի՞նչպէս թէ Աստուածներու... :

ԶԱԻԷՆ. — Այո Աստուածներու, տգիտութեան եւ վախի մէջ ապրող նախամարդը, անգիտակ բնութեան ու-

ժերու գաղտնիքներուն, միշտ նախախնամութեան մը վերադրած է բոլոր այն բաները որ չէ հասկցած : Եւ պաշտեր է բոլոր այն բաները՝ որմէ կամ վախցեր է կամ օգտուեր է : Հիմա տես թէ ի՞նչ աստուածներ են ունեցեր մեր նախահայրերը : Անոնք երբ վայրենիներ էին եւ անտաններու մէջ ծառերու վրայ կ'ապրէին, սկսան ծառերը պաշտել, որովհետեւ անկէ կ'օգտուէին. ծառերը դիրենք կը պաշտպանէին վայրի գաղաններէն : Յետոյ պաշտած են բզրտող վայրի գաղաններ, ի վախ անոնցմէ : Իսկ յետոյ, դանոնք ալ փոխեր կաւէ արձաններու, կուռքերու, սր միշտ իրենց մօտ ըլլայ, որ միշտ իրենց դժբախտութեան պարագային ծունր դան եւ օգնութիւն խնդրեն : Յետոյ պաշտեր են կրակը, ջուրը, որոնցմէ օգտուեր են : Յետոյ պաշտեր են ռեժեղ եւ բռնակալ մարդեր եւ արտակարգ զեղեցիկ կիներ, որոնց անուանները լիքն են հին հաւատքին մէջ : Պաշտեր են նաեւ սուրբեր, մարգարէներ, որոնց անուանները դուք աւելի լաւ գիտէք քան ես : Անոնք պաշտած են նաեւ լուսինը, աստղերը, որ իրենց լոյս տրւած են գիշերները : Պաշտած են արեւը, որմէ ստացած են լոյս, ջերմութիւն, կեանք, եւ ամէնէն վերջն ալ աւելի ճարպիկ խարբրաներ եկեր են, ինչպէս Պուտտա, Քրիստոս, Մուհամմէտ, եւ շատ ճարպիկօրէն Աստուածները միացուցեր են, մէկ հատ են շիներ եւ զայն ալ հաներ են վերը, շատ վերը, աստղերէն ալ վերը, որպէս զի պրպրտող մարդիկ զայն չի գտնեն : Եւ իսկապէս ալ, այժմ երբ համաստեղագէտներու հսկայ դիտակները մինչեւ միլիոնաւոր մղոն կարող են դիտել անձայր տիեզերական պարապութեան մէջ, հոն Աստուծոյ հետքն իսկ չեն կարող տեսնել... : Գուր խօսեցաք նաեւ Քրիստոսի Աստուածութեան մասին. բայց չէ՞ որ այդ խարբրաները բոլորն ալ զիրար չէզոքացուցին, ի՞նչ ըսաւ Մուհամմէտը Քրիստոսի մասին, ի՞նչ ըսաւ Քրիստոս իրմէ յետոյ գալողներու մասին, եւ ի՞նչ ըսաւ Պուտտան իրմէ առաջ գալողներու մասին : Զէ՞ որ ասոնք բոլորն ալ զիրար չէզոքացուցին : Սակայն եւ այնպէս՝ ասոնք բոլորն ալ դեռ մին-

չև այսօր միլիոնաւոր հետեւորդներ ունին եւ կը պաշտօնին որպէս Աստուածներ: Բայց թողունք այդ բոլորը, յիմարութիւն է խօսիլ բանի մը մասին, որ գոյութիւն ունեցած է, չունի եւ չէր ալ կարող ունենալ, ոչինչի մասին ոչինչ պէտք է խօսիլ: (Լոուքիւն մը կը տիրէ):

ՆՄԱՆԵԱՆ.— (Լոուքիւնը խզելով) Օրիորդ նազնի, դուք բան մը չէք խօսիր:

ՆԱԶԵՆԻ.— Ի՞նչ խօսիմ Պրն. Նմանեան, ես ալ մտիկ կ'ընեմ, կը խորհիմ որ պէտք է շատ մտիկ ընել, նախ քան խօսիրը:

ՆՄԱՆԵԱՆ.— Սօսեցէք ձեր կեանքի մասին, եթէ ուրախ բաներ չկան, տառապանքն ալ չէ՞ք ապրած:

ՆԱԶԵՆԻ.— Տառապանքը, անոր մրուրը ծծեցինք Պրն. Նմանեան. բոլոր անոնք որ դժբախտութիւնն ունէին 1914էն յետոյ Թուրքիա կոչուող դժոխքին մէջ ապրելու, անոնք իսկապէս ալ դժոխային չարչարանքներու մէջ ապրեցան:

ՆՄԱՆԵԱՆ.— Ի՞նչպէս եղաւ տեղահանութիւնը Օրիորդ:

ՆԱԶԵՆԻ.— Բայց ի՞նչ տեղահանութիւն, ես չեմ գիտեր թէ ինչօ՞ւ հոս, գաղութներու մէջ, տեղահանութիւն կը կոչուի, երբ եղածը մասսասական թայան, մասսասական ջարդ մըն էր վերջերնիս բերելու համար, եւ դժբախտաբար յաջողեցան ալ:

ՏԻՎ. ՆՄԱՆ.— Օրիորդ, այժմ Երկիրը բաւական Հայեր կա՞ն:

ՆԱԶԵՆԻ.— Ոչ Տիկին, եղածը հատ ու կտոր Հայեր են, հոս ու հոն ցրուած:

ՏԻՎ. ՆՄԱՆ.— Եթէ Հայերը կրօնափոխ ըլլային՝ կ'ազատուէի՞ն:

ՆԱԶԵՆԻ.— Ոչ Տիկին, այդ ալ փորձողներ եղան. բայց քիչ յետոյ անոնք ալ տեղահանուեցան եւ ճամբան կոտորուեցան:

ՏԻՎ. ՆՄԱՆ.— Տեղացի Թուրքերը, Հայերը պահելու փորձ չըրի՞ն, ինչպէս ըրին ԳՅԻ ջարդերուն ատենը:

ՆԱԶԵՆԻ.— Ընողներ եղան, բայց յետոյ՝ անսալով վերէն գալած հրամաններուն, պահածնին ալ դուրս վտարեցին, իսկ յամառողներն ալ հայերու նման ջարդուեցան:

ՏԻՎ. ՆՄԱՆ.— Օրիորդ, գոնէ հոն ապրող Հայերը քրիստոնեայ կը մնա՞ն:

ՆԱԶԵՆԻ.— (Գլուխը շարժելով) Ո՛չ Տիկին, ոչ, Քրիստոնէութիւն չի մնաց, եւ ի՞նչպէս կարող էր մնալ, երբ հաւատացեալ Հայ ժողովուրդը, ահ ու սարսափի մասնուած, փախաւ, լեցուեցաւ Եկեղեցիները, հոն ծուռկի եկած, արտասուալից աչքերով, իրենց սրաի խորերէն Աստուծոյ օգնութիւնը պաղատեցին, ու փոխանակ Աստուծոյ օգնութիւնը գալու, եկաւ՝ հազարաւոր Թուրքերէ եւ Քիւրտերէ խուժան մը, զինուած փայտերով, կացիններով եւ դէնքերով ու անդթօրէն կոտորեց, այր թէ կին, ծեր թէ մանուկ, բոլորն ալ, ահա այս եղաւ Աստուծոյ օգնութիւնը: Ըսէ՛ Տիկին, հոս այլեւս հաւատք կը մնա՞ց:

Ես ինքս՝ տեղահան եղած կարաւանի մը հետ էի: Ճամբան հազարաւոր Թուրքեր եւ Քիւրտեր մեզ պաշտօնեցին, յարձակեցան մեր վրայ, թալանեցին ունեցածնիս, եւ յետոյ գատեցին մանկամարդ կոյս աղջիկները, քարչ տալով տանել փորձեցին. տեսնելու էիր այս խեղճերուն լացը, ճիչը, պաղատանքը առ Աստուած: Բայց ոչ մէկ օգնութիւն, անոնք թէ բռնաբարուեցան եւ թէ խողխողուեցան: Ահա այս եղաւ Աստուծոյ օգնութիւնը այդ խեղճերուն. ալ ի՞նչ հաւատք կը մնայ հոս:

Մեր կարաւանը Տիգրանակերտի մօտ կիրճէ մը կ'անցնէր, կրկին պաշարուեցանք, զինուած Քիւրտեր յարձակելով խլեցին ծծկեր երախաները իրենց մօր գըրկէն եւ սկսան մին իր սուրը, միւսը իր լախտը փորձել, այդ երախաներուն վրայ, իսկ ուրիշներ քարի նման ձորը նետուեցան, իսկ անդին անոնց թշուառ մայրերը ծուռկի եկած՝ իրենց մաղերը փետելով, Աստուծոյ օգնութիւնը կը խնդրէին, բայց ի՞նչ օգնութիւն գայ հաւնիս Տիկին,

Քիւրախն գնդակը, որ խեղճ մայրերն ալ տեղն ու տեղը մահացան: Ահա այս եղաւ Աստուծոյ օգնութիւնը այն անմեղունակ մանուկներուն, որ որպէս թէ երկնից թագաւորութիւնը անոնց համար էր:

Տիգրանակերտի պարխապներուն տակ էինք, երկու հսկայ փոսեր կային հոն, երկուքն ալ հայերով լեցուած, մին՝ հողով ծածկեցին, ողջ ողջ թաղեցին, իսկ միւսին վրայ խոտ եւ յարդ լեցնելով հրկիզեցին, եւ բոլորն ալ ողջ ողջ մոխիր դառցուցին. լսելու էիր անոնց լացը ու կոծը, աղաչանքը ու պաղատանքը առ Աստուած, բայց Աստուած լուռ էր, կարծես կը քնանար, ոչ մէկ օգնութիւն: Ու այդ ամբողջէն յետոյ, դեռ կ'ուզէք որ հաւատք մնա՞յ, Տիկին:

Տիկ. ՆՄԱՆ.— (Զգացուած) Ծո՛ւն թուրքեր, շո՛ւն թուրքեր:

ՆԱԶԵՆԻ.— Ո՛չ Տիկին ոչ, ես ինքս ալ չեմ հաւատար, որովհետեւ եթէ իրաւ Աստուած կայ, այն ատեն պէտք է ընդունիս որ Մուհամմէտի Աստուածն է զօրաւորը եւ ոչ թէ Քրիստոսինը, չէ՞ որ անոնք կ'ապրին այսօր, իսկ մենք մահացանք:

Տիկ. ՆՄԱՆ.— Բայց Օրիորդ, Աստուած շատ անգամ չարերու ձեռքով մեզ զգաստութեան կը հրաւիրէ:

ՆԱԶԵՆԻ.— Բայց Տիկին, ալ աւելի արդար չէ՞ր ըլլար, որ նախ՝ մեր ձեռքով չարերը զգաստութեան հրաւիրէր, եւ յետոյ՝ ի՞նչ, ի՞նչ զգաստութեան պէտքը ունին ծծկեր երախաները, փոքր մանուկները, կոյս աղջիկները, մահուան մօտեցող ծերերը, եւ մեր դաւառացի բարեպաշտ խեղճ ժողովուրդը: Ո՛չ, ոչ Տիկին, եթէ ես Աստուածը տեսնեմ իսկ, այլեւս չեմ հաւատար:

ԴՈՒՌ.— (Դուրը կը գարնուի):

ՏԵՍԻԼ Ժ.

Նոյնք եւ Նուարդ

ՍԻՐԱՐԲԻ.— (Դուրը կը բանայ, ներս կը մտնեն նախ Սրբուհի, յետոյ Նուարդ, բոլորը ոտքի կ'ելլեն):

ՆՈՒԱՐԳ.— (Բոլորին հետ ալ ձեռքի սեղմումներ կ'ընէ, ըսելով) Բարեւ ձեզ: (Բոլորը) Բարի եկար: (Կը նստի):

ՆՈՒԱՐԳ.— Կը տեսնեմ որ իմ ներկայութիւնը անակնկալ մը շեղաւ ձեզ, ինձ կը թուի որ մեր Սրբուհին արդէն իսկ զիս ծանօթացուցած է, եւ ո՞վ գիտէ ինչեր խօսած է: (Բոլորն ալ կը խնդան): Քանի որ այդպէս է, ուրեմն ալ բոլորովին աւելորդ է անհամարձակ ըլլալ:

Տիկ. ՆՄԱՆ.— (Որ Զաւէնի կողքին է, ոտքի ելլելով) Օրիորդ, հոս հրամեցէք, որպէս զի տեսնեմք թէ որքա՞ն համարձակ կ'ընաք ըլլալ: (Դուրս կը մեկնի, ուրուն կը հետեւի Սիրարբի):

ՆՈՒԱՐԳ.— Շատ լաւ Տիկին: (Կը գնայ եւ Զաւէնի կողքին կը նստի): (Ճան եւ Սրբուհի միասին գոց անկողինին վրայ կը նստին եւ կը խօսակցին, իսկ Գեղամ եւ Պրն. նմանեան միասին ծխելով կը խօսակցին):

ՍԻՐԱՐԲԻ.— (Ներս գալով Նազենիին) Օրիորդ, մայրիկս ձեզ կ'ուզէ խոհանոցը: (Երկուքովնին կը մեկնին):

ՆՈՒԱՐԳ.— Է՛յ, ի՞նչպէս էք Զաւէն:

ԶԱԻԿՆ.— Շատ լաւ Նուարդ, դուք ի՞նչպէս էք:

ՆՈՒԱՐԳ.— Աւելի քան լաւ, մանաւանդ այժմ:

ԶԱԻԿՆ.— Ի՞նչպէս են ձեր պատուարժան ծնողքը (ծիծաղ):

ՆՈՒԱՐԳ.— Անոնք ալ լաւ են, այլեւս զիս չեն նեղեր եւ մի քիչ ալ ձեզմով հետաքրքրուած:

ԶԱԻԿՆ.— Ի՞նչպէս թէ:

ՆՈՒԱՐԳ.— Անցեալները՝ ինձ յայտնեցին որ դուք կը պատրաստուիք եղեր Ռուսիա մեկնելու, չի հաւատացի, բայց յետոյ մի ուրիշն ալ նոյն բանը ըսաւ, ճի՞շտ է:

ԶԱԻԿՆ.— Բոլորովին անճիշտ, ձեզ գրած կ'ըլլայի չէ, Ռուսիոյ մէջ բոլորն ալ ինձմէ լաւ զործողներ են, մեր տեղը հոս է, ինչ որ պիտի ընենք՝ հոս պէտք է ընենք, փոթորիկը արդէն մօտ է եւ մի գուցէ շուտով յեղափոխութիւնը պայթի:

ՏԻԿ. ՆՄԱՆ. — (Ներս մտնելով) է՛յ, բոլորդ ալ հրամեցէք, մի քիչ ճաշ ընենք, սեղաննիս աղքատիկ է, բայց սրտերնիս հարուստ, հրամեցէք Պրն. Զաւէն, հրամեցէք Օրբորդ (ծիծաղելով) :

ԶԱԻԷՆ. — Տիկին, գիտէք որ ճաշած եմ, շնորհակալ եմ :

ՆՈՒԱՐԳ. — Իսկ ես արդէն ճաշեցի եւ եկայ, շնորհակալ եմ :

ՏԻԿ. ՆՄԱՆ. — Ուրեմն ներողութիւն որ ձեզ միայնակ կը թողունք : (Միւսները կը մեկնին ցաղերու) :

ԳԵՂԱՄ. — Անոնց ալ ուզածը այդ էր, չէ՞ :

ԶԱԻԷՆ. — (Նուարդի ձեռքերը իր ափին մէջ առած) Նուարդ, սա արդէն երկրորդ անգամն է որ երկուքովնիս միասին եւ միայնակ կ'ըլլանք :

ՆՈՒԱՐԳ. — Ոչ Զաւէն, սա արդէն երրորդ անգամն է, չէ՞ ս յիշեր ձեր հրապարակային ժողովը :

ԶԱԻԷՆ. — (Խնդալով) Ձեւ ալ մոռացեր, չա՛ր աղջիկ :

ՆՈՒԱՐԳ. — Անշուշտ չեմ մոռացեր, բայց կեցիւր, քեզի սփրայց մը ունիմ : (Պայուսակը բանալով նամակ մը կը յանձնէ Զաւէնի) :

ԶԱԻԷՆ. — (Նամակը ուշի ուշով կարդալով) Բայց Նուարդ, այս ինձ համար սփրայց մը չէ, ես գիտէի որ դուք աշխատութեամբ ամէն ինչի կը յաղթէք, բայց դուք ի՞նչպէս պիտի գնաք, ձեր ծնողքը թոյլ կուտա՞ն :

ՆՈՒԱՐԳ. — Ծնողքս պիտի խարեմ, որպէս թէ Նիւ Նորք վագանձի եւ հանգստութեան կը գնամ, թէ եւ հայրս այնպէս կարգադրեց որ գորգի վաճառականներուն տունը պիտի ապրիմ, որոնք հօրս մօտ բարեկամներ են :

ԶԱԻԷՆ. — Ի՞նչ նիւթի մասին պիտի խօսիք :

ՆՈՒԱՐԳ. — Առաջին ժողովին մէջ «կանանց գերը բնկերային յեղափոխեան մէջ», իսկ երկրորդ ժողովին մէջ «ձերմակ գերութիւնը, իր պատճառները եւ դարմանները» :

ԶԱԻԷՆ. — (Ափշած) Բայց Նուարդ, կը վախնամ որ

դուք այդ վերջի նիւթի մասին այնքան ալ ձեռնհասօրէն չի կարողանաք խօսիլ, քանի որ այդ կեանքը ձեզ անծանօթ է իր բոլոր կողմերով :

ՆՈՒԱՐԳ. — (Խնդալով) Ո՛չ, ոչ Զաւէն, պայման չէ որ խօսելիք նիւթը խօսողը ինքը ապրած ըլլայ, կարելի է ուրիշ նիւթի մասին խօսիլ, զայն ուսումնասիրելէ յետոյ, հոգ չէ թէ խօսողը ինք անձնապէս մաս չէ կազմած այս երեւոյթին : Եթէ այդ թշուառները իրենց մարմնոյն վրայ կրեր են այդ, ես ինքս ալ զայն ապրեցայ հոգեպէս երեւակայելով :

ԶԱԻԷՆ. — (Հիացած) Նուարդ, դու իմ հիացումս կը գրաւես :

ՆՈՒԱՐԳ. — Զաւէն, ես միայն այժմ, չորս ամիսներ անընդհատ աշխատելէ, ուսումնասիրելէ յետոյ միայն ըմբռնեցի ձեր այն խօսքերուն իմաստն ու ճշմարտութիւնը թէ՛ «փողոցները, ինքզինքնին կտոր մը չոր հացի համար վաճառող թշուառ աղջիկները, աւելի քիչ պատճառներ ունին շիկնելու, ամաչելու, քան հարուստներու տունը անհոգ, անաշխատանք, միայն իրենց հաճոյքին ետեւ գնացող եսասէր աղջիկները» :

Եւ ես այսօր, ոչ մէկ կասկած ունիմ, որ եթէ պահ մը հարուստներու ձեռքէն առնենք իրենց հարստութիւնը, եւ անոնք գործաւորի մը վիճակը ունենան, անոնց բոլոր այրերը աւազակներ կը դառնան եւ անոնց բոլոր կիներն ու աղջիկները փողոցները կը թափառին, ինքզինքնին ծախելու համար :

ԶԱԻԷՆ. — (Աւելի ուժգին սեղմելով Նուարդի ձեռքերը) Օ՛հ, ի՞նչքան հիանալի ես դու Նուարդ, դու արդէն իսկ համոզուած ընկերվարական մըն ես դարձեր :

ՆՈՒԱՐԳ. — (Կը խնդայ եւ պայուսակէն կարմիր անդամատետր մը հանելով, ցոյց տալէ յետոյ, կրկին պայուսակը կը դնէ) Տեսա՞ր :

ԶԱԻԷՆ. — Բայց ե՞րբ արձանագրուեցար :

ՆՈՒԱՐԳ. — Աւելի քան երկու ամիսներէ ի վեր, դիտմամբ ձեզ ալ չի գրեցի :

ԶԱԻԷՆ.— Սքանչելի է այդ Նուարդ, շարունակէ, շարունակէ մինչև վերջը: (Համբուրելու չափ կը մօտեցայ):

ՆՈՒԱՐԳ.— (Ետ քաշուելով) Շարունակե՛մ, բայց Ձաւէն այդ իմ կեանքս է դարձեր այլևս, այժմ իմ ամբողջ հաճոյքս ուրիշներու ծառայելն է, հոս է եղեր իսկական երջանկութիւնը, եւ ես չէի գիտեր առաջ:

ԶԱԻԷՆ.— Շատ ճիշտ էք Նուարդ, ի՞նչ է կեանքը, եթէ մարդ ուրիշներու չի օգներ, անոնց ցաւին ցաւակից չըլլար, անոնց վէրքին դարման չըլլար: Գիտես՝ ի՞նչքան հանգիստ է մարդու հոգին, այն օրը երբ նոյն իսկ ամենափոքր օգնութիւն մը ըրած է ուրիշին, այսպէս չէ՞... Նուարդ, մենք բոլորս ալ հիւրեր ենք այս աշխարհի վրայ, մենք ամէն մէկն ալ պիտի մեկնի այս աշխարհէն, առ առաւելն 60-65 տարիէն, եւ միթէ կ'արժէ՞, որ այդքան փոքր ժամանակի մը համար, այսքան տանջուի մարդկութիւնը, միթէ կ'արժէ՞, որ այդքան աննշան տարիներու համար, այսպէս զիրար բղբուն մարդիկ:

ՆՈՒԱՐԳ.— Շատ ճիշտ էք Ձաւէն, մարդիկ պէտք է այլասէր ըլլան, ոչ թէ անձնասէր, բայց այժմ, դժբախտարար ճիշտ հակառակն է, որուն համար ալ, երէկ ես չի կարողացայ ձեզ ըմբռնել, ես չէի կարող ըմբռնել, թէ դուք ի՞նչպէս կարող էք, այդքան անձնամոռացութեամբ մը, ձեզ նմաններուն համար աշխատիլ, մոռանալով ամէն հաճոյք, կրելով հազար տեսակ զրկանքներ... Ձաւէն ինչո՞ւ մեղքս պահեմ, ես ինքս ալ քանի՞ քանի անգամներ կասկածեր եմ եւ հարց եմ տուեր ինքզինքիս, թէ արդեօք ձեր այսօրուան գաղափարները եւ այդ գաղափարին ձեր մոլութիւնը, ծնած չէ՞ անիկ որ դուք ձախողներ էք կեանքի մէջ: Բայց յետոյ, անմիջապէս մտածեր եմ որ եթէ իմ կասկածները ճիշտ եղած ըլլային, այն ատեն պէտք էր գրկարաց զիս ընդունէիք, որովհետեւ՝ ինչ որ ալ ըլլայ՝ մի հարուստի աղջիկ եմ, ինձմէ գատ ոչ ոք չունին, այնպէս որ, այսօր թէ վաղը, անոնց հարստութիւնը ինձ

պէտք էր մնար, բայց ես տեսայ որ դուք փոխանակ զիս ամուր բռնելու, փոխանակ ծնողքս սիրաճահելու, դուք արհամարհեցիք հարստութիւնը, ծնողքիս երեսն իսկ տեսնել չուզեցիք, եւ ամենէն յետոյ ալ, իմ սէրն եւս ժխտեցիք, անոր գերադասելով ձեր գաղափարի սէրը:

Եւ ես այսօր միայն կ'ըմբռնեմ որ դուք իսկապէս ձեզ համար հոգեկան ուրիշ աշխարհ մը ստեղծեր էք եւ հոն ալ կ'ապրիք եղեր, իսկ ես ու իմ ծնողքը, բոլորովին մի ուրիշ հոգեկան աշխարհի մէջ, եւ որուն համար ալ մենք զիրար չի հասկցանք: Ճիշտ չե՞մ:

ԶԱԻԷՆ.— Շատ ճիշտ ես Նուարդ:

ՆՈՒԱՐԳ.— Բայց հիմա Ձաւէն, ես ինքս ալ քո աշխարհին մէջ կ'ապրիմ, ես ինքս ալ քեզ նման կը մտածեմ, ես ինքս ալ քո ճանապարհէն կը քայլեմ, ես ինքս ալ մէկ զինուորն եմ քո գաղափարին, յեղափոխութեան, ու իմ սիրտն ալ քուկիւնիդ նման այժմ կը արօփէ ի տես աշխարհի անիրաւուածներուն, թշուառներուն, խեղճերուն, որոնց համար դործելը, այժմ գերադասն հաճոյք մըն է դարձեր ինձ:

ԶԱԻԷՆ.— (Կը մօտեցայ համբուրելու) Ճիշտ այդպէս հոգիս, ճիշտ այդ կ'ուզէի լսել ձեզմէ:

ՆՈՒԱՐԳ.— (Թռչլ չի տալով որ համբուրէ) Բայց կեցիք Ձաւէն, այժմ ես ամուսնութեան մասին չեմ մտածեր, ես արդէն ամուսնացեր եմ, ՄԵՄ ԳԱՂԱՓԱՐԻՆ հետ, իմ միակ ամուսինս, հաճոյքի, հոգեկան զոհունակութեան աղբիւրս, ինքը՝ շարժարկուած մաստան է, ես հիմա միայն՝ անոր հարսն եմ դարձեր եւ կ'ուզեմ ամենայն հաճոյակատարութեամբ անոր ծառայել:

ԶԱԻԷՆ.— Նուարդ, դու չես կարող երեւակայիլ, թէ որքան գոհ եմ, որքան ուրախ, երբ այդ խօսողը դուք էք, երէկուան հաճոյք, կեանք փնտոող Նուարդը. բայց դուք այժմ նոր Նուարդ մըն էք, հին Նուարդը մեռեր է ձեր մէջ, ու ես հոգեկան փղձկուած մը կ'ունենամ մէջս, երբ կը վերջիչեմ հին Նուարդի մասին: Այն ատեն դուք միայն զգացողական սէր մը ունէիք ինձ հանդէպ, իսկ

ձեր հոգին հաճոյք, երջանկութիւն եւ կեանք կը փնտռէր միայն, իսկ այսօր, դուք դարձեր էք գաղափարի մի հոյակապ զինուորը եւ ձեր հոգեկան հաճոյքը կը փնտռէք կեանքի տառապանքին մէջ, եւ այն ալ միայն ուրիշներու համար, որովհետեւ դու ինքզիք հարուստի մը աղջիկն ես, ո՛հ ինչքան սքանչելի է այդ:

ՆՈՒԱՐԳ.— (Կը շիկնի գետինը նայելով):

ԶԱԻԷՆ.— (Շար.) Նուարդ իմ սէրն ալ ձեզ հանդէպ երէկ այնքան խոր չէր, երէկ ես սիրեցի ձեր նուրբ կազմը, ձեր շնորհալի ձեւերը, ձեր ուշիմութիւնը, ձեր դեղեկութիւնը եւ մանաւանդ՝ ձեր անհուն խորութիւն ունեցող սե աչքերը: Իսկ այսօր, ես դերագոյնօրէն կը սիրեմ, թէ ձեր անձը, թէ ձեր հոգին, թէ ձեր գաղափարները: (Յետոյ ձեռքով վեր վերցնելով Նուարդի գլուխը, ծիծաղելով) Ուրեմն հիմա այլեւս չե՞ս ուզեր ամուսնանալ հետս:

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) Ոչ:

ԶԱԻԷՆ.— (Աղաչակամ) Բայց ինչո՞ւ Նուարդ:

ՆՈՒԱՐԳ.— (Ծիծաղելով) Որովհետեւ:

ԶԱԻԷՆ.— (Տխուր) Բայց չի հասկցայ պատճառը:

ՆՈՒԱՐԳ.— (Լրջութեամբ) Ո՛չ Զաւէն, մենք այլեւս չի պէտք է ամուսնանանք, որովհետեւ մեր ամուսնութեամբ երկու զինուորներ կը պակսին պրոլետարական բանակէն, որուն այնքան պէտքն ունի բանուորական կուսակցութիւնը, մանաւանդ այսօր, երբ հորիզոնը մթադնած է, ամպերը կուտակուած են եւ տեղատարափը այնքան ալ հեռի չէ մեզմէ, —ինչպէս կ'ըսէիր:—

ԶԱԻԷՆ.— Բայց... Նուարդ... (ափշած կերպով):

ՆՈՒԱՐԳ.— Հաւատա Զաւէն, որ ես իմ անձին արժէք մը չեմ տար, բայց ինձի համար խղճի խայթ մը պիտի ըլլայ, երբ տեսնեմ որ փոթորիկի այդ օրերուն, դուք՝ պատանէչին վրայ չէք: Դուք՝ ուրիշ ճնշուած բանուորը մեծ ակնկալութիւններ ունի, եւ ես վստահ եմ որ դուք կ'արժեցնէք անոնց վստահութիւնը եւ յոյսերը:

ԶԱԻԷՆ.— Բայց դուք սկսաք իմ արժէքը չարա-

զանցեալ գնահատել Նուարդ, ես միայն սրբող զինուոր մըն եմ մեր բանակին մէջ:

ՆՈՒԱՐԳ.— Այո, մի գուցէ ձեր համեստութիւնը ձեզ կ'ստիպէ այդպէս ըսել, բայց ես դեռ կը յիշեմ անցեալ Կիրակի օրուան Քալիգրամի մէջ եղող մեծ ժողովը, իմ ականջին դեռ կը հնչեն այն խրատեցիչ ծափերը որ ձեզ տուին հայ եւ օտարազգի հազարաւոր բանուորները, ես տեսայ ձեր հոգեկան յուզումը, ի պատասխան այդ բուռն վստահութեան, ես տեսայ ձեր երկու կաթիլ արցունքները: Ո՛չ Զաւէն, ոչ, դուք պէտք է մնաք պատանէչին վրայ, ձեր ընկերներու կողքին, գիտակցած մասսային զլուխը, մինչեւ յաղթանակի վերջաւորութիւնը: Անկէ յետոյ եւ միայն անկէ յետոյ է որ ես կարող եմ մտածել ամուսնութեան մասին:

ԶԱԻԷՆ.— Ուրեմն դուք պիտի սպասէք ինձ, մինչեւ յաղթանակի այդ օրը:

ՆՈՒԱՐԳ.— Այո, պիտի սպասեմ, այժմ արդէն շատ զիւրին է ինձ համար սպասել, ես արդէն ամուսնացեր եմ ձեզ հետ, հոգեպէս, մեր հոգիները, մեր գաղափարները արդէն միացած են, չէ՞:

ԶԱԻԷՆ.— (Համոզել ջանալով) Բայց Նուարդ, չէ՞ք խորհիր որ դուք անձնագոհութենէն ալ անդին կ'անցնիք, չէ՞ք խորհիր որ մենք երկուքովնիս միացած, աւելի լաւապէս կը ծառայենք մեր գաղափարական գործին: Զէ՞ք խորհիր որ մենք աւելի մեծ ուժ մը կը կազմենք միացեալ:

Այլ էր երէկ, իսկ բոլորովին այլ է այսօր, երէկ, ինչպէս դու ինքզիք ալ նկատեցիր, դու հոգեկան ուրիշ աշխարհի մը մէջ կ'ապրէիր, իսկ ես բոլորովին ուրիշ, որուն համար ալ մենք զերար չէզոքացնող ուժեր էինք, իսկ այսօր, երբ մենք երկուքովնիս ալ միեւնոյն հոգեկան աշխարհին մէջ կ'ապրինք, մենք զերար լրացնող ուժեր ենք դարձեր, եւ կարող ենք միասնաբար ալ ծառայել, այն պերագոյն դատին որուն զինուորներն ենք դարձեր, ուրեմն մեր ամուսնութիւնը ինչո՞վ կարող է խանգարել մեր ՄԵՍ ԳՈՐԾԸ:

- ՆՈՒԱՐԳ. — (Թուլամալու նշաններ ցոյց կուտայ) :
- ԶԱԻԷՆ. — (Շար.) Ո՛չ Նուարդ, ոչ, մենք ոչինչով չենք լքեր մեր ՄԵԾ ՆՊԱՏԱԿԸ: Մենք միասնաբար կը մնանք անոր զինուորը, միասնաբար պատնէջին վրայ, եւ միասնաբար կը կռուինք մինչեւ ՄԵԾ ՅԱՂԹԱՆԱԿԸ:
- Վստահ եղիր Նուարդ, որ մեր գաղափարի ընկերները ասկէ աւելին չեն պահանջեր մեզմէ, որովհետեւ՝ աստիճանաբար անձնագոհութիւն չէ, այլ պարզապէս անձնասպանութիւն: Իսկ մեր ընկերները երբե՛ք, երբեք չեն ուզեր տեսնել որ մենք անձնասպան ըլլանք:
- ՆՈՒԱՐԳ. — (Աւելի կը թուլնայ եւ Զաւէնի կը մօտենայ) :
- ԶԱԻԷՆ. — (Գերագրգռուած, երկու ձեռքով կը բռնէ Նուարդի երկու երեսները, կը մօտեցնէ իրեն, ուղղակի անոր աչքերուն մէջ նայելով) Նուարդ, դու իմս պիտի ըլլաս եւ ես քոն, աշխարհային ոչ մէկ ուժ չէ կարող մեզ իրարմէ բաժնել: (Զերմագին եւ երկարօրէն կը համբուրէ) :
- ՄԻՐԱՐԲԻ. — (Գուռը կը բանայ, կը տեսնէ, կ'ուզէ գոցել եւ գնալ) :
- ԶԱԻԷՆ. — (Կը տեսնէ Սիրարբի, բաժնուելով նրուարդէն) Սիրարբի, ճաշերնիդ վերջացա՞ւ:
- ՄԻՐԱՐԲԻ. — (Ծիծաղելով) Այո Պրն. Զաւէն:
- ԶԱԻԷՆ. — Լաւ, մենք ձեզ գիշեր բարի կ'ըսենք գուրսը ճաշարանը:
- ՄԻՐԱՐԲԻ. — Շատ լաւ Պրն. Զաւէն: (Կը մեկնի) :
- ԶԱԻԷՆ. — (Ծիծաղելով) Գնանք Նուարդ:
- ՆՈՒԱՐԳ. — (Ծիծաղաբեր) Գնանք, բայց զեռ եւս պիտի սպասենք, չի պիտի ամուսնանանք:
- ԶԱԻԷՆ. — Լաւ լաւ, գնանք: (Կը գնան) :

(Վարագոյր)

Վերջ Գ. Արարուածի

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

Ճամանակ — Տասը Տարի Յետոյ  
Եղանակ — Ամառ

(Բեմը կը ներկայացնէ ընտանեկան հաւաքոյթներու յատկացուած փոքր սրահ մը, սրահին մէջտեղը երկար սեղան մը. վրան գինիի շիշեր, ուտելիքներ եւ պտուղներ, եւ երեք փուսջ ալ ծաղիկներ: Սեղանին մօտ սրահին մէկ անկիւնը դաշնամուր մը, անոր կողքին ֆոֆոկերափ մը, պատերէն կախ կան գործաւորական յաղթանակները խորհրդանշող մեծ նկարներ, անոց կողքին Քարլ Մարքսի, Ֆրէտերիկ Էնկէլսի, Նիֆօլա Լէնինի եւ Ստեփան Շահումեանի նկարները. սրահը ունի սահուն տախտակամած մը պարելու համար եւ մի քանի պատուհաններ) :

ԾԱՆՕԹ. — Այս արարուածին մէջ գործողները բոլորն ալ հագուած են ամառնային զգեստներ, միշտ ուրախ, ծիծաղկոտ, եւ իրարու որպէս ածական կը գործածեն «ընկեր»:

ՅԱԿՈՒ. — (Ունի փոքր պելս մը եւ մօրուս մը, պատուհանէն դուրս նայելով) Ընկ. Մանուկեան, սեղանը այնպէս մը շտկէ որ կարելի ըլլայ զիւրութեամբ մէկ կողմ տանիլ:

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — (Ունի պելս եւ փոքր մօրուս մը, շտկելով սեղանին վրայիները) Ինչո՞ւ ընկ. Յակոբ:

ՅԱԿՈՒ. — Ի՞նչպէս թէ ինչու, նոյն իսկ սեղանին վրայ պարողներ պիտի ըլլան, հանրային երջանկութեան ֆօլիսէրը իր լաւագոյնն ըրած է, որ այս երեկոյտ-խորհրդոյքը փառաւոր անցնի, մեզ տուած է ճոխ գինի, շատ մը ուտելիքներ, ամէն տեսակ սրտուղներ, ինչպէս նաեւ պարողներ, երգողներ, նուագողներ, սրախօսներ արտասանողներ եւ նուագախումբ, ամէն բան: (Ծանօթ. — անոնք միայն թուի որ քիչ յետոյ տեղի պիտի ունենան) :

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Սեղանին մէկ ծայրը նստելով) Ուրեմն ընկ. Յակոբ, այնպէս կ'երեւայ որ տասը տարիներէ ի վեր, առաջին հաճոյալից ժամանցն է որ պիտի ունենանք:

ՅԱԿՈՒԲ.— Անշուշտ, տասը տարիներէ ի վեր, ի՞նչ որ տեսանք, արդէն առաջին հինգ տարիները, յեղափոխութեան տարիներ եղան, իսկ վերջին հինգ տարին ալ, վերաշինութեան, այնպէս որ, այդ տասը տարիներուն մէջ, ես միայն երկու օր կը յիշեմ որ մի քիչ ապրեցանք:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Ո՞ր օրերը կ'աշխարհէք, ընկ. Յակոբ:

ՅԱԿՈՒԲ.— Մէկը՝ ընկեր Գեղամի եւ Նազենիի հարսանիքը, միւսն ալ ընկ. Ճանի եւ Սրբուհիի, չէ՞, ահա այդ է տեսածնիս, տասը տարուան անապատին մէջ, միայն երկու փոքրիկ ուխտիւններ:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Նստելով աթոռի մը վրայ, իր մատանիին հետ խաղալով) Է՛յ աւելին ալ չէինք սպասեր, այդ ի՞նչ օրեր էին որ տեսանք, թէ եւ անոնք անդառնալի կերպով դնացին, բայց չէ ալ կարելի մտնալ, այդ ի՞նչ օրեր էին ընկ. Յակոբ, արիւնի, ջարդի, հրդեհի, ի՞նչ սոսկալի օրեր էին:

ՅԱԿՈՒԲ.— (Գալով եւ Մանուկեանի քով աթոռի մը վրայ նստելով) Իսկապէս որ, եթէ բաղդատենք մեր յեղափոխութիւնը ոուսականին հետ, պէտք է ըսել որ ոուսականը անարիւն յեղափոխութիւն մը եղաւ:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Այդպէս ալ պէտք էր ըլլար, անպիտան պուրժուազին հոս շատ ուժեղ էր, շատ:

ՅԱԿՈՒԲ.— Ուժեղն ալ խօ՞սք է, եւ ինչո՞ւ ուժեղ չըլլար, երբ իր կողքին ունէր բոլոր մութ ուժերը, բոլոր հաստատութիւնները, նոյն իսկ ստորերկրեայ շատ մը կազմակերպութիւններ եւ նոյն իսկ այդ խնամութեամբ պահուող անոնց կողմը անցան, այդ յիմարներն ալ, կը խորհին եղեր թէ, մենք իրենց 5-10 հազար տոլար հարստութեան աչք ունինք, վայ յիմարներ վայ: (Գլուխը շարժելով):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Բայց գիտե՞ս ընկ. Յակոբ, թէ մեր գործը որքա՞ն պիտի դժուարանար, ով՞ գիտէ թերեւս յեղափոխութիւնը ձախողէր, եթէ Անդրանդեան նախարարնի նաւազները չի գրաւէին բոլոր գրահակիրները եւ չի ուժակոծէին Նիւ Եորքը եւ միւս ծովագրեայ քաղաքները, իսկապէս որ այդ պուրժուազին մէջքը կոտրեց:

ՅԱԿՈՒԲ.— Բայց ոչ, ընկ. Մանուկեան, Անդրանդեանի նաւարածինը Նիւ Ինկլէնտի մի քանի նահանգները միայն գրաւեց, մինչդեռ ապստամբ օդանաւորները պուրժուայի մուխը մարեցին, եւ ի՞նչ կ'ըլլար միջին արեւելքի վիճակը, եթէ Շիքակոյի կամաւորական խումբերուն չի միանար տեղական բանակը: Պէտք է ընդունիլ որ ամբողջ միտքը վէտքը գրաւողը եղաւ Շիքակոյի կամաւորական խումբը, եւ անոնց միացող տեղական բանակը, իսկ Սաուքը մաքրողները արդէն նիկրօները եղան:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Շատ ճիշտ ես ընկ. Յակոբ, այդ սեւերը ամէնէն մեծ գործը տեսան, որոնցմէ ամէնէն քիչ բան կը յուսայինք: Շատ՝ շատ տարօրինակ է յեղափոխութիւնը, մինչեւ վերջին վայրկեանը չես գիտեր թէ ի՞նչ ուժեր կը միանան քեզի: Միթէ Սէնթ Լուիզի չըրջանը մաքրողներն ալ այդ սեւերը չեղա՞ն:

ՅԱԿՈՒԲ.— Ընկ. Մանուկեան, մենք հայերս ալ լաւ էինք, կ'ըսեն՝ որ մէկ հայ գործաւոր իսկ չէ գտնուած պուրժուական բանակին մէջ: Մինչդեռ՝ ամէն հայ, բացի քանի մը գորգի վաճառականներէ եւ քանի մը թափթրժուքներէ, բոլորն ալ յեղափոխութեան մաս կազմեցին:

ՏԵՍԻՒ Բ.

ԳԵՂԱՄ.— (Ներս մտնելով) Բարեւ ձեզ վեթերաններ:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Օ՛ր բարեւ բարեւ ընկ. Գեղամ:  
ՅԱԿՈՒԲ.— Բարի եկաք, ընկեր Գեղամ:  
ԳԵՂԱՄ.— Է՛յ, ի՞նչպէս էք, տեսնեմ:  
ՄԱՆՈՒԿ.— Շատ լաւ, ընկ. Գեղամ, (աթոռ մը

ցոյց տալով) Խնդրեմ՝ նստեցէք, դեռ շատ կանուխ է, մի քիչ կը խօսակցինք:

ԳԵՂԱՄ.— Բայց ի՞նչ խօսակցինք ընկերներ:

ՅԱԿՈՒՅ.— Այլ ի՞նչ կայ խօսակցելու, դու չեկամ, մենք արդէն սկսած էինք, վերջիշումներ ըրինք յերափոխութեան օրերէն, վերաշինութեան օրերէն:

ԳԵՂԱՄ.— Թէ ոչ՝ կը փոխփոխայէիք, վերագնահատումի ենթարկելով երէկը:

ՅԱԿՈՒՅ.— Ձէ պէ, այսպէս՝ արդէն եղածները իրարու կը սրտամէկինք:

ԳԵՂԱՄ.— Ընկերներ՝ այդպէս ալ պիտի ըլլայ, աւելի քան հազար տարի եւ թերեւս աւելի, մարդկութեան խօսելիք, գրելիք, վիճելիք նիւթը այդ ՊՐՈՒԵՏԱՐԱԿԱՆ ՄԵՍ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆԸ պիտի ըլլայ:

ՅԱԿՈՒՅ.— Իսկ անկէ յետո՞յ, ընկ. Գեղամ:

ԳԵՂԱՄ.— Անկէ յետոյ մի ուրիշ ՅԵՂԱՓՈՒՈՒԹԵԱՆ մասին, մի ուրիշ ՆՈՐ ՕՐՈՒԱՆ մասին, մի ուրիշ ԿԱՐԳԵՐՈՒ մասին, չէ՞ որ մարդը գոյութիւն պիտի ունենայ:

ՅԱԿՈՒՅ.— (Ձարմացած) Բայց ի՞նչ յերափոխութիւն, ի՞նչ նոր կարգեր ընկ. Գեղամ, ընկ. Չաւէն ոչինչ չէ խօսած այդ մասին:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Իսկպէս ալ, պէտք էր խօսած ըլլար:

ԳԵՂԱՄ.— Բայց ընկերներ, ընկեր Չաւէն ոչ մի տեղ մի աւելորդ բան չի խօսիր, նա միշտ ալ նախ քան խօսելը, կը շփեմ, կը կշռէ, եւ յետոյ կը խօսի, նա ինչո՞ւ պիտի խօսէր ձեզ ասկէ հազար տարի յետոյ ըլլալիքի մասին, չէ՞ որ մինչ այն ատեն 40 սերունդ փոխուած կ'ըլլայ:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Բայց ես միշտ ալ համոզուած էի թէ ընկերվարական կարգերը տեւական պիտի ըլլան, վերջնական պիտի ըլլան:

ԳԵՂԱՄ.— Ո՛ւշ, ոչ ընկերներ, այս աշխարհի վրայ, ոչինչ տեւական է, ոչինչ վերջնական, մի այդպիսի բան գոյութիւն չունի:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Ի՞նչպէս թէ...:

ՅԱԿՈՒՅ.— (Ձարմացած) Ապա՛:

ԳԵՂԱՄ.— Ընկերներ, որքան ատեն մարդը կ'ապրի, նա պիտի գնայ դէպի կատարելութիւն: Հարիւր միլիոնաւոր տարիներէ ի վեր մարդը գոյացած է, եւ իւրաքանչիւր հազար տարին նա մի քիչ աւելի մօտեցած է կատարելութեան: Այդպէս ալ պիտի շարունակուի: Այս աշխարհի ոչ սկիզբին եւ ոչ ալ վախճանին մեր խելքը չի հասնիր, իսկ համաձայն ընկ. Չաւէնի՝ նա ոչ սկիզբ ունի եւ ոչ ալ վախճան:

ՅԱԿՈՒՅ.— Բայց ի՞նչպէս կարելի է այդ:

ԳԵՂԱՄ.— Լսէ այժմ ընկ. Յակոբ, դու ինքը հազար անգամ տեսեր ես Շիքակոյի գետը, չէ՞:

ՅԱԿՈՒՅ.— Այո, հազարաւոր անգամներ:

ԳԵՂԱՄ.— Լաւ որ այդպէս, ամէն անգամ որ կը կանգնիս կամուրջին վրայ, կը դիտես գետը, նոյն գետն է, չէ՞, բայց ոչ միւսնոյն ջուրը, ըսել կ'ուզեմ, մի օր, մի ժամ, մի վայրկեան առաջուան քու տեսած ջուրը, գնացած հեռացած է, այլևս չի վերադառնալու պայմանաւ, այժմ քու տեսածը նոր ջուր մըն է, իսկ գետը միւսնոյն գետն է, միշտ Շիքակոյի գետը: Ճիշտ այդ գետին նման ալ, այս աշխարհն է, միշտ միւսնոյն աշխարհը, միայն մարդիկ են որ մին միւսին ետեւէ, ճիշտ ջուրին նման, կուգան եւ կ'երթան: Ո՞վ գիտէ թերեւս կրկին դալու համար, թերեւս ըսի, որովհետեւ նիւթը չի մեռնիր, ալ կը գոյափոխուի:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Բայց ընկ. Գեղամ, այդ մի գուցէ ճիշտ ըլլայ գետի-ջուրի, աշխարհի-մարդու նկատմամբ, բայց...:

ԳԵՂԱՄ.— (Խօսքը կտրելով) Կեցիր ընկ. Մանուկեան, հասկցայ ինչ պիտի ըսէք, եւ չեմ բաղձար որ ձեր բերնով այդ սխալը ընէք: Այո ընկ. Մանուկեան, հասարակական երեւոյթներն ալ ճիշտ մարդուն նման կը ծընին, կը հիմնաւորուին եւ կը մեռնին, եւ այդ փոփոխութիւններէն մին բարեբախտաբար ձեր օրով տեղի ունե-

ցաւ, դուք չի մեղացիք պուրժուական հասարակա-  
կարգը, դուք չի ստեղծեցիք ընկերվարական այս հասա-  
րակակարգը:

ՅԱԿՈՒՅ.— Ճիշտ էք ընկեր Գեղամ եւ շատ ճիշտ, ի-  
ցիւ թէ այս երեկոյ ընկ. Չաւէն կամ իր կինը այդ ուղ-  
ղութեամբ մի քիչ խօսէին:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Անհոգ եղիր ընկ. Յակոբ, կամ այլը  
կամ կինը, մէկը կամ միւսը, կը խօսին այդ մասին:

ՅԱԿՈՒՅ.— Օ՛ր ի՛նչքան հետաքրքրական է գիտու-  
թիւնը, ուրեմն կը լսենք այս երեկոյ:

ԳԵՂԱՄ.— Բայց ոչ ընկերներ, հանրային ապահո-  
վութեան ֆոմիսարի խնդրանքով եւ յեղափոխութիւնը  
խորացնելու նպատակով, մեզմէ խնդրուած է որ լաւա-  
պէս օգտագործենք այս երեկոյթը, այնպէս որ անոնք  
երկուքն ալ, թէ այլը եւ թէ կինը, ուրիշ նիւթի մասին  
պիտի խօսին, բայց նոյնքան հետաքրքրական:

ՅԱԿՈՒՅ.— Ուրեմն դուք գիտէք թէ ի՛նչ նիւթի մա-  
սին պիտի խօսին:

ԳԵՂԱՄ.— Այո ընկերներ, Տիկ. Նուարդ պիտի խօ-  
սի «Կինը երէկ եւ այսօր» նիւթի մասին, իսկ ընկ. Չա-  
ւէն՝ երէկուան եւ այսօրուան բաղդատականը պիտի ընէ:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Ոտքի կանգնելով) Լաւ, լաւ, այդ  
աւելի հետաքրքրական է, մենք գեո շատ պէտք ունինք  
լսելու: (Ոտքի կ'ելլեն Գեղամ եւ Յակոբ): (Ներս կը  
մտնեն նախ Տէր եւ Տիկ. Նմանեանները, յետոյ Չան եւ  
Սրբուհի, որոնք սեղանին մօտեցաւ սովորական բա-  
րեւներէն յետոյ, կը նստին: Կը նստին նաեւ Մանուկեան  
եւ Յակոբ, կիները այր մարդոց միջեւ մնալով):

ԳԵՂԱՄ.— (Գեո ոտքի վրայ) Տիկ. Նմանեան, նա-  
զենին ձեզ հետ չէ՞ր:

Տիկ. ՆՄԱՆ.— Այո մեզ հետ էք, բայց Սիրարբիին  
հետ հանրային դեղարան մը մտան, անշուշտ հիմա կու-  
գան:

(Ներս կը մտնեն Տէր եւ Տիկ. Տարբերեաններ, բա-  
րեւներէ յետոյ, Տիկինը կը նստի երկու այրերու միջեւ):

(Ներս կը մտնեն Նազենի եւ Սիրարբի, բարեւներէ  
յետոյ, Նազենի կը նստի, անոր կողքին Գեղամ, իսկ Սի-  
րարբի դաշնամուրին մօտ, քուղթի մը վրայ բան մը կը  
սերտէ):

ՏԻՎ. ՏԱՐԲ.— Տիկ. Նազենի, փոքրիկը ի՞նչ ըրեք:

ՆԱԶԵՆԻ.— Խորհելով թէ մեզ նեղութիւն կը պատ-  
ճառէ, մեր թաղի երախայից կայանը թողուցինք, Տիկի՛ն  
տեսնելու էիր, ի՞նչ մաքրութիւն, ի՞նչ հոգատարու-  
թիւն, հաւատացէք որ մենք մայրերս այդքան խնամք  
չենք կարող տալ մեր զաւակներուն, այդ կըթուած, մար-  
գուած հոգարարձուհիները կարծես իսկական մայրերն  
են մեր զաւակներուն:

ՊՕՂՈՍ.— (Ներս մտնելով, կը բարեւէ բոլորը եւ  
Գեղամի կողքին մէկ աքռա պարսպ ձգելով միւսին վրայ  
կը նստի, բոլորին ուշադրութիւնը գրաւելով):

ՏԱՐԲԵՐԵԱՆ.— Ե՞րբ էք վերադարձեր ընկ. Պօղոս:

ՊՕՂՈՍ.— Մի քանի շաբաթներէ ի վեր հոս եմ, սը-  
խալ, շատ սխալ էր ըրածս, կատարեալ յիմարութիւն մը,  
որ փախայ, գէթ սա վերջին հինգ տարիները հոս ըլլայի,  
այժմ արդէն ընտելացած կ'ըլլայի նոր կարգերուն, ի՞նչ  
գիտնամ, ես խորհեցայ թէ յեղափոխութիւնը մի ժա-  
մանակաւոր բան է, շուտով կը վերջանայ եւ կրկին նոր-  
մալ կեանք կ'ստեղծուի, բայց սխալեցայ:

ԳԵՂԱՄ.— Ընկ. Պօղոս, ճիշտ էք որ յեղափոխու-  
թիւնը մի ժամանակաւոր բան է, եւ անոր նորմալ վիճակ  
մը կը յաջորդէ, (խնդալով) բայց ինձ այնպէս կը թուի  
որ ձեր ակնարկած նորմալ վիճակը, հին կարգերու վե-  
րադարձն է, չէ՞:

ՊՕՂՈՍ.— (Գլուխով) Այո, այո, (խնդալով):

ՍԻՐԱՐԲԻ.— (Կը նստի Գեղամին եւ Պօղոսին մի-  
ջեւ):

ՊՕՂՈՍ.— Բայց գեո ընկ. Չաւէնը եւ իր Տիկինը  
չէ՞ն եկեր:

ՍԻՐԱՐԲԻ.— Անշուշտ հիմա կուգան, մի գուցէ  
փոքրիկը շաբաճճիութիւն մը ըրած է որ ուշացան:

ԶԱԻԿՆ.— (Ներս կը մտնեն Զաւէն, պիտ եւ փոքր մօրուսով, Նուարդ իր փոքրիկին ձեռքէն բռնած, բոլորը ոտքի կը կանգնին, Զաւէն գլխով բարեւելով) *Դուք դեռ եւս չէք մոռցեր, ունակութիւն դարձած պուրժուական սովորութիւնները, նստեցէք, նստեցէք:* (Կը նստի, իսկ Նուարդ եւ իր փոքրիկ սղույն հետ կը նստի Զաւէնի եւ Մանուկեանի միջեւ):

ՆՄԱՆՆԱՆ.— *Բայց ոչ ընկ. Զաւէն, սա հին սովորութիւն մը չէ, թէեւ անոր նմանութիւնն ունի, բայց սա մեր սրտի խորէն դուրս պոսթկացող սիրոյ, յարգանքի եւ հիացումի արտայայտութիւն մըն է ձեզ հանդէպ:*

ԶԱԻԿՆ.— *Լաւ, լաւ, նստեցէք* (Ինքն ալ նստելով) *Բայց ես գիտեմ որ տարիներէ ի վեր ունակութիւն դարձած սովորութիւնները մի քանի տարիէն արմատախիլ չեն ըլլար:*

ԳԵՂԱՄ.— *Շատ ճիշտ էք ընկեր Զաւէն, մեր հինգ տարուան փորձառութիւնը կուզայ հաստատել ձեր ըսածը, աւելի դիւրին է նորութիւն մը տեղաւորել մէկու մը գլուխը, քան անկէ ունակութիւն մը դուրս քաշել:* (Լընուրիւն մը):

ՆՈՒԱՐԳ.— (Ոտքի ելլելով) *Ընկերներ, ես կը խորհիմ որ արդէն ժամանակը լրացած է, եւ հրաւիրեալները բոլորն ալ հոս են, ուրեմն ես կ'առաջարկեմ սեղանապետ մը ընտրել եւ երեկոյթին սկսիլ:* (Կը նստի):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— *Դուք, դուք ընկերուհի... ձեզ կ'ուզենք:* (Շափեր):

ՆՈՒԱՐԳ.— *Ես ամենայն սիրով պիտի ընդունէի այդ պատիւը, բայց ձեզ ծանօթ է որ ես արդէն պարտակալութիւն մը ստանձնած եմ, ուրեմն կը խնդրեմ որ չի պնդէք եւ մի ուրիշը ընտրէք:* (Կը նստի):

ՍԻՐԱՐԲԻ.— *Ընկ. Զաւէնը նոյնը պիտի ըսէ, այդ իսկ պատճառաւ ալ, ես կ'առաջարկեմ մէկը որ այդ պաշտօնը շատ անգամներ այնքան ձեռնհասօրէն վարած է, նոյն իսկ հին բէթմի օրով, ես կ'առաջարկեմ ընկ. Մանուկեանը:* (Կը նստի):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն ծափեր) *Լաւ, լաւ, ընկ. Մանուկեանը:*

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Նստած տեղէն) *Լաւ, նախ դաւաթները լեցուցէք:* (Յետոյ ոտքի կանգնելով) *Ընկերներ, նախ խորին շնորհակալութիւններս ձեզ բոլորիդ, ինձ ըրած այս պատիւին համար: Ընկերներ, համայն Միացեալ Նահանգներու ընկալութիւնը, իր բոլոր այլազան ցեղերով, որոնք դեռ եւս ի մի չեն ձուլուած, երէկէն մինչեւ այս երեկոյ, խանդավառ խրախճանքներու մէջ են, սօնելով պրոլիտարական փառապանծ յեղափոխութեան յաղթանակի ճիգ տարելիցը: Երէկ՝ մենք բոլորս ալ մաս կազմեցինք այդ անմոռանալի տօնին: Իսկ այս երեկոյ նոյնն է որ կը շարունակենք, միայն աւելի սեղմ շրջանակի մը մէջ, եւ այդ՝ սքանչելի պատճառաւ մը: Պէտք է ըսել որ այս հաւաքումի դադափարը կը պարտինք մեր բոլորին սիրելի Օր. Սիրարբիին, որ այժմ ուսանողուհի մըն է Իլինոյզի համալսարանի տնտեսագիտութեան դասընթացքին: Մեր կրտսեր ընկերուհին, զեղեցիկ դադափարը յղացած էր որ այս երեկոյ հոս, այս սրահին մէջ, այս սեղանին շուրջ հաւաքուելով յարգանքի փոքր պարտք մը կատարենք մեր դատին մեծապէս ծառայած Տէր եւ Տիկին Զաւէնի:*

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Շար.) *Մանուանդ որ այսօր, երէրորդ տարելիցն է իրենց սիրասուն դաւակին, փոքրիկ Աւետիսին:*

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— *Ուրեմն ընկերներ, այս երեկոյթին ջնջը սարքուած է ի պատիւ Տէր եւ Տիկին Զաւէնի, իրենց փոքրիկ Աւետիսին Երկրորդ տարելիցին առթիւ:*

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Կը վերցնէ իր գաւաթը):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բոլորը ոտքի կանգնած կ'առնեն իրենց գաւաթները):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Իր գաւաթը բարձրացնելով) *Ու-*

րեմն մեր առաջին գաւաթները կը պարպենք Տէր եւ Տի-  
կին Չաւէնի եւ անոնց փոքրիկին կենացը: (Գաւաթը Չա-  
ւէնի կողմը երկարելով) Չեր կենացը: (Կը պարպէ, նոյնը  
կ'ընեն բոլոր հանդիսականք, Չաւէն եւ Նուարդ նստած  
կը մնան):

ՁԱԻԷՆ.— (Ոտքի կանգնելու եւ բան մը ըսելու  
փորձ կ'ընէ):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Չեոքը Չաւէնի երկարած) Ո՛չ ընկ-  
Չաւէն, ձեր եւ ձեր Տիկնոջ խօսելու կարգը էն վերջը  
ձգուած է:

ԾԱՆՕԹ.— (Ներկայացումը երկարցնելու համար  
այստեղ կարելի է աւելցնել արտասանութիւն, երգ, պար,  
նուագ եւն., որոնք սեղանապետը մի առ մի կը հրաւիրէ):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Ոտքի կանգնելով) Ընկերներ, ըն-  
կեր Յակոբ ըլլալով մեր հին ընկերներէն եւ վէթէրան-  
ներէն, ես անոր պիտի տամ արեւչատուփիւն մաղթելու  
առաջին պատեհութիւնը, հրամեցէք ընկ. Յակոբ:

ՅԱԿՈՒԲ.— (հնդալով) Ոորպէս չնորհակալ եմ ըն-  
կեր սեղանապետ, որ զիս մեծապէս պատուեցիք: Ընկեր-  
ներ, նախ կը խնդրեմ որ բոլորդ ալ ձեր գաւաթները ա-  
ռած ոտքի կանգնիք: (Բոլորք ոտքի կը կանգնին գաւաթ-  
ները ձեռքերին) Ես այս գաւաթը կ'առաջարկեմ որ մին-  
չեւ յատակը կոնծենք մեր միլիոնաւոր անանուն եւ ան-  
ծանօթ ընկերներու կենացը, որոնք հերոսաբար ինկան  
պրոլետարական մեծ յեղափոխութեան ընթացքին: (Կը  
պարպէ, եւ կը պարպեն բոլորք, բուն ծափեր) Կեցցե՛ն  
հերոսներ: (Կը նստին բոլորք, բացի Յակոբէն, որ դառ-  
նալով սեղանապետին) Ընկեր Մանուկեան, առանց Նա-  
ղովրեցի Յիսուսին ազգականը ըլլալու, կատարեալ հրա-  
շագործ մը եղեր էք, եւ ես չէի գիտեր:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Ի՞նչպէս թէ ընկ. Յակոբ:

ՅԱԿՈՒԲ.— (հնդալով) Նաղովրեցին մեծ հրաշք մը  
գործեց ջուրը գինիի փոխելով, իսկ դուք աւելի մեծ  
հրաշք մը գործեր էք, գինին ջուրի փոխելով, որ աւելի  
հաւանական է:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Քահ քահ կը խնդան եւ կը ծա-  
փեն):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Բայց ընկեր Յակոբ, համաձայն  
պարենաւորման ֆոմիսէրին, տարուան այս եղանակին այս  
լաւագոյն զինին է, որ կրնանք ունենալ: Ընկերներ, ինձ  
այնպէս կը թուի թէ եթէ իւրաքանչիւր արեւչատուփեան  
մէկ մէկ գաւաթ կոնծենք, մեր երեկոյթը հոսմէական  
խնջոյք մը կը դառնայ, եւ բոլորս ալ հարբած հոս կը  
մնանք, ուրեմն, ես կը փափաքեմ որ բոլոր գաւաթները  
լեցուին, բայց միայն ամէն ոք իր գաւաթը պարպէ, իր  
արեւչատուփիւնը ընելէն յետոյ: Այժմ կարգը ընկեր  
Նմանեանինն է, հրամեցէք ընկեր Նմանեան: (Կը նստի):

ՆՄԱՆԵԱՆ.— (Ոտքի ելլելով) Ընկերներ, թշուառու-  
թեան, տառապանքի երկար տարիներ ապրեցանք երէկ,  
իսկ այսօր խանդավառ եւ յուսալից օրերու մէջ ենք, եւ  
երբ կը մտածեմ թէ որո՞ւ, որո՞ւ կը պարտինք այս օրը,  
որ մեզ ազատեց երէկուան մեր սարուկ վիճակէն, եւ  
այսօր գէթ որպէս ազատ մարդ կ'ապրինք, կը տեսնեմ  
որ այս ամէնը մեզ տուողը եղաւ պրոլետարական փա-  
ռապանծ յեղափոխութիւն, ուրեմն կեցցէ եւ յաւէտ կեցցէ  
պրոլետարական յեղափոխութիւնը: (Կը խմէ եւ կը նըս-  
տի):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բուն ծափեր) Կեցցէ յեղափո-  
խութիւնը:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Այժմ կարգը Տիկ. Նմանեանինն է,  
հրամեցէք Տիկին: (Կը նստի):

ՏԻԿ. ՆՄԱՆ.— (Ոտքի կանգնելու միջոցին, իր ա-  
մուսնոյն) Քա, ի՞նչ ըսեմ:

ՆՄԱՆԵԱՆ.— Բան մը ըսէ, բան չկ'այ ըսելիք,  
չկա՞յ:

ՏԻԿ. ՆՄԱՆ.— Ընկեր սեղանապետը զիս դժուարին  
կացութեան մը մէջ դրաւ, ի՞նչ ըսեմ ընկերներ, եթէ ոչ  
խոստովանիլ որ ես երբե՛ք, երբեք չէի կարող հաւատալ  
որ ընկերվարութիւնը կ'իրականնայ եւ մեզ այսքան բա-  
րիքներ կը բերէ, եւ երբ կը մտածեմ մեր երէկուան վի-

ճակին, մեր քաչած թշուառութեան մասին ու երբ միտքս կ'իյնայ որ ես ինքս տարուած կրօնական սին նախապաշարութեանը, չի հաւատացող մըն էի ընկերվարութեան, հաւատացէք ես ինքս իրմէս կամաճեմ, բայց այսօր՝ խորտակուալու եմ որ ես ինքս եմ եղեր սխալ մտածողը, եւ ճիշտ են եղեր ընկ. Զաւէնը եւ իր ընկերները եւ որոնց կարգին իմ ամուսինը: Այժմ ես այս գաւաթը կը խմեմ սրտովին կոչելով անկցին Հին Օրերը, եւ կեցցէ ՆՈՐ ՕՐը: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ. — (Բռուն եւ երկարատեւ ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Իսկ այժմ ալ ձեզ կ'ուզենք լսել ընկերուհի Նազենի:

ՆԱԶԵՆԻ. — (Ոտքի կանգնելով) Ընկերներ, 1915ի թրքական անսելի ջարդերէն յետոյ, երբ այլեւս աշխարհ մութ էր մեզ համար, ու մեր կեանքը միայն տառապանք մըն էր դարձեր, մտքէս, երազէս իսկ չէր անցնէր թէ մի օր՝ այն ալ Անտլանդեանի այս հեռուոր ասիերին, այսքան շուտ, ՆՈՐ ՕՐԵՐ պիտի տեսնենք, ՆՈՐ ԿԵԱՆՔ պիտի ունենանք: Բայց այսօր, այդ արդէն իսկ իրականութիւն մըն է եւ զայն իրականացնողը ընկերվարական վարդապետութիւնը եղաւ, ուրեմն ես այս գաւաթը կը խրամամ բոլոր ուժովս աղաղակելով կեցցէ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆԸ: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ. — (Բռուն եւ երկարատեւ ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Այժմ կարգը նախկին մեծահարուստ գորգի վաճառականներէն ընկ. Կարապետ Տարբերեանինն է, հրամեցէք ընկ. Կարապետ: (Կը նստի):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Ոտքի ելլելով) Ընկերներ, ես այս երկկոյ բոլորդ ալ յուսախար պիտի ընեմ, դիտեմ որ դուք բոլորդ ալ լարուած ուշադրութեամբ մը կ'ուզէք զիս լսել, որպէս նախկին մեծահարուստի մը, որպէս դժգոհի մը, ճիշտ է որ բոլոր ունեցածս կորսնցուցի, բայց ո՞ր մէկունը մնաց, եւ երբ եղածը ընդհանուր է, ցաւն ալ այնքան խոր չըլլար: Ես աւելի քան ուրախ եմ ընկերներ, որ գէթ վերջին պահուն, լսեցի աղջկանս եւ փեսիս թել-

յադրութիւններն ու կամովին յանձնեցի խանութիս բալանինը, ուժ չի տուի պուրժուական բանակին եւ այդպէսով գէթ կեանքս ազատեցաւ: Եւ այսօր, որ հինգ տարիներէ ի վեր ՆՈՐ ԿԱՐԳԵՐՈՒ տակ կ'ապրեմ, հաւատացէք ընկերներ, որ այնքան ալ դժգոհելու պատճառներ չունիմ, մինչդեռ շատ մը ուրախանալու պատճառներ ունիմ:

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ. — (Ծափեր):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Շար.) Ընկերներ, մեր երէկուան կեանքը այնքան ալ խաղաղ, երջանիկ կեանք մը չէր, որքան ձեզնից շատերը կը կարծէին. երէկ մենք հարուստներս, մեծ հոգսերու տակ էինք, սնանկանալու ուրուականը մղձաւանջի մը նման կը ճնչէր մեզ: Մեր մէջ անխուսափելիօրէն գոյութիւն ունեցող մրցումը, Դամոկլեան սուրի մը մնան միշտ մեր գլուխին վրայ էր: Մենք երէկ՝ ճիշտ շիւղի մը կը նմանէինք, նետուած ալիքներու փրփուրին մէջ, անկայմ, անդեկ եւ կամակատարօրէն կը զնայինք հոն՝ ուր որ յորձանքը մեզ կը տանէր:

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ. — (Բռուն ծափեր):

ՏԱՐԲԵՐԵԱՆ. — (Շար.) Հաւատացէք ընկերներ, որ երէկ մենք իսկ չէինք գիտեր թէ ո՞ւր պիտի հասնի մեր վախճանը, երբ անփոփոխ տնտեսական վիճակը օրական հազարաւորներ մեր շարքերէն ձեր շարքերը կը նետէր: Իսկ այսօր, այդ հոգսերէն բոլորովին ազատած, օրական միայն հինգ ժամ գործելով՝ անհոգ, ապահով կեանք մըն է որ կ'ապրինք: Ուրեմն ես ոչինչով դժգոհ չեմ այս կարգերէն, որուն համար ալ այս գաւաթը կը պարպեմ ԲԱՆԻՈՐՆԵՐՈՒ կենացը որ ընկերվարական այս կարգերը բերին, կեցցէ՛ ԲԱՆԻՈՐՈՒԹԻՒՆԸ: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ. — (Բռուն եւ երկարատեւ ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ. — Այժմ կարգը ընկերուհի Տիկ. Տարբերեանինն է: (Կը նստի):

ՏԻԿ. ՏԱՐԲ. — Բայց ընկեր. սեղանապետ, ես ի՞նչ պիտի խօսեմ, մարդս խօսեցաւ, աղջիկս պիտի խօսի, փե-

ասա պիտի խօսի, ալ ես ի՞նչ խօսիմ, թող անոնց ըսածը ըլլայ: (Կը նստի):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր, քահ քահ խրկուներ) Ո՛չ, բան մը պիտի ըսես:

ՏԻԿ. ՏԱՐԲ.— (Կրկին ոտքի ելլելով) Ուրեմն ես այս գաւաթը կը խմեմ Հայաստանի կենացը: Կեցցէ ՊՕԼՇԷՎԻԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն եւ երկարատեւ ծափեր) Կեցցէ՛ Հայաստանը, կեցցէ՛ Խորհրդային Հայաստանը:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Հիմա ալ կարգը ձերն է ընկ. ձան: (Կը նստի):

ՁԱՆ.— (Ոտքի ելլելով) Ընկերներ, կ'ուզեմ ճիշտը խոստովանիլ, որպէս զի մի գուցէ արժանի ըլլամ ձեզ իմ ընկերները կոչելու: Ամէն անգամ որ ընկեր Չաւէնի ներկայութեան կը գտնուիմ, հաւատացէք որ խոր ամօթի զգացում մըն է որ կը պատէ զիս, բայց ի՞նչ կարող էի ընել, այն ատեն ես զիմքը չէի կարող հասկնալ, այժմ միայն զգացի, որ ես միայն փճացած մը եմ եղեր, բայց ուրախ եմ որ վերջապէս ձեզ նման ընկերներու օգնութեամբ այժմ այն չեմ ինչ որ էի երէկ, ուրեմն ես այս գաւաթը կը խմեմ մաքուր ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ կենացը: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Կ'ուզենք ձեզ լսել ընկերուհի Սըրբուհի: (Կը նստի):

ՍՐԲՈՒՀԻ.— Ընկերներ, ես ինքս ամէնէն շատ բաներն ունիմ խօսելիք, բայց դժբախտաբար ՏԻԿ. Չաւէնի նման պերճախօս մը չեմ, այժմ ի՞նչ ըսեմ, ահա տասը տարուան առաջուան Պօսերս, ահա եւ ամուսինս, ազախինութենէ տանտիկինութիւն, ալ ի՞նչ կ'ուզէի, արդէն իմ ամբողջ երազս այդ էր, այժմ այդ ալ պսակուեր է, չնորհիւ ձեր կուսակցութեան, ուրեմն ես այս գաւաթը կը պարպեմ Բանորական ԿՈՒՍՍԿՑՈՒԹԵԱՆ կենացը: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր) Կեցցէ՛ կուսակցութիւնը:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Ընկեր Գեղամ, ձերն է կարգը: (Կը նստի):

ԳԵՂԱՄ.— Ընկերներ, ես ինձ թոյլ չեմ տար որ այս երեկոյ մեր յարգանքի մեծագոյն բաժինը չի տանք պրոլետարական յեղափոխութեան մեծ ուսովիրային՝ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՄԵԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Ծափեր):

ԳԵՂԱՄ.— (Շար.) Ընկերներ, մենք ի՞նչպէս կարող ենք մոռնալ մեր մեծ ուսուցիչին, որ առաջինը եղաւ իր գաւազներու կարմիր արիւնով ԿԱՐՄԻՐ ԴՐՕՇԸ պարպելու:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր):

ԳԵՂԱՄ.— (Շար.) Ընկերներ, մենք ի՞նչպէս կարող ենք մեծագոյն ակնածանքով եւ հիացումով մը չի նայիլ, մեր Ռուս ընկերներուն, որոնք ընկերվարութեան առաջին փորձերը կիրարկեցին նախ իրենց մեծ երկրին մէջ, ուրկէ յետոյ միայն աշխարհի միւս ազգերը, օգտուելով անոնց գնահատուած փորձերէն, իրենք եւս ատուելով անոնց գնահատուած փորձերէն, իրենք եւս առաջինը փորձեցին հետեւեցան: Մենք ի՞նչպէս վրախտանոնք օրինակին հետեւեցան: Մենք ի՞նչպէս Մոսկուային, պիտական մեծ զգացումներով չի նայինք Մոսկուային, ուրկէ մեր ընկերները վարեցին ՀԱՄԱՇԽԱՐ ՀԱՅԻՆ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՅԱՂԹԱԿԱՆ ՅԵՂԱՓՈՈՒԹԻԻՆԸ:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն եւ երկարատեւ ծափեր):

ԳԵՂԱՄ.— (Շար.) Ընկերներ, ես այս գաւաթը կը խմեմ պրոլետարական մեծագոյն Ռուսաստանի, բանորական մեծ յեղափոխութիւնը յառաջացնող մեր ընկերներու եւ անոնց կերտած ՍՕՎԻԷՏԱԿԱՆ ՄԵԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ կենացը: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— Ծափեր, կեցցէ՛ Ռուսաստանը, կեցցէ՛ ուսական յեղափոխութիւնը, կեցցէ՛ ուսովիրային Ռուսաստանը:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Ընկերներ, այժմ պիտի հրաւիրեմ մեր բոլորէն սիրուած, անցեալին մէջ մեր ժողովներուն

փայլը եղող ընկերուհի Սիրարբին, հրամեցէք ընկերուհի:

ՍԻՐԱՐԲԻ.— (Ոտքի ելլելով) Ընկերներ, ես այս իրեկոյ եւս կ'ուզէի լուել քան թէ խօսիլ, բայց որովհետեւ ոչ ոք բացատուութիւն չի կազմեց, ես ալ պարտաւորուած պէտք է քանի մը բան ըսեմ: Ընկերներ, ես չեմ կարող ըսել թէ ի՞նչ վիճակ կ'ունենայի, ի՞նչ եղած կ'ըլլայի, եթէ ընկերվարական կարգերը իմ առջեւ բացած չըլլային գիտութեան տաճարներու գոները, այսօր՝ շնորհիւ ընկերվարական կարգերու մեզ տուած հաւասար պատահութեան է որ ինձ նման միլիոնաւոր աղջիկներ գիտութեան իրենց ծարաւը կը յագեցնեն, ձրի գիտական տաճարներուն մէջ: Ընկերներ, հակառակ որ սեւէ ըմպելի գործածելու սովորութիւն չունիմ, բայց այս գաւաթը մինչեւ յատակը պիտի պարպեմ ԻՍԿԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ, ՀԱՒԱՍԱՐ ՊԱՏԵՀՈՒԹԵԱՆ եւ ԱԶՍՏՈՒԹԵԱՆ կենացը: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր) Կեցցէ իսկական ազատութիւնը:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Այժմ կարգը եկաւ, նախկին մեծահարուստ հակայեղափոխականներէն, ընկեր Պօղոսին, որ յեղափոխութեան օրերուն իր կաշին առած փախած ըլլալով՝ վերջերս նոր վերադարձած է, կարգը ձերն է ընկեր Պօղոս:

ՊՕՂՈՍ.— (Ոտքի կանգնելով) Ընկերներ, ճիշտ հիմա, հոս եղողներէն եւ ոչ մին, հոգեկան այն տանջանքներուն մէջ չէ, որքան ես: Ճիշտ է, ընկեր Կարապետը եւս նախկին հարուստ մըն է, բայց դէթ այն միտքարութիւնն ունի, որ փորձութեան վերջին օրերուն իր գաւակները զինքը ուղիղ առաջնորդած են: Իսկ ես, գժբախտաբար երկու ուղղութեամբ ալ շիկնելու պատճառներ ունիմ, նախ որ, որպէս հարուստ, յեղափոխութեան այդ օրերուն, փոխանակ միւս հարուստներուն նման կոռուլու եւ մեռնելու, ես աւելի վատ գործ մը ըրի՝ նապաստակի նման ամէն ինչ ձգելով եւ փախելով: Իսկ միւս

կողմէ, ի՞նչպէս չի կարմրիմ, երբ այսօր սեղանակից կ'ըլլամ ձեզի, երբ երէկ՝ ձենէ շատերուն հանդէպ գրտնուած եմ շատ այսպանելի դիրքի մը մէջ: Իսկ ճիշտ հիմա, զիս աւելի շիկնեցնող պարագան այն է որ դուք բոմա, զիս ընկեր կը կոչէք, ճիշտ հիմա չեմ գիտեր թէ մը, զիս ընկեր կը կոչէք, ճիշտ հիմա չեմ գիտեր թէ արդեօք վաղուան իմ գործերովս պիտի կրնամ վատահացնել ձեզ, որ իսկապէս արժանի եմ ձեզ ընկեր կոչուելու: Այն վեհանձն հոգին եւ անյիշաչարութիւնը, որ դուք ցուցադրեցիք ինձ հանդէպ, այս երեկոյ, այս հաւաքոյթին մէջ, ինձ այնպէս կը թուի որ դուք այդ մեծ հոգին ստացած էք ձեր աւելի մեծ եւ աշխուհացնող գաղափարներէն, որուն համար ալ ես այս գաւաթը պիտի խմեմ, ձեր այդ գաղափարներուն ծնունդ տուող, սակայն այժմ վախճանած, ընկերներ Քարլ Մարքսի, էնկէլսի եւ Լէնիններու կենացը: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր) Կեցցէ Մարքս, կեցցէ Լէնին:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Ոտքի ելլելով) Ընկերներ, այժմ պիտի հրաւիրեմ մեր բոլորին յարգանքին ու հիացումին արժանացած ընկերուհի Նուարդը՝ Տիկին Զաւէնը:

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն եւ երկարատեւ ծափեր):

ՆՈՒԱՐԳ.— Ընկերներ, ես այս գաւաթը կը խմեմ համաշխարհային համայն ՊՐՈԼԵՏԱՐՈՒԹԵԱՆ կենացը: (Կը խմէ եւ կը նստի):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր) Ո՛չ, ո՛չ, պիտի խօսիս:

ՆՈՒԱՐԳ.— (Ոտքի ելլելով) Բայց ընկերներ, ես իսկապէս չեմ գիտեր թէ իմ ո՞ր մէկ արժանիքիս համար ձեր այս խանդավառ ցոյցերուն կ'արժանանամ:

ԾԱՆՕԹ.— (Այս քառիկ յետագայ մասը գրուած է միայն կարդացուելու համար: Ներկայացման պարագային կարելի է զանց ոնել, եթէ կարելի չէ սովորիլ):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր):

ՆՈՒԱՐԳ.— Լաւ ուրեմն ընկերներ, թէեւ համա-



ամիսներէ ի վեր, մէկ կողմ շրջեցի երեսս, դուրս եկայ, տուն գնալու համար, խեղճի մը զարնուեցայ, ինկա խեղճ մարդը, շատ էր խմած ան, գինովցած աչքերով կարծես կ'ուզէր յանդիմանել զիս, ուղեցի վեր վերցնել, կտրուկ կերպով մերժեց զիս, «գնացէք Տիկին, գնացէք», ըսաւ, «թող որ ինկած մնամ, ես շատ խմեցի որ ցաւերս մոռնամ, բայց այդ ալ չէ կարելի, երբ ստամոքսս պարսպ է, թող որ հոս մնամ, որ ոստիկան մը գայ եւ զիս բանտ տանի, հոն գէթ կտոր մը հաց կուտան ուտելու»: Արցունքոտ աչքերով ճամբաս շարունակեցի, եւ ճամբուս վրայ դալուկ երեսներով, տարօրինակ հագուած աղջիկներու երամակ մը անցնող տղամարդոց քղանցքէն կը բռնէին, բան մը կ'ըսէին, յետոյ կը թողէին, եւ այսպէս շարունակ, հասկցայ եւ այդ, ափ մը չոր հացի համար ինքզինքնին ծախողներն էին, կարեկցութիւնս գրաւեցին, ի՞նչքան խեղճ էին: Մեր տան մօտ էի, ճիշտ փողոցին մէջ, մէկն էր երկնցած, մի քանի հատ ալ դուռն ի վեր կեցած, մօտեցայ իրենց, բժիշկ մըն ալ կար հոն, «անօթութիւնն է պատճառը, այս մարդը տասը օրէ ի վեր հաց չէ կերած», ըսաւ եւ մեկնեցաւ, շատ ուշ էր արդէն, նա մեռած էր վաղուց, եւ ես լալ սկսայ, մի քանի քայլ եւս եւ արդէն տունն էի:

Բայց կեցէք ընկերներ, դեռ չի լրացաւ պատկերը, ես չի կարողացայ քնել, թէեւ յագնած էի, մտածեցի քիչ մը, խորհեցայ որ այդ չէ ամբողջ կեանքը, այդ միայն կէսը ըլլալու է, կրկին դուրս եկայ, ու այս անգամ, մի ուրիշ ուղղութեամբ եւ չէի սխալած, փոխուեցաւ տեսարանը, ուրիշ գոյն ատաւ, բոլորովին տարբեր: Մեծ պանդոկի մը առջեւն եմ, խանդավառ ծափերը ու երաժշտութիւնը զիս կանդնեցուցին, ներսն եմ արդէն, ընդարձակ սրահ մը, հարիւրաւոր սեղաններով, լիքը ժողովուրդով, այրերը ճաղատ, կիները կիսամերկ, իսկ սեղաններուն վրայ, հաւ, գինի լեցուն, քիչ մը անդին սեւերու նուազախումբ մը, հոգեգմայլ երգեր կը նուագէր, իսկ սեղաններուն վրայ նստող այրեր, իրենց սէրն ու հիացումը կը յայտնէին,

դիմացնին կանանք, ծխախոտը բերաննին, «եթէ ըսած դինս վճարես, կարելի է ըլլայ», կ'ըսէին, հոս ամէն պատշաճութիւն մէկ կողմ էր դրուած, եւ ամէն սրբութիւն ոտնահարուած էր, այդ իմ տեղս չէր, եւ ես դուրս ելայ, բայց խուռն բաղմութիւն մը ճամբաս բռնած էր, հետաքրքրուեցայ, ըսին որ «գործադուլ մըն է», ներս մըտնեմ ըսի, եւ օֆիսն եմ արդէն, հաստափոր մը նստած է, ուրիշ մըն ալ անոր կողքին, ի՞նչ պիտի ընենք» կ'ըսէր, վերջինը գործակալն էր, առաջինը գործատէրը, որ սիկար մը բերնին, ոտքի կանգնեցաւ, «ոչինչ յիմար, ոչինչ պիտի ընենք» ըսաւ, «կը խորհիս որ փէյերը չի կրճատեմ, թող դուրսը մնան, մէկ երկու օր յետոյ իրենք իսկ կուգան, ոտքս կը համբուրեն եւ դորձ կը խնդրեն, հիմա հասկցա՞ր թէ ինչ պիտի ընենք» ըսաւ եւ նստաւ իր ինքնաշարժը եւ զայն վարողին «Լա Սալը» ըսաւ: Ապուշ կտրեցայ, հոգը իսկ չէր իրեն, նա կը գնար իր հաճոյքի ետեւէն: Պէտք մը զիս ստիպեց որ տուն մը մտնեմ, ու ներսն եմ արդէն, իսկ տան տիկինը թագոհուց մը նման հագուած ու սքուած, երկու փոքրիկներ, մաքուր եւ կայտառ, փառաւոր սեղան մը, ամէն բան լեցուած, բայց ուտող չկար, բոլորն ալ պատրաստ քաւարն գնալու, չի խանդարեմ ըսի ու դուրս մեկնեցայ: Ծտկեցի ճամբաս, բայց յանկարծ կանգ առի, նուագի ձայն մը զիս կեցուցած էր, ճաշարան մըն էր, ինքս ալ անօթի, ներս մըտնեմ ըսի եւ մի քիչ ճաշեմ, երաժշտութիւնը փոխուեցաւ պարի, եւ ճաշողները, բոլորը զոյգ, պարել սկսան, դադրեցաւ պարը, սեղան մը դրուեցաւ, սրահին մէջտեղը եւ սեղանին վրայ մերկ պարուհի մը, դրամին համար, իր շնորհները ցուցադրեց հոն, որուն յաջորդեց մի այլ ուրիշ, յետոյ մեներդ մը, յետոյ նուագողներ, հոս ճաշարիչը, յետոյ մեներդ մը, յետոյ նուագողներ, հոս ճաշարիչը, եւ ես դուրս ելայ: Գնացքիս վրայ, ուրիշ տեղ մըն ալ տեսայ, դուրսէն դիտեցի որ հազարաւոր զոյգեր, իրարու պլլուած կը պարէին, անհոգ ու անխորհուրդ: Ատկէ ալ հեռացայ, մեծ շէնքի մը մէջ եմ, բոլորն ալ օֆիսներ, նախ մտայ մէկը, որ բժիշկի մըն էր, որ կա-

կածոտ առողջ մը կը հիւանդացնէր: Դուրս ելայ ատկէ, միւսն ալ օրէնսագէտ մըն էր, եւ սակարկութեան մէջ, «50 հազար կուտաս, ամէն ինչ կ'ըլլայ, օրէնքը մենք ենք, դու հիշ մի վախնար: Եւ երբ դուրս ելայ ճիշտ դիմացս էր մեծ սակարանը, հոս ալ մտնեմ ըսի, սեւ մեծ տախտակ մը, տասնեակ մը գրողներ թիւեր մը գրեցին, միլիոններ խաղցան, բոլորն ալ շահեցան, քովս ծեր մը կար, հարցնեմ ըսի թէ ո՞վ է տարուողը, գրուելը շարժեց, «Ո՞վ պիտի ըլլայ» ըսաւ, չունեցողները, քիչ ունեցողները, խեղճ բանւորները: Սիքի հօլմ եմ, քէֆս վճարելու համար ճիշտ իմ առջեւ հաստափոր մը կեցած, 100 հազարնոց չէք մը երկարեց, խնդրեմ պարոն, ըսի, շատ կը փափաքեմ, կ'ուզեմ որ գետնամ թէ այդքան մեծ քէֆս մը դո՞ւք կը վճարէք, զարմացաւ մարդը եւ ծիծաղեցաւ, «ես, ըսաւ, տիկին, գործատէր մըն եմ, ծխախոտի մեծ գործարան մը ունիմ, իսկ քէֆսս միայն 100,000 է», բայց շատ չէ՞ ըսի, «ոչ տիկին ոչ, ես չեմ վճարողը, ծխողը թող խորհի», ըսաւ եւ գնաց եւ ես մեքենաբար ձեռքս ճակտիս տարի եւ մտածեցի որ բոլոր հարուստներուն մեծ մեծ քէֆսերը, ծխողին նման, խեղճերն են վճարողը: Աչքիս հանդիպեցաւ մեծ տեղական թերթ մը, անդիտակցաբար ինքս ալ ներս մտայ, նախ դերասանուհի մը չէք մը եւ նկարը տուաւ եւ գնաց, յետոյ բժիշկ մը սուտ փաթէնք ըրած զեղի քէֆլամ մը չէքով միասին տուաւ եւ գնաց, իսկ անկէ յետոյ կառավարչի թեկնածուն չէք մը միայն տուաւ, «մնացեալը դուք զիտէք» ըսաւ եւ մեկնեցաւ, պժղալս եկաւ, եւ այդ ամէնը հանրային օգտի անունովն էր: Այլ յոգնած էի, տան ճամբան առի, մեր թաղին մօտը ճիշտ եկեղեցւոյ մօտ եմ, օրկրնի մը ձայնը զիս ներս քաշեց, ես ալ յոգնած նստիլ կ'ուզէի, երգը զաղբեցաւ, երէցը ելաւ Աւետարանը ձեռին, աչքերը զէպի երկինք, «օրհնեալ ժողովուրդ» ըսաւ, այս աշխարհի կեանքը ունայնութիւն է, մենք բոլորս ալ հոս մահկանացու ենք, յաւիտեանականը հոն վերն է, Տիրոջը քովը, իսկ հոս աշխարհի վրայ, հնազանդ ե-

ղէք ձեր մեծերուն, եւ մի տրտնջաք ձեր վիճակին համար, օրէնքի կողքին ամուր կանգնեցէք, զի Տիրոջը փոխանորդը, հոս աշխարհի վրայ, կամ թաղաւորն է կամ կառավարիչը: Շատ բան անցաւ մտքէս, որովհետեւ կեղծ էին, չի համարձակեցայ, ոչինչ չըսի, բայց հոգւոյս խորէն դուրս թռաւ յանկարծ. «Լոնցէք դուք Փարիսեցիներ, ալ լոնցէք դուք»: Քիչ յետոյ արդէն կրկին տունն էի, յոգալ լոնցէք դուք»: Քիչ յետոյ արդէն լոնցէք դուք, խոր մտածումնա՞մ եւ ուժասպառ, սաստիկ ընկճուած, խոր մտածումներու էի մտնուած ու կը խորհէի թէ արդեօք ՆՈՐ կեանքը կրկին ե՞տ գնաց: Ճիշտ այդ լոնցէն ականջիս հասաւ «Նուարդ» անունս, սթափեցայ, տեսայ որ հոս եմ, ու տեսած պատկերս հիմնի պատկերն էր, որ գնաց, մեռաւ անդառնալիօրէն: Ընկերներ, Հինն էր իմ տեսած պատկերը, Հինն էր երկու կողմերով, բայց նա մեռեր է արդէն, մի ՆՈՐն է ծներ, եւ սա հինին պէս երկու կողմ է շունի, այլ միայն մէկ կողմ, այժմ մին չապրիր եւ միւսը չմեռնիր, այժմ ամէն ոք հաւասար կ'ապրի եւ խաղաղ ու երջանիկ կեանքը կը վայելէ: Այս ընկերներ, Հինն մեռեր է եւ ՆՈՐն է ծներ, անկցեր է Հինն, կեցցէ՛ ՆՈՐը:

(Կը նստի):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն եւ խանդավառ ծափեր, երկարօրէն կը շարունակուին, կեցցէ նորը, անկցի հիւնը... կեցցէ նորը... ծափերը կը կրկնուին):

ՆՈՒԱՐԴ.— (Անգամ մը եւս ոտքի կ'ելլէ եւ կը նրստի):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն կերպով կը ծափեն, յետոյ խոր լուսիւն մը, բոլորին ուշադրութիւնը կը կեդրոնանայ Զաւէնի վրայ):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Ոտքի կ'ելլէ):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Բայց զեւ ես ոեւէ մին չի հրաւիրեցի:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն եւ երկարատեւ ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Այժմ պիտի հրաւիրեմ մեր...

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բուռն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Բայց ընկերներ, գէթ թոյլ տուէք պատշաճ կերպով հրաւիրեմ:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Կը ծափեն անընդհատ):

ԶԱԻԿՆ.— (Ոտքի կանգնելով, ձեռքով լռելու նշան կ'ընէ):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Խոր լռութիւն):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Կը նստի):

ԶԱԻԿՆ.— Ընկերներ, (իր գաւաթը վերցնելով եւ յետոյ կրկին վար դնելով) ես ինքս ալ, հետեւելով ձեր օրինակին, այս գաւաթը պիտի խմեմ բանի մը կենացը, բայց գրեթէ բոլոր մեծ արժէք ներկայացնող անձերու եւ գործերու մասին գաւաթներ պարպուեցան այստեղ, սակայն անոնցմէ էն մեծը մոռացուեցաւ, թէ եւ կը վարանիմ այդ ըսելու, որովհետեւ ո՞վ գիտէ մի գուցէ կանխամտածութեամբ մը զայն ինծի թողնելու պատիւը ըրիք, եթէ այդպէս է ընկերներ, ես խորապէս շնորհակալ եմ, ուրեմն ընկերներ, ես այս գաւաթը կը պարպեմ երէկուան մեծ ՀԱՄՐԻՆ, եւ այսօրուան իր շահերուն գիտակցած մեծ ՄԱՍՍԱՅԻՆ կենացը: (Կը պարպէ իր գաւաթը):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր):

ԶԱԻԿՆ.— (Շար.) Ընկերներ, մենք արդէն իսկ շատ ժամանակ տուինք մեր ճաշասեղանին եւ ճառերուն, այնպէս որ այժմ ես կ'ուզեմ միայն քանի մը խօսքերով փակել երկոյթի այս մասը, միւս մասին անցնելու համար:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— Ո՛հ, ո՛հ, դուք պէտք է խօսիք, եւ երկար խօսիք: (Բռուն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Ոտքի կանգնելով) Ընկեր Զաւէն, որքան երկար խօսիք այնքան լաւ, մենք մինչեւ լոյս հոսենք, իսկ բոլորին բաղձանքն է ձեզ լսել երկարօրէն: (Խընդալով) եւ ինչպէս գիտէք, ձեր նիւթն ալ պիտի ըլլայ երէկուան եւ այսօրուան բաղդատականը:

ԶԱԻԿՆ.— (Շար.) Բայց ընկեր սեղանապետ, մենք դեռ երկար ճանապարհ մը կտրած չենք, այնպէս որ հոս

եղողներդ բոլորդ ալ կը յիշէք ԵՐԷԿԸ եւ կ'ապրիք ԱՅՍՕՐԸ:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Բայց լաւ ընկ. Զաւէն, դուք այդ ըրէք վաղուան սերունդին համար, եւ վստահ եղէք որ մենք զայն կը հաղորդենք անոնց: (Կը նստի):

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ.— (Բռուն ծափեր, հաւանութեան ցոյցեր):

ԶԱԻԿՆ.— (Շար.) Լաւ ուրեմն ընկերներ, շատ ճիշտ է որ մենք ԵՐԷԿԸՆ շատ դասեր ունինք սորվելիք, եւ աւելին՝ այդ ԵՐԷԿԸՆ՝ որը մենք այնքան ատեցինք, որուն դէմ մահու եւ կենաց կռիւ մղեցինք, այո նոյն այդ մեր ատած, մեր կուռած ԵՐԷԿԸՆ էր որ ԱՅՍՕՐԸ ծնաւ, պէտք է գիտնալ ընկերներ, ԵՐԷԿԸՆ էր որ ԱՅՍՕՐԸ ծնաւ, այնպէս էր, մի քանի դար առաջ, նա ինքն ալ մի ԱՅՍՕՐ էր, մի քանի դար առաջ, նա ինքն ալ մի ԵՐԷԿԸՆ էր, ծիշտ այնպէս, ինչպէս ԱՅՍՕՐԸ ծնեցաւ իրմէ, ԵՐԷԿԸՆ մեր ՄԱՅՐՆ էր ուրեմն, եւ ուրեմն թոյլ տուէք ինձ ընկերներ, որ ես այնքան ալ յախուռն չըլլամ անոր հանդէպ, երբ նա մեր ՄԱՅՐՆ է եղեր եւ մանաւանդ երբ նա ՄԵՌՆԵՐ է, եւ ի՞նչ կասկած, էր մի քանի դար յետոյ ԱՅՍՕՐՆ ալ ԵՐԷԿԸ մը կ'ըլլայ, ծնունդ տալով նոր ԱՅՍՕՐԻ մը:

ՅԱԿՈՒՅ.— (Յակոբ եւ Մանուկեան իրարու երես կը նային):

ԶԱԻԿՆ.— (Շար.) Ընկերներ, ի՞նչ հարկ մեռելներու մասին խօսիլ, երբ նա արդէն մեռած է, եւ մենք թաղեցինք զայն:

ՅԱԿՈՒՅ.— (Ինքնամոռացութեամբ, նստած տեղէն) Այո, մեռաւ ընկեր Զաւէն, բայց մինչեւ որ մեռուցինք մեր ալ հոգին հոս (կոկորդը ցոյց տալով) հոս հասաւ, չէ՞:

ԶԱԻԿՆ.— (Շար.) Թող ողջերը՝ մեռելներու մասին չիչ խօսին ընկերներ, որովհետեւ հասարակական կարգերն ալ, անհատներու նման, կը ՄԵՆՆԱՆ եւ անխուսափելիօրէն կը ՄԵՌՆԻՆ, ուրեմն ընկերներ, երբ որ մի շատ բնական կեանքի բրտեսն է: Իսկ մենք ող-

Ջերս գործ ունինք մեր առջև, մի մեծ գործ, մի դժուարին գործ, որուն պէտք է լծուինք, առանց այս ու այն կողմը, առանց ետեւնիս նայելու, ահա մեր ընկիւթը:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ. — (Բուռն ծափեր):

ԶԱԽԷՆ. — (Շար.) Ընկերներ, դեռ միայն ճիշտ տարելիցն է ՆՈՐ օրերուն, ուրեմն նա դեռ եւս ԵՐԵՎԱՆ է, շատ փոքր, ուրեմն մեզ կը մնայ հողալ գայն, խնամել գայն, պաշտպանել գայն, մինչև որ մեծանայ, ու այդ գայնքան ալ դիրքին գործ մը չէ:

Ընկերուհիներ, ձեզմէ շատերը մայր եղած էք, իսկ դուք ընկերներ՝ հայր: Ուրեմն դուք ձեր փորձառութեամբ իսկ գիտէք թէ ո՞րքան դժուար է նոյն իսկ մարդ երեսայ մը մեծացնելը, նա անոյժ է, նա փափուկ է, փոքր դիպուած մը գայն յաւէտ կը բաժանէ ձեզմէ: Երեւոյթը նոյնն է նաև հասարակական կարգերու նկատմամբ, այսօր ընկերաբուծիւնը իր երեսայ օրերին մէջ է, ուրեմն եթէ մի քիչ անզգոյշ ըլլանք, եթէ մի քիչ անհոգ դառնանք, եւ տհա կը մեռնի մանուկը — թէև վերջապէս ծնելու համար: Միթէ այսպէս չեղա՞ւ Ֆրանսական «մեծ» կոչուող ազգայնական յեղափոխութիւնը, չէ՞ որ հոն ալ, հանրապետութիւնն ու կայսերականութիւնը իրարու յաջորդեցին մի քանի անգամներ, ուրեմն ընկերներ, մենք բոլորս ալ անքուն պահակները պիտի ըլլանք նորածին մանուկին, մինչև որ նա մեծանայ, մինչև որ պատանեկութեան հասնի, ահա մեր առաջին պարտականութիւնը, ահա մեր ընկիւթը:

ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ. — (Բուռն ծափեր):

ԶԱԽԷՆ. — (Շար.) Ընկերներ, դուք կը բաղձաք, որ ես հոս բաղձատականն ընեմ ԵՐԷԿԻՆ եւ ԱՅՍՕՐՈՒԱՆ, բայց ես բաղձատակիք եզրեր չեմ տեսներ անոնց միջև, ԵՐԷԿԻՆ եւ ԱՅՍՕՐԸ նմանութեան եզրեր չունին, որ ես կարենամ բաղձատակ... բայց կը փորձեմ:

Ընկերներ, միթէ դուք չէ՞ք յիշեր երէկուան խեղճութիւնները, թշուառութիւնները, տառապանքը, նախճիրները, ջարդերը, պատերազմները եւ ահաւոր կոիւ-

ները, որոնք բոլորն ալ տեղի կ'ունենային չահի եւ դրամի համար: Միթէ չէ՞ք յիշեր այն ահուկի սպանդները որ կը սարքուէին միայն ափ մը հողի եւ քիչ մը դրամի համար: Միթէ չէ՞ք յիշեր ազգային սահմաններով իրարմէ անջատուած ցեղերու իրարու հանդէպ ունեցած ոխն ու ատելութիւնը, եւ մղած սոսկալի կոիւնները:

Միթէ չէ՞ք յիշեր երէկուան դրամին ամենագորութիւնը, աւելի ճիշտը Աստուածութիւնը, որուն համար, հայրը իր գաւակը կ'սպաննէր, գաւակը իր մայրը, քոյրը իր եղբայրը:

Միթէ չէ՞ք յիշեր, երէկուան կրօնին ու նախապաշարումներուն ստեղծած չարիքները, կապելով մարդուն ազատ մտածելու կարողութիւնը, ստեղծելով իսկայ կրօնական պատերազմներ ու խաչակրութիւններ: Միթէ չէ՞ք յիշեր երէկուան բանւորին քաշած զրկանքները, ապրած թշուառութիւնը, տանջուած վիճակը:

Միթէ չէ՞ք յիշեր, երէկուան հաստափոր հարուստներուն անհոգ, անաշխատանք գեղիս ու շոայլ վայելած կեանքը, ապրած երջանկութիւնը:

Միթէ դուք չէ՞ք յիշեր, դրամին եւ սոսկ դրամին համար եղած աւագակութիւնները, մարդասպանութիւնները, կողոպուտները: Միթէ դուք մոռացա՞ք փողոցները թափառական եւ կոտոր մը հացի համար ինքզինքնին ծախող թշուառները, որոնք լաւ մայրեր կրնային ըլլալ:

Եւ միթէ մոռացա՞ք ընկերներ, երէկուան մեր՝ բանւորներու սիճակը, երբ մենք կ'արտադրէինք կեանքի բոլոր պէտքերը, իսկ վայելողները հաստափորներն էին:

Ընկերներ, ասոնց շարքը կարելի է շատ երկարել, բայց ես չեմ ուզեր ուրիշներ թուել, որովհետեւ դուք բոլորդ ալ գիտէք այդ ամէնը, ես հոս կը փակեմ ԵՐԷԿԻՆ եւ կ'անցնիմ ԱՅՍՕՐՈՒԱՆ:

Ընկերներ, թէև ԱՅՍՕՐԸ ալ ձեզ ծանօթ է, բայց ես կը պարտաւորուիմ մի քանի բան բսելու: Ընկերներ, նախ դուք գիտէք որ Սօցիալիզմի թագաւորութեան այս օրերուն, բովանդակ մարդկութիւնը դարձեր է աշխատա-

ւոր, վերացեր է աշխատանքի դառնութիւնը, որովհետեւ վերացեր են ծանր աշխատանքները, եւ երկար ժամերը, երբ այժմ մարդիկ միայն չորս ժամ կ'աշխատին: Աշխատութիւնը դարձեր է ազատ, ամէն ոք կարող է աշխատիլ, մինչ հին բէժիմի օրով հազարաւորներ անգործ կը թափառէին: Այժմ աշխատողը միայն իրաւունք ունի ապրելու, չաշխատողը չէ ալ կարող ուտել: Ջնջուեր է սեփականատիրութիւնը, սակայն ոչ ոք ալ սեփականազրկուած չէ, չէ՞ որ ամէն ինչ հանրային սեփականութիւն է դարձեր, եւ ամէն ոք ալ հանրութեան մէկ անդամն է:

Հին կարգերու հետ միասին, չքացեր են աւագակութիւնները, որովհետեւ գողնալու կարիք չէ մնացեր: Վերացեր են մարդասպանութիւնները, որովհետեւ մարդիկ աւելի կատարելութեան հասեր են: Վերացեր է զգուելի կաշառակերութիւնը, որովհետեւ վերացեր է դրամական արժէքի նախկին ձեւը: Վերացեր են ահաւոր սրտերազմները, որովհետեւ վերացեր է անոր սրտածառ դարձող դրամն ու շահը, շուկան ու կողոպուտը: Վերացեր են ազգամիջեան կոիւնները, որովհետեւ վերացեր են ազգամիջեան սահմանները: Վերացեր են անհատական մըրցումներն ու կոիւնները, որովհետեւ վերացեր է անոր պատճառ դարձող դրամը: Վերացեր է երէկուան սուտ ու շինծու կրօնը, ու անոր տեղ իր գեղիքի ճասեր է մարդկային բարոյական հասկացողութիւնը: Եւ ես ընկերներ, մի քիչ առաջ գնալով կ'ըսեմ, որ վերացեր է նաեւ ինքը Աստուածը, իր դժոխքով ու արքայութեամբ, իր բոլոր թագաւորութիւնով, որովհետեւ մենք՝ այդ երազուած թագաւորութիւնը հոս, այս աշխարհի վրայ հիմնեցինք: Վերացեր են բոլոր թագաւորութիւնները, որովհետեւ այժմ միայն աշխատանքի թագաւորութիւնն է տիրապետողը: Եւ ուր մարդիկ կ'աշխատին իրենց ուժին չափով եւ կ'ստանան իրենց կարիքին չափով: Եւ այսպէս ընկերներ, վերացեր են հին կարգերը, ծներ են նոր կարգերը: Մեռեր է մայրը, բայց կեցցէ ՆՈՐԱԾԻՆԸ: (Կը նստի):

ՀԱՆԳԻՒՍԱԿԱՆՔ.— (Բուռն ծափեր... ծափերը կը կրկնուին, երկարատեւ ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Ոտքի կանգնելով) Ընկերներ, դուք բոլորդ ալ ձեր նախասիրած անձերու եւ գործերու կենացը գաւաթներ պարպեցիք, ես կը հաւատամ որ ես ինքս լա այդ իրաւունքը ունիմ, ես զրկուած չեմ սեղանապետ ըլլալովս: Ուրեմն այժմ ալ կարգը իմս է:

ՀԱՆԳԻՒՍԱԿԱՆՔ.— (Բուռն ծափեր):

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— Ընկերներ, ես նախապէս ալ յայտնեցի որ այս երեկոյթը սարքուած է ի պատիւ Տէր եւ Տիկին Չաւէնի, իրենց փոքրիկ Աւետիսի Չրդ տարելիցին առթիւ:

Շատ ճիշտ է որ ընկերը եւ ընկերուհին անձնապէս արժանացան մեր բոլորին յարգանքին, հիացումին եւ սիրոյն: Բայց իսկութեան մէջ, մենք այս երեկոյ, հոս այս փոքր սրահին մէջ, ծանօթներու այս փոքր շրջանակով տօնեցինք աւելի մեծ, աւելի վսեմ տօն մը, քան փոքրիկի մը ծնունդը:

Այո, մենք սիրեցինք ընկեր Չաւէնը, ճիշտ անոր համար, որ նա ինքն աւելի մեծ սիրով մը սիրեց այն գաղափարները, որ մերն են միանգամայն: Նա մեր բոլորէն աւելի խոր կերպով սիրեց իր եւ մեր գաղափարը, չէ ստորադասելով զայն ուրիշ բանի, ուրեմն ընկերներ, այս երեկոյ մենք տօնեցինք հոս մեր եւ ընկ. Չաւէնի գաղափարի ՍԻՐՈՅ ՅԱՂԹԱՆԱԿԸ:

Մենք սիրեցինք նաեւ ընկերուհի Նուարդը, բայց այդ՝ ոչ անոր համար, որ նա սիրուհին էր մեր սիրած ընկերոջ, ընդհակառակը, մենք սիրեցինք զայն չէնց այն օրէն, երբ նա իր սեռային սիրոյն միացուց նաև գաղափարի սէրը, մեր գաղափարին սէրը եւ այդ՝ այնքան զմայլելի անձնութեամբ մը:

Ուրեմն ընկերներ, այս երեկոյ մենք հոս խանդավառ կերպով տօնեցինք ՅԱՂԹԱՆԱԿԸ ԳԱՂԱՓԱՐԻ ՍԻՐՈՅԸ, ՅԱՂԹԱՆԱԿԸ մեր ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐԻՆ, որուն համար ալ

ընկերներ, ևս կ'առաջարկեմ որ մեր այս վերջին գաւաթ-  
ները պարպենք ՅԱՂԹԱՆԱԿԻՆ կենացը: (Կը խմէ):

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Ոտքի վրայ խմելէ յետոյ բուռն  
ծափեր) Յաղթանակին կենացը, կեցցէ յաղթանակը:

ՄԱՆՈՒԿԵԱՆ.— (Ոտքի ելլելով) Ընկերներ, մեր և-  
րեկոյթի առաջին մասը լրացած ըլլալով, այժմ պիտի  
անցնինք երկրորդ մասին, հիմա պիտի սկսինք պարելու:

ՀԱՆԳԻՍԱԿԱՆՔ.— (Բոլորն ալ ոտքի կ'ելլեն, սեղա-  
նը մէկ կողմ կը քաշուի, կը նուագուի պարի եղանակ մը,  
նուագախումբ, դաշնամուր եւ կամ ֆոնօկրաֆով մը, որը  
որ կարելի է):

ՊԱՐՈՂՆԵՐ.— (Տիկ. Նմանեան Պրն. Տարբերեանի  
հետ: Պրն. Նմանեան Տիկ. Տարբերեանի հետ: Սրբուհի  
Գեղամի հետ: Նագենի Ճանի հետ: Սիրարբի Զաւէնի հետ:  
Ընկերներ Յակոբ եւ Մանուկեան ալ իրարու հետ: Իսկ  
Նուարդ Պոզուսի հետ: Երկու վայրկեան յետոյ պարի ե-  
ղանակը կը դադրի, ամէն գոյգ իր եղած տեղը կ'սպասէ  
նոր եղանակի մը):

ԶԱԻԷՆ.— (Իր գլխարկը սանելով) Ընկերներ, ևս  
պարտաւորուած մի քիչ կանուխ պիտի մեկնիմ: Բայց իմ  
մեկնիլը երբեք արգելք մը չէ ձեր ուրախութիւնները շա-  
րունակելուն, մանաւանդ երբ Տիկին Զաւէն արդէն իսկ  
ձեզ հետ է: Կը ցաւիմ որ մինչեւ վերջը չի կարողացայ  
մնալ, որովհետեւ մի աւելի կարեւոր գործ գիտիպէ  
մեկնիլ: Ընկերներ, ձեզ ծանօթ է որ վաղը առաւօտ իսկ,  
կը բացուի համայն Ամերիկայի Սօվիէթական Յրդ հա-  
մագուրը, ուր հսկայ աշխատութիւններ կան կատարուե-  
լիք: Այժմ ևս կը գնամ այդ աշխատութիւններուն մի  
փոքր մասը իմ վրայ վերցնելու:

Թողնելով Տիկ. Նուարդի որ աւելի պատշաճօրէն մեր  
երկուքին շնորհակալութիւնները յայտնէ ձեզ, այն բո-  
լորին համար որոնցմով մեծապէս պատուեցիք մեզ այս  
երեկոյ, ևս ի սրտէ բոլորիդ գիշեր բարի մաղթելով կը  
մեկնիմ: (Կը մեկնի):

ՊԱՐՈՂՆԵՐ.— Կեցցէ ՀԱՄԱՅՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԵ-

ՅԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ, Կեցցէն ՍՕՎԻԵՏՆԵՐԸ:

(Կրկին պարի եղանակ մը կը նուագուի, այս անգամ Սի-  
րարբի կը պարէ Մանուկեանի հետ, իսկ ընկ. Յակոբ  
կ'սպասէ դրան մօտ, երկու վայրկեան յետոյ վարագոյրը  
կ'իջնայ եւ կը ծածկէ պարողները):

(Վարագոյր)



(ՎԵՐՁ)

Կուսակրօն - bachelor

**ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ**


«Յաղթանակ»ը ներկայացնողներու ուշադրութեան

Ա.— Տրաման կարնեցնելու համար, կարելի է գանց առնել միայն Ա. Արարուածի հրապարակային ժողովին մէջ տրուած հարց-պատասխանները եւ Դ. Արարուածի մէջ Նուարդի բաժականառին վերջին մասը:

Բ.— Իսկ երկարացնելու համար, կարելի է աւելցնել միայն Դ. Արարուածի մէջ նախ քան բաժականառերը, արտասանութիւն, սրախօսութիւն, մեներգ, պար նուագ, եւ այլն:

Գ.— «Յաղթանակ»ին հեղինակը իրեն կը վերապահէ հեղինակի իրաւունքը մինչեւ տասը տարի, որուն պէտք է դիմել ներկայացնելու համար:

Մ. Ա. Զ.



ՀՀ Ազգային գրադարան



NL0341917

40367